# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

**Հեռակա ուսուցում 1519 թողարկում**

**Կառավարման ամբիոն**

## ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

# Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս Ա Կ Ա Ն  Թ Ե Զ

«Հանրային կառավարում» մասնագիտությամբ հանրային կառավարման մագիստրոսի որակավորման աստիճան հայցելու համար


Մագիստրանտ՝ Ազարյան Դավիթ Սերգեյի

Ղեկավար՝ Ասլանյան Գագիկ Սերգեյի

տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ամբիոնի վարիչ՝ Խաչատրյան Վիլեն Վիկտորի

տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ


**Երևան 2018**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ* ........ 3

*ԳԼՈՒԽ 1. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ* ........ 6

*1.1 Կայուն զարգացման հասկացությունը և առանձնահատկությունները* ........ 6

*1.2.Կայուն զարգացման եռմիասնական կոնցեպցիայի էությունը և բաղադրիչները* ........ 10

*1.2.1. Տնտեսական բաղկացուցիչ* ........ 17

*1.2.2. Սոցիալական բաղկացուցիչ* ........ 19

*1.2.3. Էկոլոգիական բաղկացուցիչ* ........ 20

*1.3. Սոցիալ-տնտեսական և բնապահպանական համակարգերի կայուն զարգացման միջազգային փորձը* ........ 27

*ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ* ........ 38

*2.1 ՀՀ կայուն զարգացման նախադրյալները և հիմնախնդիրները* ........ 38

*2.2 ՀՀ կայուն զարգացման ծրագիրը և նպատակները* ........ 56

*ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ* ........ 65

*3.1. Կայուն զարգացման ծրագրի իրականացման հիմնական չափորոշիչները և արդյունքները ՀՀ-ում* ........ 65

*3.2. ՀՀ կայուն զարգացման բարելավման հիմնական ուղղությունները* ........ 79

*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ* ........ 112

*ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ* ........ 114

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից պայմաններում, երբ տարածաշրջանային և գլոբալ սպառնալիքները կասկածի տակ են դնում մարդկության շարունակական գոյությունը, նրա կայուն զարգացման պայմանների ապահովման խնդիրը հատկապես արդիական է դառնում: Կյանքի բոլոր կարևոր դերակատարների կողմից հստակ պատկերացում կազմելու բացակայությունը հանգեցնում է մարդկության ներդաշնակ զարգացմանը բավարարելու համար անհրաժեշտ և ժամանակին գործողությունների անհնարինությանը:

Չնայած Հայաստանի Հանրապետության զարգացման վերաբերյալ ուսումնասիրություններին և ՀՀ քաղաքականությանն առնչվող բազմաթիվ մոտեցումներին, դեռևս ՀՀ կայուն զարգացման տեսական և գործնական կիրառման շատ հարցեր քննարկման փուլում են, առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ:

Գիտական հրապարկումներում թերևս բացակայում է սոցիալ-տնտեսական համակարգի կայուն զարգացման հասկացության վերաբերյալ միասնական ընդհանուր տեսակետը, սահմանված չեն սոցիալ-տնտեսական համակարգերի կայունության չափանիշները և նրա գնահատման մեթոդաբանությունը, բացահայտված չեն կայուն զարգացման առանձնահատկությունները:

Այս թեզը փորձում է քննարկել կայուն զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, հաշվի առնելով տնտեսական աճը, սոցիալական զարգացումը և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Վերոնշյալ խնդիրների ուսումնասիրմանն է նվիրված սույն աշխատանքը, ինչով և հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Սույն հետազոտության նպատակն է վեր հանել ՀՀ կայուն զարգացման հիմնախնդիրները, ներկայացնել առաջարկություններ բարելավման նպատակով, որի իրագործման համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

- հստակեցնել «կայուն զարգացման» հասկացությունը և արտացոլել նրա առանձնահատկությունները,
- ներկայացնել կայուն զարգացման եռմիասնական կոնցեպցիան իր բաղադրիչներով,
- ուսումնասիրել սոցիալ-տնտեսական և բնապահպանական համակարգերի կայուն զարգացման միջազգային փորձը,
- ներկայացնել ՀՀ կայուն զարգացման ծրագիրը իր նպատակներով և նախադրյալներով,
- ուսումնասիրել և բացահայտել ներկայացնել ՀՀ կայուն զարգացման հիմնախնդիրների բարելավման հիմնական ուղղությունները:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը ՀՀ կայուն զարգացման ծրագրի կազմակերպումն ու մատուցումն է, իսկ հետազոտության առարկան՝ ՀՀ կայուն զարգացման կազմակերպման ու մատուցման արդյունավետության բարելավման հիմնախնդիրներն են:

**Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք** են հանդիսացել հայրենական և արտասահմանյան գիտնականների ու մասնագետների՝ կայուն զարգացման, մասնավորապես, նրա հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրությունները, իսկ որպես **տեղեկատվական հիմք** ծառայել են ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների, Բնապահպանության, Գյուղատնտեսության և Տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված համապատասխան վիճակագրական և փաստացի տվյալները, հետազոտության խնդիրներին առնչվող ՀՀ օրենքներն ու այլ իրավական ակտերը:

**Մագիստրոսական թեզի կառուցվածքը և ծավալը***:* Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեքգլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության

ցանկից: I գլուխը վերնագրված է ***«Գլուխ 1. Կայուն զարգացման տեսական-մեթոդաբանական հիմքերը»***, որտեղ ներկայացված են կայուն զարգացման հասկացությունը և առանձնահատկությունները, թե ինչ է իրենից ներկայացնում կայուն զարգացման եռամիասնական կոնցեպցիան, ինչպես նաև ներկայացված է սոցիալ-տնտեսական և բնապահպանական համակարգերի կայուն զարգացման միջազգային փորձը: II գլխի վերնագիրն է ***«Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման ծրագիրը եվ հիմնական նախադրյալները»***: Այս գլխում ուսումնասիրված է ՀՀ կայուն զարգացման ծրագիրը, նրա նպատակները, ինչպես նաև լուսաբանվել են ծրագրի հիմնական նախադրյալները: III գլխում՝ ***«ՀՀ կայուն զարգացման խնդիրները եվ դրանց բարելավման հիմնական ուղղությունները»***, ներկայացված են Կայուն զարգացման ծրագրի իրականացման հիմնական չափորոշիչները և արդյունքները ՀՀ-ում, ինչպես նաև բերվել են առաջարկություններ կայուն զարգացման բարելավման արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

## ԳԼՈՒԽ 1. ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### 1.1 Կայուն զարգացման հասկացությունը և առանձնահատկությունները

Տնտեսագիտական գրականության մեջ առկա են տարակարծություններ «Sustainable development» տերմինի թարգմանության և բովանդակության մեկնաբանության առումով: Հայերենով այս տերմինի թարգմանությունը հանդիպում է երկու տարբերակներով՝ «կայուն զարգացում» և «ինքնահարատ զարգացում»: Հայ գիտնականների մեծամասնությունը կիրառում է կայուն զարգացում տերմինը:

Ռուս գիտնականների շրջանում արդեն մի քանի տասնամյակ այդ տերմինի թարգմանության շուրջ բանավեճեր են ընթանում: Առաջարկվում են թարգմանության բազմաթիվ տարբերակներ «թույլատրելի զարգացում», «չհյուծող զարգացում», «զարգացում, որը պահպանում է ամբողջականությունը», «հավասարակշռությունն ապահովող զարգացում» և այլն:

Կայուն զարգացման խնդրի էությունը տերմինի թարգմանությունից չի փոխվում, քանի որ կարևորը հասկացության բովանդակությունն է: Կայուն զարգացման հիմնախնդիրը ավելի խորը հասկանալու համար անհրաժեշտ է կանգ առնել հենց «կայունություն» հասկացության վրա: Տեսականորեն կայունությունը կարող է որոշվել միայն գործընթացի իմաստով: Գործընթացը կոչվում է կայուն, եթե այն կարող է շարունակվել որոշակի ժամանակահատվածում: Տվյալ գործընթացի ընդհատման հավանականության աճի դեպքում նրա կայունությունը ֆունկցիոնալ կախվածության մեջ իջնում է:

Այժմ կայուն զարգացման համընդհանուր ընդունված գիտական սահմանումը բացակայում է, այնուամենայնիվ այդ հասկացության բովանդակության դասական ձևակերպումը համարվում է «Մեր ընդհանուր ապագան» զեկուցման մեջ Գ.Խ

Բրունդլանդի տված սահմանումը՝ «Կայուն զարգացումը այնպիսի զարգացում է, որը բավարարում է արդի ժամանակաշրջանի պահանջմունքները՝ առանց վտանգի տակ դնելու գալիք սերունդների սեփական պահանջմունքների բավարարման հնարավորությունները» [1] : Բրունդլանդի հանձնաժողովը, որը պաշտոնապես հայտնի է որպես «Շրջակա միջավայրի և զարգացման աշխարհիկ հանձնաժողով» գումարվել է ՄԱԿ-ի կողմից 1983 թվականին: Հանձնաժողովը ստեղծվել է «շրջակա միջավայրի վիճակի արագ վատթարացման, մարդկային և բնական ռեսուրսների և արդյունաբերական ու սոցիալական տենդենցի վատթարացման» աճող մտահոգությունների արդյունքում:

Կայուն զարգացման սահմանումը ներառում է երկու արմատական հասկացություններ՝

պահանջմունքների հասկացությունը  այդ թվում՝ գերակա (բնակչության աղքատ խավերի գոյության համար անհրաժեշտ),

սահմանափակումների հասկացությունը (պայմանավորված տեխնոլոգիայի և հասարակության կազմակերպման մակարդակով), որով որոշվում է մարդկության արդի և գալիք պահանջմունքների բավարարման շրջակա միջավայրի հնարավորությունը:

Վերը նշված սահմանման շուրջ եղել են տարակարծություններ և քննադատական դիտողություններ: Համաձայն մի տեսակետի՝ այն կրում է զուտ «մարդկային բնույթ և ոչինչ չի ասում բնության և մարդու փոխհարաբերությունների մասին», մեկ այլ կարծիք գտնում է, որ հիմնախնդիրը ներկայացված է կենցաղային մակարդակով, անորոշ է և երկիմաստ, բացակայում է գիտական բովանդակությունը, բավականաչափ ստույգ և կոնկրետ չէ գիտական խնդիրների

[1] «Наше общее будущее»: Доклад Международной комиссии по окружающей среде и развитию (МКОСР)", 1987.

գրվածքի և վերլուծության նպատակների առումով, իսկ երրորդ մեկնաբանությամբ նրանում կասկածելի է «գալիք սերունդների սեփական պահանջմունքների» իմաստը (պարզ չէ՝ ինչպիսին կլինեն պահանջմունքների բավարարման ձևերը, եթե նույնիսկ ընդունենք պահանջմունքների անփոփոխությունը) և այլն:

Գրականության մեջ կարելի է առանձնացնել կայուն զարգացման սահմանման ավելի քան հարյուր տարբերակներ, որոնք իրարից տարբերվում են որոշակի հիմնախնդրի շեշտմամբ, սակայն Բրունդլանդի սահմանման առանցքային տարրերը (ռեսուրսենի հավասար բաշխում արդի և գալիք սերունդների միջև և դրանց այն չափող օգտագործում, որը կարող է վերարտադրել էկոլոգիական համակարգը), որպես կանոն, մնում են անփոփոխ:

Ստորև ներկայացված են կայուն զարգացման առաջարկվող սահմանումներից մի քանիսը.

Վ.Ի. Դանիլով-Դանիլյան,Կ.Ս. Լոսև. «Կայուն զարգացումն այնպիսի զարգացում է, որի դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մնում է կենսոլորտի տնտեսական հզորության սահմաններում այնպես, որ չեն քայքայում մարդու կյանքի վերարտադրության համար բնական հիմքերը»[2]

Օ.Դրեյեր, Վ. Լոս. «Կայուն զարգացումը տնտեսական աճ է, որն ապահովում է ներկայիս և ապագայի սերունդների նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումը պատմականորեն ձևավորված էկոհամակարգերի հավասարակշռության պահպանման պայմաններում»[3]:

Ն.Ն. Մոիսեև. «Sustainable development-ը զարգացում է, որը թույլատրելի է կամ համաձայնեցված բնության վիճակի և նրա օրենքների հետ»[4]:

---

[2] Данилов-Данильян В. И., Лосев К. С. Проблемы устойчивого развития человечества, 1998

[3] Дрейер О.К., Лось В.А. Экология и устойчивое развитие, 1997

[4] Моисеев Н. Н. Коэволюция природы и общества, 1997

Կայուն զարգացումը արդյունքների արդարացի բաշխմամբ շարունակական տնտեսական աճ է՝ ռեսուրսների գումարային չնվազող ներուժի և շրջակա միջավայրի որակի բարելավվող պայմաններում:

Այս սահմանման մեջ կայուն զարգացման տնտեսական և սոցիալական բաղադրիչները ներկայացված են «արդյունքների արդարացի բաշխմամբ շարունականկան տնտեսական աճ» ձևակերպման մեջ, որն արտացոլում է տնտեսական աճի երկարաժամկետ բնույթը և նրա արդյունքների արդարացի բաշխումը՝ պարտադիր բավարարելով արդի և գալիք սերունդների պահանջմունքները,

«ռեսուրսների գումարային չնվազող ներուժը» ցույց է տալիս կայունությունն ապահովող տնտեսական պայմանը թույլ կայունության հայեցության շրջանակներում (որի դեպքում ենթադրվում է բնական կապիտալի փոխարինման հնարավորությունը կապիտալի այլ տեսակներով), որի տակ հասկանում ենք երկարաժամկետ մարդկային, ֆիզիկական և բնական ռեսուրսների գումարային չնվազող ներուժի պահպանում և աճ, որը թույլ կտա չփոքրացնել գալիք սերունդների պահանջմունքների բավարարման հնարավորությունները՝ ապահովելով սերունդների իրավահավասարության սկզբունքը,

«շրջակա միջավայրի որակի բարելավվող պայմանները» ներկայացնում են կայուն զարգացման էկոլոգիական բաղադրիչը, ըստ որի՝ տնտեսական, որը չպետք է ուղեկցվի բնության կազմալուծմամբ, այն պետք է լինի էկոլոգիզացված:

Հարկ է նկատել, որ սահմանելով կայուն զարգացումը որպես շարունակական տնտեսական աճ՝ կայուն զարգացման հայեցակարգի սկզբունքներին և չափանիշներին համապատասխան, կարելի է կայուն զարգացում և կայուն տնտեսական աճ հասկացությունները օգտագործել համարժեք իմաստներով: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է որակական տնտեսական աճին, որն ապահովում է

իրական զարգացում: Իսկ տնտեսական աճի տեխնածին մոդելի դեպքում տնտեսական զարգացում և տնտեսական աճ հասկացությունները տարբերվում են: Տեխնածին տնտեսական աճը ենթադրում է նյութական և էներգետիկ հոսքերի ծավալների և արագության մեծացում, բնակչության քանակական աճի և մարդկային աշխատանքի արդյունքների պաշարների ծավալի ավելացում, մինչդեռ տնտեսական զարգացումը ենթադրում է որակական բարելավումներ ֆիզիկական ծավալների և հոսքերի կառուցվածքում: Քանակական ցուցանիշների վրա հիմնված տեխնածին տնտեսական աճը հանգեցնում է ինքնաոչնչացման (և այդպիսով «անկայուն» է), իսկ կայուն տնտեսական աճը երկարաժամկետ հատվածում հենց կայուն զարգացումն է:[5]

### *1.2.Կայուն զարգացման եռմիասնական կոնցեպցիայի էությունը և բաղադրիչները*

Այսօր մարդկության էկոլոգիական խնդիրների լուծումը կապված է «Կայուն զարգացման» կոնցեպցիայի հետ: Կայուն զարգացման կոնցեպցիայի առաջացումը հանգեցրեց նախադրյալների, որոնք կարող են պայմանականորեն բաժանվել սոցիալ-տնտեսականի և բնապահպանականի:

---

[5] Հակոբջանյան Ռ.Վ. Թեկնածուական ատենախոսություն:

*Գծապատկեր 1. Կայուն զարգացման եռմիասնական կոնցեպցիա*




Կայուն զարգացման կոնցեպցիայի առաջացման սոցիալ-տնտեսական նախադրյալներն են՝

•«Սպառման փիլիսոփայություն» գերիշխանությունը: Դարեր շարունակ մարդկությունը հավատարիմ մնաց «զարգացման ռեսուրս» ձևին, սկզբունքները թագավորեցին:

«Մարդը բնության թագավորն է»,

«սպառումը հանուն բարգավաճման»:

Իր զարգացման պատմության ընթացքում մարդկությունը բնական միջավայրը օգտագործել է որպես անընդհատ աճող կարիքների բավարարման ռեսուրսների աղբյուր:

- Ռեսուրսների ոչնչացման տեխնոլոգիաների գերակայությամբ, որը որոշվում էր տնտեսական օգուտի առաջնայնությամբ, անսպառ ռեսուրսային ներուժի պատրանքով:

- Բնական ռեսուրսների գնի ոչ բավարար մեխանիզմը: Այսինքն, իրավիճակ է ծագում, երբ ռեսուրսների գները չեն արտացոլում իրենց իսկական արժեքը: Կառավարման այդ մեթոդի արդյունքը ռեսուրսային պոտենցիալի պակասության և բնական միջավայրի դեգրադացիան էր:
- Հյուսիս-հարավ խնդիրը
- Հիմնական պատճառներից մեկն այն է, որ ներկայումս գոյություն ունի երկու խումբ պետություններ զարգացման տարբեր մակարդակներով, ինչը նրանց միջև կոնֆլիկտներ և հակասություններ է առաջացրել:

Սոցիալ-տնտեսական բնագավառում և «Բնություն-մարդկություն» համակարգի փոխհարաբերությունների սկզբունքների և բնույթի մարդկության պատասխանը գլոբալ բնապահպանական խնդիրների, ճգնաժամերի և աղետների առաջացումն էր:

Անտրոպոգեն ծագման բնապահպանական ճգնաժամերի և աղետների առաջացումը և աճը պատճառ դարձավ գիտնականների առաջին ստեղծագործությունների ի հայտ գալուն, որոնք փորձել են հասարակության և պետությունների ուշադրությունը հրավիրել մարդկության և բնության միջև փոխհարաբերությունների վերանայման անհրաժեշտությանը:

Իրավիճակը փոխելու առաջին փորձը Ստոկհոլմում 1972 թվականի ՄԱԿ-ի (Միավորված ազգերի կազմակերպություն) կոնֆերանսն էր, որը ցույց տվեց, որ աշխարհում առկա են հայացքների հակասություններ արդյունաբերական և զարգացող երկրներում զարգացման գործընթացի վերաբերյալ, ոմանք ցանկացել են էկոլոգիզացիա (բնօգտագործման գործողություններում էկոլոգիական օբյեկտների վրա բացասական ազդեցության նվազեցման և բնության ռացիոնալ

կառավարման սկզբունքների ներդրման և իրականացման գործընթաց), մյուսները՝տնտեսական զարգացում, աղքատությունը հաղթահարելու համար[6]:

1983 թվականին ստեղծվեց Շրջակա միջավայրի և զարգացման միջազգային հանձնաժողովը, որի մեծ արժանիքն էր երկու խմբերի զարգացման ուղղությունը միավորելու անհրաժեշտության հասկացությունը: Միայն էկոլոգիզացիայի գործընթացում է հնարավոր հաղթահարել հետընթացը և դուրս գալ ճգնաժամային իրավիճակից: Արդյունքում առաջացել է «էկոլոգիական զարգացում» հասկացությունը, որը «Մեր ընդհանուր ապագան» զեկույցում սահմանվում է որպես «sustainable development» (SD) կամ հայերենով «կայուն զարգացում»:

Համաշխարհային մակարդակով հատկապես կարևոր իրադարձություն էր 1992 թվականին Ռիո դե Ժանեյրոյում ՄԱԿ-ի շրջակա միջավայրի և զարգացման կոնֆերանսը, որում ընդունվել են մի շարք կարևոր փաստաթղթեր:

Չնայած բավականին երկար որոնման ժամանակահատվածին, մարդկությունը դեռևս չի եկել զարգացման մեկընդհանուր գիտականորեն հիմնավորված զարգացման ռազմավարության: Կայուն զարգացման կոնցեպցիայի դրույթները ավելի շուտ քաղաքական և հանձնարարական են: Գիտությունների տարբեր ոլորտներից առաջատար գիտնականները դեռևս պետք է ուսումնասիրեն կայուն զարգացման կոնցեպցիան, հիմնավորեն և լրացնեն այն կոնկրետ բովանդակությամբ:

Ներկայումս քաղաքակրթության հետագա զարգացման հնարավոր ուղիների վերաբերյալ գաղափարի բազմազանությունը կարող է պայմանականորեն բաժանվել երեք խմբի՝ կենսակենտրոնիզմ, մարդաբանության (անթրոպոցենտրիզմ) և կայուն զարգացման:

[6] Цверианашвили И. А. Стокгольмская конференция 1972 г. и её роль в становлении международного экологического сотрудничества, 2016

*Աղյուսակ 1. Քաղաքակրթության հեփագա զարգացման հնարավոր ուղիները*

| Զարգացման ուղիները | Կենսենցենտիզմ | Կայուն զարգացում | Մարդաբանություն |
|---|---|---|---|
| Հիմնական սկզբունքը | Մարդը կենսոլորտի համար | Մարդկություն + կենսոլորտ = հարաբերությունների ներդաշնակություն | Կենսոլորտը մարդու համար |
| Դոմինանտ փիլիսոփայություն | Կենսոլորտ-միասնական ինքնակարգավորվող համակարգ: Մարդկությունը կենսոլորտի մի մասն է | Մարդկության զարգացումը՝ կենսոլորտի զարգացման օրենքների համաձայն | Կենսոլորտը՝ մարդկության աճող կարիքների բավարարման ռեսուրսների աղբյուր |
| Զարգացման նպատակներին հանելու ուղիներ | «Վերադառնալ դեպի բնություն»: Կենսոլորտի ապահովումը՝ իր գործառույթները վերականգնելու հնարավորությունով, հրաժարվելով քաղաքակրթության առավելություններից | Կենսոլորտում ռեսուրսների սպառման գիտակցված սահմանափակումները: Կենսոլորտի հնարավորությունները հաշվի առնելով կարիքների բավարարումը | Տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացգի շնորհիվ մարդկության «բարգավաճումը» ապահովելը |

Կենսենցենտիզմի հիմնական սկզբունքը մարդկության զարգացման ենթակայությունն է բնական պրոցեսներին՝ հրաժարվելով քաղաքակրթության առավելություններից, այսինքն՝ հայտարարվում է «դեպի բնություն» կարգախոսը:

Անթրոպոցենտրիզմի դիրքորոշումը չափազանց հակադարձ է, կենսոլորտի օգտագործումը որպես մարդկության աճող կարիքների ռեսուրսների աղբյուր, որը ակնկալվում է տեխնոլոգիական առաջընթացի միջոցով:

Կայուն զարգացումը ենթադրում է մարդկության և կենսոլորտի միջև հարաբերությունների ներդաշնակեցում, մարդկության զարգացում, բնության օրենքներին համապատասխան, ինչը հնարավոր է դառնում կենսոլորտի հնարավորությունների վրա հիմնված ռեսուրսների օգտագործման գիտակցված սահմանափակումների պայմաններում:

Բնական միջավայրի կայուն զարգացումը ենթադրում է մաքուր օդը, ջուրը, հողը, շահագործման բնական համակարգերը, բնության ինքնակառավարման վերականգնման ունակության պահպանումը:

Տնտեսության կայուն զարգացումը ներառում է կառավարման արդյունավետ մեթոդների կիրառումը (արդյունաբերության և գյուղատնտեսության բոլոր ճյուղերում), ուղղված ռեսուրսների օգտագործման որակի բարելավմանը:

Բոլոր երեք բաղադրիչների զարգացման գործընթացը փոխկապակցված է, ուստի այն պետք է դիտարկել միասնության մեջ: Այսինքն, նպատակահարմար է հաշվի առնել երեք ենթահամակարգերից բաղկացած սոցիալ-էկոլոգիական և տնտեսական համակարգի զարգացումը՝ էկոլոգիական, սոցիալական և տնտեսական:

*Կայունության մակարդակ*

Սոցիալ-էկոլոգիական և տնտեսական համակարգը կազմող երեք ենթահամակարգերի (էկոլոգիական, տնտեսական և սոցիալական) կայունությունը

նույնն չէ: Առավել կայուն է էկոլոգիական համակարգը, նվազագույնը՝ տնտեսականը: Երբ մենք ընտրում ենք տնտեսական գերակայություններ զարգացման առաջնահերթությունների համար, մենք ամբողջ համակարգը դնում ենք անկայուն վիճակում: Եվ միայն շրջակա միջավայրի զարգացման առաջնահերթություններին անցնելու և տնտեսական նպատակները սոցիալական շահերին ենթարկելու ժամանակ, մենք համակարգը տեղափոխում ենք կայունության վիճակ, այսինքն կայուն զարգացում (գծապատկերներ 2, 3):

*Գծապատկեր 2. Անկայուն վիճակ*




*Գծապատկեր 3. Կայուն վիճակ*




Այսպիսով, մենք տեսնում ենք, որ սոցիալական և տնտեսական ենթահամակարգերի կայուն զարգացումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե պահպանվի էկոլոգիական ենթահամակարգի կայուն զարգացումը:

Տարբերությունն աճի և զարգացման տեսանկյունից կայուն զարգացման ուղին ենթադրում է աճի և զարգացման հասկացությունների տարբերակումը:

Տնտեսական համակարգը զարգացնելու նպատակը երկար ժամանակ հանդիսանում է նրա քանակական աճը՝ բնական ռեսուրսների օգտագործման աճի շնորհիվ ապրանքների և ծառայությունների ծավալների աճի մեծացում:

Ի տարբերություն աճի գործընթացի, զարգացման գործընթացը ներառում է համակարգի որակական վերափոխումը, արտադրության արդյունավետության բարձրացումը՝ նույնիսկ օգտագործված ռեսուրսների քանակության նվազելու դեպքում:

Կայուն զարգացման կոնցեպցիան առաջացել է երեք հիմնական տեսանկյունների՝ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական միավորման արդյունքում:

Պետությունների մակարդակով կայուն զարգացմանն անցումը միակ ճանապարհն է հետագայում ճգնաժամից խուսափելու համար: Այնուամենայնիվ, այս կոնցեպցիան բավական ակնհայտ տեսական հիմնավորումներ ունի: Ստորև բերված են երեք մոտեցում, կայուն զարգացման հիմնավորման համար՝ տնտեսական, սոցիալական և էկոլոգիական (բնապահպանական), այսպես կոչված, «կայուն զարգացման եռմիասնական կոնցեպցիա»:

### *1.2.1. Տնտեսական բաղկացուցիչ*

Տնտեսական տեսանկյունից, կայուն զարգացման կոնցեպցիան հիմնվում է Ջ. Հիքսի կողմից տրված եկամտի մակարդակի սահմանման վրա: «Գործնական կյանքում եկամտի մակարդակի սահմանումն ուղղված է մարդկանց ցույց տալու, թե որքան կարող են նրանք սպառել, միևնույն ժամանակ իրենց ավելի աղքատ չդարձնելով»[7]: Սա միանգամայն համահունչ է կայուն զարգացման կոնցեպցիային, որի համար Հիքսի կողմից հաջորդող հստակեցման քայլերի կարգով կատարվեց

[7] Хикс Д. Р. Теория экономической истории, 2006.

հետևյալ ամենաարդյունավետ եկամտի սահմանումը: «Անհատի եկամուտը այն է, որը նա կարող է սպառել մեկ շաբաթվա ընթացքում և դեռ ակնկալել, որ շաբաթվա վերջի իր եկամուտը կլինի նույնը, ինչպես սկզբում էր»[8]:

Անշուշտ, հասկանալով, որ այսօր ստացած եկամուտը եկամուտ չի կարելի համարել, եթե փաստացի նույնը չի կարելի ստանալ վաղը, ապա մինչև ռեսուրսային պոտենցիալի հետ փոխկապակցված տնտեսական աճի անհուսալիության իրականացումն ընդամենը մեկ քայլ է մնում կատարել և այդ քայլը կատարվել է կայուն զարգացման կոնցեպցիայի հեղինակների կողմից: Հիքսի սահմանումը ուղղակիորեն կարևորում է սահմանափակ բնական ռեսուրսների օպտիմալ օգտագործումը, ինչը կայուն զարգացման կոնցեպցիայի կարևոր հասկացություն է:

Սահմանափակ ռեսուրսները վաղուց արդեն ճանաչվել են որպես հիմնարար տնտեսական փաստ: Այնուամենայնիվ, «բնության պարգևների» փաստացի չվճարելու մասին եզրակացությունը կատարվել է միայն կայուն զարգացման կոնցեպցիայի շրջանակներում: Ներկայումս, բնական ռեսուրսների արժեքը գնահատելու շատ տարբեր մոտեցումներ կան: Բնական և մարդկային կապիտալի արտադրության փոխկապակցման հարցի լուծման ժամանակ բնական ռեսուրսների գնահատման մեջ առաջանում են մեկնաբանման խնդիրներ:

Կարևոր է նշել, որ դա տնտեսական մոտեցում է, որը կայուն զարգացման կոնցեպցիայի հիմքն է: Միևնույն ժամանակ, կայուն զարգացման կոնցեպցիան հնարավորություն է տվել նորովի դիտել «տնտեսական արդյունավետություն» հասկացությունը: Ավելին, պարզվեց, որ երկարաժամկետ տնտեսական ծրագրերը, որոնց իրականացման ընթացքում հաշվի են առնվում բնական օրենքները, ի վերջո

[8] Хикс Д. Р. Теория экономической истории, 2006.

ծախսարդյունավետ են, իսկ առանց հաշվի առնելու երկարատև բնապահպանական հետևանքները՝ անարդյունավետ:

### *1.2.2. Սոցիալական բաղկացուցիչ*

Կայուն զարգացման կոնցեպցիան սոցիալապես ուղղված է սոցիալական և մշակութային կայունության պահպանմանը, այդ թվում կործանարար հակամարտությունների քանակի կրճատմանը: Համաշխարհային մասշտաբով ցանկալի է պահպանել մշակութային կապիտալը և ավելի լիարժեք դարձնել ոչ դոմինանտ մշակույթներում կայուն զարգացման օգտագործման փորձը: Կայուն զարգացման հասնելու համար ժամանակակից հասարակությունը պետք է ստեղծի ավելի արդյունավետ որոշումների կայացման համակարգ, որը հաշվի է առնում պատմական փորձը և խրախուսում է բազմակարծությունը:

Սոցիալական խնդիրների լուծման կարևորության գաղափարն է հիմք հանդիսացել Հռոմի ակումբի ստեղծմանը և, ի վերջո, կայուն զարգացման կոնցեպցիայի առաջացմանը:

Առանց մարդկային հասարակության բոլոր անդամների միջև ռեսուրսների և հնարավորությունների հավասար բաշխման հնարավոր չէ պատկերացնել կայուն զարգացում: Աշխարհի բոլոր քաղաքացիների համար արժանապատիվ կյանքի և բարգավաճման նվաճումը պետք է դառնա համաշխարհային հանրության հիմնական նպատակը: Կայուն զարգացման համար, առաջին հերթին, անհրաժեշտ է ստեղծել առավել հավասար հասարակություն մարդկային կազմակերպությունների բոլոր մակարդակներում, առանց բացառությունների: Որոշակի երաշխավորված նվազագույն կենսամակարդակը պետք է լինի ցանկացած քաղաքացու անքակտելի իրավունքը:

Միևնույն ժամանակ հարց է ծագում սոցիալական առավելագույնի մասին, այսինքն այն վերին սահմանների մասին, երբ սպառումը և թափոնները դատապարտելի են ու նույնիսկ քրեական: Հիմնական գործոնները այս կամ այն աճի տեմպերը չեն, այլ նրանց ետևում թաքնված եկամտի բաշխումը: Նյութական առատությունը բերում է նույն խնդիրներին, երբեմն ավելի մեծ, քան աղքատությունը:

Կայուն զարգացման կոնցեպցիայի սոցիալական բաղադրիչի զարգացումը դարձել է ապագա սերունդների իրավունքների պահպանման հիմնարար գաղափարը: Երկրի բնական ռեսուրսները ողջ մարդկության ընդհանուր ժառանգությունն են՝ ներառյալ ներկայիս և ապագա սերունդները: Կայուն զարգացման համար այս մշտական պահուստը պետք է փոխանցվի սերնդեսերունդ, հնարավորինս քիչ սպառված և աղտոտված:

### *1.2.3. Էկոլոգիական բաղկացուցիչ*

Էկոլոգիական տեսանկյունից կայուն զարգացումը պետք է ապահովի կենսաբանական և ֆիզիկական համակարգերի կայունությունը: Հատկապես կարևոր է տեղական էկոհամակարգերի կենսունակությունը, որից կախված է ամբողջ կենսոլորտի համաշխարհային կայունությունը: Ավելին, բնական համակարգերի և բնակավայրերի կոնցեպցիան կարելի է հասկանալ լայնորեն, այդ թվում, նաև մարդու ստեղծած միջավայրը, ինչպես, օրինակ, քաղաքները: Հիմնական նպատակն այն է, որ նման համակարգերի փոփոխությունների հնարավորությունները պահպանվեն, այլ ոչ թե պահպանվի դրանց «իդեալական» ստատիկ վիճակը: Բնական ռեսուրսների դեգրադացումը, աղտոտումը և կենսաբանական բազմազանության կորուստը նվազեցնում են էկոլոգիական համակարգերի ինքնագնահատման կարողությունը:

Կայուն զարգացման կոնցեպցիան պետք է առանձնանա նաև «ծայրահեղական» էկո-տնտեսական հասկացություններից, մասնավորապես, էկոտոպիայի տարբեր հասկացություններից՝ տնտեսության զարգացման ցանկացած տեսակի սահմանափակման տեսությունից: Էկոտոպիայի կոնցեպցիայի հիմնական ուղղությունները վերադարձն են բնությանը, կենսաբանական և մշակութային բազմազանությանը, պարզ տեխնոլոգիաներին, գիտական և տեխնոլոգիական առաջընթացի լիովին մերժմանը: Այսպիսի տնտեսական զարգացման ընտրությունը, անշուշտ, կանդրադառնա հասարակության կենսամակարդակի նվազեցմանը, ուստի մի քիչ անիրատեսական է թվում: Միևնույն ժամանակ, կյանքի և սպառման որակի ժամանակակից արևմտյան չափանիշները պարզապես չեն կարող տարածվել ամբողջ մարդկության վրա:

Կենսոլորտի պահպանումը, հետևաբար, չի կարող կայուն զարգացման ինքնանպատակ լինել: Նրա նպատակն է ՝մարդու գոյատևումը որպես կենսաբանական տեսակ: Միևնույն ժամանակ, մեծ թվով մարդիկ գիտակցում են, որ մարդկության գոյությունը անհնար կլինի, եթե նրա միջավայրի, բնական միջավայրի դեգրադացիան գերազանցի որոշակի, բայց դեռևս անհայտ և հավանաբար հիմնարար անկայուն, կրիտիկական մակարդակը:

Շրջակա միջավայրին ներդաշնակեցված զարգացումը կարող է նպաստել ինչպես մարդկային մի շարք կարիքների բավարարման, այնպես էլ սեփական զարգացման հիմքի ամրապնդմանը: Շատ վաղուց երևում է, որ շրջակա միջավայրի և տեղական սննդի արտադրության մակարդակի հետ կապված գործոնությունների դիտավորյալ բնույթի միջև կա ակնհայտ կապակցություն: Սա ցույց է տալիս կայուն զարգացման կոնցեպցիայի գործնական իրականացման հիմնարար հնարավորությունը: Իրականում, եթե Երկրի կենսոլորտը գոյություն ունի հարյուր միլիոնավոր տարիներ, չնայած բոլոր տիեզերական

կատակլիզմներին, որոնք երբեմն շատ կործանարար են, ինչու չպետք է լինի կայուն տնտեսական համակարգ, որը հիմնված լինի հենց նույն սկզբունքների վրա, այսինքն «կայուն»:

Այդ տարբեր տեսանկյունների համաձայնեցումը և դրանց տարբեր որոշակի միջոցառումների վրա կիրառումը, որոնք կայուն զարգացման հաջողության միջոցներ են, ահռելի բարդության խնդիրներ են, քանի որ կայուն զարգացման բոլոր երեք տարրերը պետք է քննարկվեն հաշվեկշռված: Կարևոր են նաև այդ երեք կոնցեպցիաների փոխազդեցության մեխանիզմները: Տնտեսական և սոցիալական տարրերը, փոխազդելով միմյանց հետ, ծնում են այնպիսի նոր խնդիրներ, ինչպիսին են մի սերնդի ներսում արդարության ձեռքբերումն է (օրինակ, շահույթի բաշխման նկատմամբ) և բնակչության աղքատ շերտերին նպատակաուղղված օգնության ցուցաբերումը: Տնտեսական և բնապահպանական տարրերի փոխազդեցության մեխանիզմը շրջակա միջավայրի վրա արտաքին ազդեցության ինտերնալիզացիայի (ձեռնարկության տնտեսական հաշվառման) և արժեքային գնահատման նկատմամբ նոր գաղափարներ ծնեց: Վերջապես, սոցիալական և բնապահպանական տարրերի կապը հետաքրքրություն առաջացրեց այն հարցերի նկատմամբ ինչպիսին են ներսերնդային և միջսերնդային հավասարությունը, ներառված ապագա սերունդների իրավունքները, և որոշումների կայացման պրոցեսներում բնակչության մասնակցությունը:

Կայուն զարգացման կոնցեպցիայի իրականացման կարևոր հարց է (հատկապես այն բանի հետ կապված, որ այն հաճախ դիտարկվում է որպես էվոլուցիոն) նրա գործնական և չափվող ինդիկատորները: Այդ ուղղությամբ այժմ աշխատում են ինչպես միջազգային կազմակերպությունները, այնպես էլ գիտական շրջանները: Ելնելով վերը նշված եռմիասնականությունից, այդպիսի

ինդիկատորները կարող են միմյանց հետ կապել այդ երեք կոմպոնենտները և արտացոլել էկոլոգիական, տնտեսական և սոցիալական (ներառյալ հոգեբանական, օրինակ, կայուն զարգացման ընկալումը) ասպեկտները:

*Կոնցեպցիայի միասնականությունը*

Այդ տարբեր տեսանկյունների համաձայնեցումը և դրանց տարբեր որոշակի միջոցառումների վրա կիրառումը, որոնք կայուն զարգացման հաջողության միջոցներ են, ահռելի բարդության խնդիրներ են, քանի որ կայուն զարգացման բոլոր երեք տարրերը պետք է քննարկվեն հաշվեկշռված: Կարևոր են նաև այդ երեք կոնցեպցիաների փոխազդեցության մեխանիզմները: Տնտեսական և սոցիալական տարրերը, փոխազդելով միմյանց հետ, առաջացնում են այնպիսի նոր խնդիրներ, ինչպիսիք են մի սերնդի ներսում արդարության ձեռքբերումը (օրինակ, շահույթի բաշխման նկատմամբ) և բնակչության աղքատ շերտերին նպատակաուղղված օգնության ցուցաբերումը: Տնտեսական և բնապահպանական տարրերի փոխազդեցության մեխանիզմը շրջակա միջավայրի վրա արտաքին ազդեցության ինտերնալիզացիայի (ձեռնարկության տնտեսական հաշվառման) և արժեքային գնահատման նկատմամբ նոր գաղափարներ ծնեց: Սոցիալական և բնապահպանական տարրերի կապը հետաքրքրություն առաջացրեց մի շարք հարցերի նկատմամբ, օրինակ, ներսերնդային և միջսերնդային հավասարությունը, ապագա սերունդների իրավունքները, որոշումների կայացման պրոցեսներում բնակչության մասնակցությունը:

*Ինդիկատորներ*

Կայուն զարգացման կոնցեպցիայի իրականացման կարևոր հարց է (այն շատ հաճախ դիտարկվում է որպես էվոլուցիոն) նրա գործնական և չափվող ինդիկատորները: Այդ ուղղությամբ այժմ աշխատում են միջազգային կազմակերպությունները և գիտական շրջանները: Ելնելով վերը նշված

եռմիասնականությունից, այդպիսի ինդիկատորները կարող են միմյանց հետ կապել այդ երեք կոմպոնենտները և արտացոլել էկոլոգիական, տնտեսական և սոցիալական (ներառյալ հոգեբանական, օրինակ, կայուն զարգացման ընկալումը) ասպեկտները:

*Պատմությունը 1970 ականների սկիզբ*

Կայուն զարգացման կոնցեպցիան գիտական գիտելիքների էկոլոգիզացիայից սոցիալ-տնտեսական զարգացման տրամաբանական անցումն է, որը բուռն կերպով սկսեց զարգանալ 1970-ական թվականներին: Բնական պաշարների սահմանափակ լինելու հարցը, միևնույն ժամանակ կյանքի հիմք հանդիսացող բնական միջավայրի աղտոտումը, մարդու տնտեսական և ցանկացած այլ գործունեության հետևանքով, 1970-ական թվականներին դարձավ շատ գիտական աշխատանքների թեմա: Այդ անհանգստության հետևանքը եղավ երկրի վրա գլոբալ երևույթների ուսումնասիրության համար ստեղծված՝ միջազգային ոչ պետական գիտական կազմակերպությունների ստեղծումը, ինչպիսին են Միջազգային դաշնության հեռանկարային հետազոտությունների ինստիտուտները (ИФИАС), Հռոմեական ակումբը («Աճի սահմանները» հայտնի զեկույցով), Համակարգված վերլուծության միջազգային ինստիտուտը, իսկ ԽՍՀՄ–ում՝ Համակարգված հետազոտությունների համամիութենական ինստիտուտը:

*Ստոկհոլմի Կոնֆերանսը*

1972 թվականին Ստոկհոլմում տեղի ունեցավ ՄԱԿ–ի Կոնֆերանսը նվիրված մարդու շրջակա միջավայրին և շրջակա միջավայրի վերաբերյալ ՄԱԿ-ի Ծրագրի (ЮНЕП) ստեղծմանը [9], նշանավորվեց պետական մակարդակով միջազգային համագործակցության համախմբմամբ բնապահպանական խնդիրների լուծման

[9] Цверианашвили И. А. Стокгольмская конференция 1972 г. и её роль в становлении международного экологического сотрудничества, 2016

շուրջ: Սկսվեց զարգանալ բնապահպանական քաղաքականությունն ու դիպլոմատիան, շրջակա միջավայրի իրավունքը, ի հայտ եկավ նոր ինստիտուցիոնալ կազմավորում՝ շրջակա միջավայրի նախարարություն և գերատեսչություն:

1980–ական թվականներին սկսեցին խոսել բնազարգացման, զարգացում առանց ոչնչացման, բնահամակարգի կայուն զարգացման անհրաժեշտության մասին: 1980 թվականին ընդունված բնության պահպանման համաշխարհային ռազմավարության միջազգային փաստաթղթերում առաջին անգամ հիշատակվեց կայուն զարգացման մասին: ВСОП –ի երկրորդ ռեակցիան ստացավ «Երկիր մոլորակի խնամքը՝ կայուն կյանք ռազմավարություն» անվանումը և հրատարակվեց 1991 թվականի հոկտեմբերին: Նրանում ընդգծվում է, որ զարգացումը պետք է հիմնվի կենդանի բնության, երկրի բնական համակարգի գործառույթների և բազմազանության պահպանման վրա, որոնցից կախված են կենսաբանական տեսակները: Դրա համար անհրաժեշտ է պահպանել կյանքին աջակցող համակարգերը (կենսաապահովում), պահպանել կենսաբազմազանությունը և ապահովել նորացվող պաշարների կայուն օգտագործումը: Ի հայտ եկան բնապահպանական անվտանգության վերաբերյալ հետազոտություններ՝ որպես ազգային և գլոբալ անվտանգության մաս: 1980-ական թվականներին շրջակա միջավայրի վերաբերյալ ՄԱԿ-ի Ծրագիրը (ЮНЕП) «առանց ոչնչացման» անցմանը անհրաժեշտության կոչ էր անում: 1980 թվականին առաջին անգամ լայն տարածում ստացավ բնության պահպանման Համաշխարհային ռազմավարության կայուն զարգացման կոնցեպցիան, որը մշակվել էր ЮНЕП-ի, Բնության պահպանման միջազգային միության և Վայրի բնության համաշխարհային ֆոնդի նախաձեռնությամբ[10]: Տեսությունը և պրակտիկան ցույց

[10] Report of the Governing Council. UN Environment Programme. 1980

են տվել, որ բնապահպանական բաղադրիչը մարդկության զարգացման անխզելի մասն է: Շրջակա միջավայրի և նրա զարգացման վերաբերյալ միջազգային հանձնաժողովի գործունեության և նրա «Մեր ընդհանուր ապագան» եզրափակիչ զեկույցի հիման վրա ընդունվեց կայուն զարգացման նոր եռարժեք կոնցեպցիա ( բն-սոցիալ-տնտեսական): ՄԱԿ-ի համաշխարհային սամմիտը կայուն զարգացման գծով (միջկառավարական, ոչ կառավարական և գիտական ֆորում) 2002 թվականին հաստատեց համաշխարհային համագործակցության կայուն զարգացման գաղափարներին հավատարմությունը մարդկային հիմնական պահանջմունքների ժամկետից շուտ բավարարմանը, երկիր մոլորակի վրա՝ կենսաապահովման համակարգի պահպանման պայմանով:

*Կայուն զարգացումը և ավանդական տնտեսությունը*

Կայուն զարգացման կոնցեպցիայի հայտնվելը խալխլեց ավանդական տնտեսության հիմքերը՝ տնտեսական անսահմանափակ աճ: Շրջակա միջավայրի և նրա զարգացման գծով ՄԱԿ-ի Կոնֆերանսի հիմնական փաստաթղթերից մեկում (Ռիո-դե-Ժանեյրո, 1992 թ.) «21-րդ օրակարգում» գլուխ 4 (մաս 1), նվիրված արտադրության և օգտագործման բնույթում փոփոխություններին, հիշատակվում է այն միտքը, որ պետք է գնալ կայուն զարգացման կոնցեպցիային ընդառաջ, երբ ասվում է, որ որոշ տնտեսագետներ «կասկածի տակ են դնում տնտեսական աճի ավանդական հասկացությունները», և առաջարկում են «կիրառման և արտադրության սխեմաների փնտրում, որոնք բավարարում են մարդկության էական պահաջմունքները»[11]: Ավանդական տնտեսությունը հաստատում է, որ շուկայական համակարգում շահույթի մաքսիմալացումը և սպառողների բավարարումը համատեղելի է մարդկանց բարեկեցության մաքսիմալացման հետ և, որ շուկայի թերությունները կարելի է ուղղել պետական քաղաքականությամբ:

[11] Declaration R. Rio declaration on environment and development. 1992.

երկրորդը ենթադրում է, որ շահույթի կարճաժամկետ մաքսիմալացումը և անհատ-սպառողների բավարարումը վերջին հաշվով կբերի բնական և սոցիալական պաշարների քայքայմանը, որոնց վրա կառուցվում է մարդկանց բարեկեցությունը և կենսաբանական տեսակների գոյատևումը:

*Կայուն զարգացման տնտեսությունը*

Տնտեսագիտության առաջընթացը բերեց բնական գործոնին էլ ավելի մեծ նշանակություն տալուն: Բնական ավանդական պաշարների մեծամասնությունը դարձան հազվադեպ: Դա վերաբերում է վերականգնվող և չվերակագնվող պաշարներին՝ ամենից առաջ էկոհամակարգին (էկոհամակարգային «ապրանքներին» և «ծառայություններին») և կենսաբազմաձևություններին: Կայուն զարգացման բնութագրումներից մեկը, դա երկարաժամկետ միջսերնդային պլանով չքայքայվող զարգացումն է: Քանի որ, բնությունը մարդու կենսագործունեության հիմքն է, նրա սպառումը ու դեգրադացիան, գոյություն ունեցող տնտեսական հարաբերությունների պայմաններում, բացասաբար են անդրադառնում սոցիալական հարաբերությունների, աղքատության աճի և արտադրության ու կիրառման կառուցվածքների վրա: Մյուս կողմից՝ պարզվեց, որ վերակագնվող շատ բնական բարիքներ չունեն համապատասխան արժեք, որն էլ հենց դրանց սպառման և դեգրադացիայի աղբյուր է: Այդ պատճառով անցում կատարվեց դեպի էկոլոգիական տնտեսություն և կայուն զարգացման տնտեսություն:

### *1.3. Սոցիալ-տնտեսական և բնապահպանական համակարգերի կայուն զարգացման միջազգային փորձը*

Եվրոպական հանձնաժողովը սահմանում է Եվրոպայի և ամբողջ աշխարհի կայուն զարգացմանը միտված ռազմավարական հայեցակարգ:

Եվրոպական միությունը թողարկեց իր առաջին՝ Կայուն եվրոպական ապագայի ապահովման ուղղությամբ հետագա քայլերի մասին Եվրոպական միության հաղորդագրությունը, որում նկարագրվում է, թե ինչպես է Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկված քաղաքական տաս առաջնահերթությունների իրականացումը նպաստելու ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգի» կյանքի կոչմանը, և թե ինչպես է Եվրամիությունը պատրաստվում հետագայում իրագործել Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ):[12]

2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակներն, որոնք ընդունվել էին 2015թ. Սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ աշխարհի երկրների առաջնորդների կողմից: Առաջիկա 15 տարիների ընթացքում՝ առաջնորդվելով բոլորին վերաբերող այս նոր նպատակներով, երկրները կհամախմբեն իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով, պայքարելու անհավասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները՝ միաժամանակ հետևելով, որ ոչ ոք չանտեսվի:[13]

*17 նպատակները հետևյալն են՝*

Աշխարհին առանց աղքատության, աշխարհին առանց սովի, առողջ ապրելակերպ, որակյալ ուսում, կանանց ու տղամարդկանց իրավունքների հավասարություն, մաքուր ջրի ու կոյուղու հասանելիություն, էներգիայի վերականգնվող աղբյուրներ, աշխատատեղեր ու տնտեսական աճ, նորարարություններ ու ենթակառուցվածք, աշխարհին առանց անհավասարության,

[12] https://eeas.europa.eu

[13] http://www.un.am/hy/news/260

քաղաքների անվտանգություն ու մատչելի բնակարան, խելամիտ սպառում, կլիմայի փոփոխության դեմ պայքար, ջրային ռեսուրսների պահպանում, ցամաքում էկոհամակարգի պահպանություն, խաղաղություն ու օրենքի գերակայություն, նպատակների համատեղ իրագործում:

Կայուն զարգացման նպատակները գլոբալ բնույթ են կրում և կիրառվում են ամենուրեք, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, ներուժն ու զարգացման մակարդակը, ինչպես նաև ազգային ռազմավարությունն ու գերակայությունները: Դրանք անկախ չեն իրարից և պետք է իրագործվեն համալիր մոտեցման հիման վրա: Այդ նպատակները 3 տարվա աշխատանքի արդյունք են, որն իր մեջ ներառում է ինչպես շահագրգիռ կողմերի, այնպես էլ մարդկանց կարծիքը: Սա աննախադեպ համաձայնություն է կայուն զարգացման գերակայությունների վերաբերյալ ՄԱԿ անդամ 193 երկրի միջև, որի դրույթները հավանության են արժանացել քաղաքացիական հասարակության, գործարարների, խորհրդարանականների և դերակատարների կողմից:[14]

Երկրորդ Հաղորդագրությամբ՝ նվիրված զարգացման վերաբերյալ եվրոպական նոր համաձայնության ձեռք բերմանն առաջարկվում է ընդհանուր տեսլական, ինչպես նաև Եվրամիության և ԵՄ անդամ պետությունների միջև՝ զարգացմանն ուղղված համագործակցության ձևաչափ, որը համահունչ է «2030 օրակարգի» պահանջներին: Աֆրիկայի, Կարիբյան ավազանի և Խաղաղօվկիանոսյան երկրների (ԱԿԽ) խմբի հետ գործընկերության վերանայմանը նվիրված ԵՄ երրորդ Հաղորդագրությամբ առաջարկվում է ստեղծել այնպիսի համակարգեր, որոնք թույլ կտան մեկնարկել ԵՄ-ԱԿԽ հարաբերությունների նոր և կայուն փուլ՝ մինչև 2020 թվականը ուժի մեջ

[14] http://www.panarmenian.net/arm/details/200866/

«Գործընկերության շուրջ Կոտոնու համաձայնագրի» գործողության ժամկետը լրանալուց հետո:

Եվրահանձնաժողովի առաջին փոխնախագահ Ֆրանս Տիմերմանսը նշեց. «Մեր սերունդների և մոլորակի ապագան ի շահ բոլորիս կառուցելու նպատակներից ելն ելով՝ Կայուն Զարգացման Նպատակների իրագործումն և կայունության ապահովման գաղափարն ընդունում ենք որպես կարևորագույն ուղենիշ և սկզբունք մեր կողմից իրականացվող բոլոր աշխատանք ներում: Միացյալ Ազգեր Կազմակերպության «Կայուն զարգացման 2030 օրակարգը» կյանքի կոչելը հանդիսանում է համընդհանուր հանձնառություն, որի իրականացման համար պետք է ապահովվի բոլորի՝ այդ թվում ԵՄ անդամ պետությունների և հասարակական կազմակերպությունների լայն շերտերի մասնակցությունն ու փոխգործակցություն ը»[15]:

Եվրոպական միության Բարձր ներկայացուցիչ, Եվրահանձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մեգերինին նշել է. «Մեր օրերում շատ ավելի փոխշաղկապված ենք, քան երբևէ նախկինում, ուստի արտաքին ներդրումներն՝ ի շահ մեր սահմաններից դուրս գտնվող ժողովուրդների, միաժամանակ հանդիսանում են ներդրումներ հանուն Եվրոպայի: Առաջարկված փաստաթղթերը հետապնդում են մեկ ընդհանուր նպատակ՝ հզորացնել աշխարհի բոլոր գործընկերների հետ ասկա համագործակցության ներազդումն ու զուգահեռաբար խթանել կայունությունը՝ տանը, թե դրսում: Դա է հանդիսանում 2016թ. հունիսին թողարկված «Եվրոպական միության գլոբալ ռազմավարության» էությունը: ԵՄ-ն կշարունակի վարել արտաքին գործողություններ՝ աջակցելով խաղաղության,

[15] https://eeas.europa.eu

ժողովրդավարության և լավ կառավարման ամրապնդմանը, դիմադրողականության ամրացմանը բոլոր շերտերում ինչպես նաև խթանել համընդհանուր կայունությունն ու բարեկեցությունը»[16]:

Միջազգային համագործակցության և զարգացման հարցերի հանձնակատար Նեվեն Միմիցան հավելեց. «Զարգացմանն ուղղված Եվրոպական նոր համաձայնության առաջարկով ԵՄ-ն արձագանքում է հետզհետե ավելի փոխշաղկապվող և մարտահրավերներով հագեցած աշխարհին: Ես կողմ եմ՝ ԵՄ կառույցների և բոլոր անդամ պետությունների համատեղ պատասխանատվության պայմաններում իրական կոնսենսուսի ձևավորմանը. Այն կօգնի մեզ առաջնորդել կայուն զարգացման նպատակների կյանքի կոչմանն ուղղված գլոբալ ակցիան: Աֆրիկայի, Կարիբյան ավազանի և Խաղաղ օվկիանոսյան երկրների հետ ապագա գործընկերության մեր առաջարկին զուգահեռ, այն նույնպես հաստատում է Եվրամիության պատրաստակամությունը՝ փոխգործակցելու ամբողջ աշխարհի մեր գործընկերների հետ հանուն ավելի բարեկեցիկ համատեղ ապագայի կառուցման:[17]»

Կայունությունը եվրոպական բրենդ է: Եվրոպական միությունը՝ հաստատուն մեկնարկային դիրք զբաղեցնելով հանդերձ գրանցել է լուրջ ձեռքբերումներ՝ տնտեսական զարգացման, սոցիալական համախմբման և ժողովրդավարական հասարակությունների բարձր մակարդակն ապահովելու, ինչպես նաև կայուն զարգացմանն ուղղված բարձր հանձնառությունը ստանձնելու գործում, ինչն ամրագրված է Եվրոպական Դաշնագրերում:

Այդուհանդերձ, այսօր է պետք ընտրել ապագայի պահպանությանն անհրաժեշտ՝ համապատասխան հայեցակարգերը:

[16] https://eeas.europa.eu

[17] https://eeas.europa.eu

ԵՄ Հանձնաժողովի նոր ռազմավարական հայեցակարգի հիմնական տարրերն են.

Կայուն Եվրոպական ապագայի համար ձեռնարկվող հետագա քայլերը՝

- «Կայունզարգացման 2030 օրակարգի» նկատմամբ ԵՄ-ն արաձագանքում է երկու ուղղությամբ. Առաջին հերթին ապահովելով Կայուն զարգացման նպատակների տարածումը Եվրոպական քաղաքականության շրջանակային հայեցակարգերում և գործող ԵՄ հանձնաժողովի կողմից սահմանված առաջնահերթություններում, և երկրորդ՝ նախաձեռնելով վերլուծություն՝ նվիրված ավելի երկարաժամկետ տեսլականի զարգացմանը, հաշվի առնելով 2020 թվականից հետո ոլորտային հայեցակարգերի մշակումը:
- Եվրոպական հանձնաժողովն իգործ կդնի առկա ամբողջ գործիքակազմը՝ ներառյալ օրենսդրական դաշտի ավելի արդյունավետ կանոնակարգման գործիքները՝ ապահովելով, որպեսզի գործող և նոր քաղաքական հայեցակարգերում պատշաճ հաշվի առնվեն կայուն զարգացման երեք՝ սոցիալական, բնապահպանական ու տնտեսական հենասյուները:
- Հանրային մարմիններին և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերին համախմբող դինամիկ տարածք ստեղծելով՝ Եվրոպական հանձնաժողովը կմեկնարկի շահագրգիռ միավորների բազմակողմ պլատֆորմի ստեղծման գաղափարը, որին կվերապահվի բոլոր ոլորտներում ԿԶՆ-իրագործումն ապահովելու և առաջավոր փորձի փոխանակումն ապահովելու կարևոր դերը:
- 2017 թվականից սկսած՝ Եվրոպական հանձնաժողովը կներկայացնի կանոնավոր բնույթի հաշվետվություններ՝ 2030 օրակարգի իրագործման գործում ԵՄ-ն ձեռքբերումների վերաբերյալ, ինչպես նաև կնախաձեռնի կարծիքների փոխանակում՝ նվիրված ավելի

երկարաժամկետ տեսլականի զարգացմանը, ուշադրության տակ առնելով 2020 թվականից հետո, ոլորտային քաղաքականությունների մշակման հեռանկարները:

Եվրոպական նոր համաձայնություն զարգացման շուրջ՝

- Զարգացման շուրջ Եվրոպական նոր համաձայնության ձեռքբերմամբ առաջարկվում է արմատապես շրջել 2030 օրակարգի ներքո իրականացվելիք զարգացմանն ուղղված համագործակցությունը՝ արձագանքելով ավելի համալիր և փոխադարձ շաղկապված մարտահրավերներին, որոնց հետ այսօր առերեսվում է ամբողջ աշխարհը:
- Առաջարկի միջոցով ներկայացվում է Եվրամիության բոլոր կառույցներիև ԵՄ անդամ պետությունների ընդհանուր տեսլականն ու գործողությունների ձևաչափը՝ հատկապես կարևորելով զարգացման ոլորտային հորիզոնական շարժիչները՝ գենդերային հավասարությունը, երիտասարդությունը, կայուն էներգետիկան, և կլիմային ուղղված գործողությունը, ներդրումները, միգրացիան և շարժունությունը:
- Նպատակն է բարձրացնել ԵՄ զարգացմանն ուղղված քաղաքականության արժանահավատությունը, արդյունավետությունն ու ազդեցությունը՝ հիմք ընդունելով ընդհանուր վերլուծությունները, ընդհանուր ռազմավարությունները, համատեղ ծրագրավորումը, համատեղ գործողությունն ու կատարելագործված հաշվետվությունները:
- Նոր կոնսենուսի շնորհիվ հնարավոր կլինի սահմանել Եվրամիության և ԵՄ անդամ պետությունների բոլոր՝ զարգացմանն ուղղված հայեցակարգերի շրջանակը: Նման մոտեցման վառ օրինակ է «Եվրոպական արտաքին ներդրումային ծրագիրը», որի շրջանակներում «Զարգացմանը միտված պաշտոնական աջակցությանը» ավելացնելով ֆինանսավորման այլ

աղբյուրների հատկացումներ՝ ի շահ աղքատության ամենաբարձր ցուցանիշներ գրանցած երկրների կայուն աճ ապահովելու նպատակով:[18]

*Վրասփանի կայուն զարգացման ծրագրի առանձնահափկությունները*[19]

Վրաստանի կառավարության տնտեսական քաղաքականությունը հիմնված է երեք հիմնական սկզբունքների վրա: Առաջին սկզբունքը ենթադրում է արագ և արդյունավետ տնտեսական աճ ապահովել, որը պայմանավորված է իրական զարգացմամբ (արտադրության ոլորտը, որը կլուծի երկրի տնտեսական խնդիրները, կստեղծի աշխատատեղեր և կնվազեցնի աղքատությունը: Երկրորդ սկզբունքը ենթադրում է տնտեսական քաղաքականության իրականացումը, որը նպաստում է ներառական տնտեսական աճին, այն նախատեսում է բնակչության համընդհանուր ներգրավվածություն տնտեսական զարգացման գործընթացում (ներառյալ սփյուռք, միգրանտներ, էթնիկ փոքրամասնությունների և այլ խմբերի), տնտեսական աճի միջոցով հասարակության յուրաքանչյուր անդամի բարգավաճման, նրանց սոցիալական հավասարության և բնակչության կենսամակարդակի բարելավման: Երրորդ հիմնական սկզբունքը հիմնված է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, էկոլոգիական անվտանգության ապահովման վրա՝ կայունություն և տնտեսական առաջընթացի ընթացքում բնական աղետներից խուսափելը:

Վրաստանի կառավարությունը մտադիր է հավատարիմ մնալ ժողովրդավարության զարգացմանը և ապահովել համընդհանուր եվրոպական արժեքների հաստատուն աջակցություն, ինչը հիմք կհանդիսանա ԵՄ-ին ավելի մոտ լինելու համար: Համապատասխանաբար, ԵՄ-ի և Վրաստանի միջև Ասոցացման համաձայնագրի արդյունավետ իրականացումը շատ կարևոր է (որի

[18] https://eeas.europa.eu

[19] Social-economic Development Strategy of Georgia “GEORGIA 2020”

անբաժանելի մասն է խորը և համապարփակ ազատ առևտրի գոտին), քանի որ դա ԵՄ-ի հետ քաղաքական ասոցիացիայի և աստիճանական տնտեսական ինտեգրացիայի նախապայման է: Ներկայիս զարգացման փուլում և գոյություն ունեցող իրականության համատեքստում Վրաստանի կառավարության նպատակն է իրականացնել տնտեսական քաղաքականություն, որը կապահովի երկրի կայուն զարգացումը: Տնտեսական քաղաքականությունը պետք է հիմնված լինի տնտեսական ազատության և սեփականության իրավունքի պահպանման սկզբունքների վրա: Միևնույն ժամանակ, պետությունը գործելու է որպես տնտեսական գործընթացներում արդարության երաշխավոր: Տնտեսական զարգացմանը նպաստելու համար Վրաստանի կառավարությունը ակտիվացնելու է տնտեսության կարգավորման մեխանիզմը, և ճգնաժամի դեպքում այն խթանելու շուկայում պահանջարկը:

Երկրի տնտեսական զարգացման ռազմավարությանն առաջնորդող սկզբունքն անհրաժեշտ պայմաններ է ստեղծում օպտիմալ, արդյունավետ և թափանցիկ կառավարությունում գործող ազատ մասնավոր հատվածի համար: Դա նշանակում է տնտեսության ստեղծում, որտեղ մասնավոր սեկտորը ազատ կլինի իր որոշումների մեջ, որտեղ գույքային իրավունքների գերակայությունը երաշխավորվելու է, և որտեղ մասնավոր հատվածը կլինի տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժը: Ազատ շուկայական հարաբերությունները կկարգավորվեն պետական կարգի օպտիմալ մոդելի հետ: Պետությունն ապահովելու է յուրաքանչյուր քաղաքացու բարգավաճումը:

Կառավարության տնտեսական քաղաքականությունը հասնելու է բարգավաճման՝ գործազրկության նվազեցման միջոցով: Միևնույն ժամանակ, իշխանությունները բնակչությանը կտրամադրեն հիմնական սոցիալական երաշխիքներ և կիատկացնեն նպատակային սոցիալական աջակցություն

հասարակության ամենաաղքատ շերտերին: Ընդհանուր բարգավաճման հասնելու ուղղակիորեն խոչընդոտող խնդիրների լուծումը Վրաստանի կառավարության առաջնահերթ խնդիրն է:

«Վրաստան 2020» սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունը արտացոլում է առաջնահերթությունները և խնդիրները, որոնք պետք է լուծվեն՝ երկարաժամկետ, կայուն և ընդգրկուն տնտեսական աճ ապահովելու համար: Միևնույն ժամանակ, տարածաշրջանային զարգացումը զգալի դեր ունի համապարփակ տնտեսական զարգացման հասնելու համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ համընդհանուր տնտեսական աճը հիմնված ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային զարգացման քաղաքականության արդյունավետ պլանավորման և իրականացման վրա, այն կախված է ուժեղ և մրցունակ շրջաններից:

Ռազմավարությունը սահմանում է երեք հիմնական խնդիրները հաղթահարելու առաջնահերթ միջոցները՝

1. Մասնավոր հատվածի մրցունակությունը՝
   - Ներդրումային և գործարար միջավայրի բարելավում
   - Նորարարություն և տեխնոլոգիաներ
   - Աջակցել արտահանման աճին
   - Ներդրումային ենթակառուցվածքի զարգացումը և երկրի տրանզիտային ներուժը լիարժեք իրագործելը
2. Մարդկային կապիտալի զարգացում՝
   - Զարգացնել երկրի աշխատուժը, որը համապատասխանում է աշխատաշուկայի պահանջներին
   - Սոցիալական ապահովության ցանցի խստացում
   - Մատչելի և որակյալ բուժօգնության ապահովում

3. Ֆինանսավորման հասանելիություն

- Ներդրումների մոբիլիզացիա
- Ֆինանսական միջնորդության զարգացում

*Մոնիտորինգ և գնահատում*

Պետք է ստեղծել համապատասխան մոնիտորինգի և գնահատման մեխանիզմներ, որոնք պետք են ռազմավարության իրականացման, (հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմավարությունը միշտ ենթակա է փոփոխության), ռազմավարության նպատակներին հասնելու և դրա ձեռքբերումները պատշաճ կերպով գնահատված լինելու համար:

Կառավարությունը տարեկան զեկույցներ կներկայացնի ռազմավարության մեջ ընդգրկված քաղաքականության իրականացման վերաբերյալ՝ ելնելով նախարարությունների կողմից պատրաստված զեկույցների վրա:

Կստացվեն նաև միջնաժամկետ և վերջնական հաշվետվություններ: Միջանկյալ զեկույցը կգնահատի ռազմավարության միջնաժամկետ իրականացումը (2017 թվականից) և վերջնական զեկույցը կգնահատի ռազմավարության արդյունքում ձեռք բերված վերջնական արդյունքները (2020 թ.):

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### 2.1 ՀՀ կայուն զարգացման նախադրյալները և հիմնախնդիրները

ՀՀ տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը գյուղատնտեսությունն է, որին բաժին է ընկնում ՀՆԱ-ի շուրջ 20%-ը: Հանրապետության գյուղատնտեսական արտադրությունում հիմնական հողօգտագործողները գյուղացիական տնտեսություններն են, որոնք տնօրինում են վարելահողերի ավելի քան 82.0, բազմամյա տնկարկների՝ 75.0, խոտհարքների՝ 50.0%-ը: Ներկայումս գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը (ավելի քան 98%), ապահովվում է մասնավոր հատվածի կողմից (Աղյուսակ 2):[20]

*Աղյուսակ 2. ՀՀ գյուղատնտեսության զարգացման միտումները նկարագրող հիմնական ցուցանիշները*[21]

| Ցուցանիշները | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. | 2015թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Գյուղատնտնեսության համախառն արտադրանքն ընթացիկ գներով, մլրդ դրամ | 636.7 | 795.0 | 841.5 | 919.1 | 993.5 | 1002.2 |
| Գյուղատնտնեսության արտադրանքի ծավալի ինդեքսը, % | 86.4 | 113.9 | 109.5 | 107.1 | 107.2 | 111.7 |

---

[20] Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. Կայուն զարգացման ռազմավարություն,

[21] http://minagro.am

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գյուղատնտնեսության համախառն ներքին արդյունքը (ավելացված արժեքը), մլրդ դրամ | 588.2 | 767.9 | 764.0 | 826.3 | 872.9 | x)* |
| Գյուղատնտնեսության մասնաբաժինը երկրի համախառն ներքին արդյունքի մեջ, % | 17.0 | 20.3 | 19.1 | 19.6 | 19.7 | x)* |

*2015 թվականի ցուցանիշը հրապարակված չէ:

Վերջին տարիներին Հայաստանում գյուղատնտեսությունը դրսևորում է զարգացման միտումներ, ինչի մասին վկայում է այն փաստը, որ գյուղատնտեսական համախառն ներքին արդյուքնը 2014թ. կազմել է 872.9 մլրդ. դրամ, ինչը 2013, 2012, 2011, 2010թթ. համեմատ ավել է:

Չնայած դրան, պետք է նշել, որ գյուղատնտեսության ներկայիս իրավիճակի վրա դեռևս մեծ է հետխորհրդային զարգացումների ազդեցությունը, քանի որ մասնավորեցման արդյուքնում հողերը բաժանվեցին ավելի քան 1.2 մլն կտորների և յուրաքանչյուր մասնավոր տնտեսությանը հասավ միջինը 1.4 հա հող, այդ թվում՝ 1.06 հա վարելահող: Անկախության հռչակումից հետո մասնավորեցման քաղաքականության իրագործման արդյունքում ՀՀ-ում ձևավորվեցին շուրջ 300 հազար մասնավոր գյուղացիական տնտեսություններ, որոնք իրենց գործունեությունը շարունակեցին գյուղատնտեսական սարքավորումների, ոռոգման համակարգի ու գյուղատնտեսական առաջատար փորձի և տեղեկանտվության սահմանափակ հասանելիության պայմաններում: Մասնավոր գյուղատնտեսության

զարգացմանը խոչընդոտող մյուս հանգամանքն այն է, որ մասնավոր տնտեսություններին հատկացված հողակտորները կտրտված էին և յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը նշված ծավալներով հողակտորներ հատկացվեցին միջինը երեք առանձին հողակտորներով: Հետխորհրդային զարգացումները առաջ բերեցին նաև գյուղմթերքի իրացվելիության հետ կապված բազմաթիվ հիմնախնդիրներ, քանի որ խորհրդային ժամանակաշրջանում գյուղատնտեսության և շուկայավարության համակարգերը հարմարեցված էին խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունների և իրացման շուկաների չափանիշներին:

Չնայած նշված հանգամանքներին՝ կոլեկտիվ ու պետական գյուղատնտեսության անկումից հետո տեղի ունեցավ ոչ գյուղատնտեսական աշխատուժի զգալի տոկոսային հարաբերակցության տեղափոխություն դեպի գյուղատնտեսական գործունեություն, քանի որ շատ տնային տնտեսությունների համար դա ստեղծված բարդությունները հաղթահարելու հիմնական հնարավորությունն էր: Արդյունքում գյուղատնտեսության ոլորտում մեծացավ զբաղվածությունը: 2016թ. դրությամբ գյուղական բնակչության թվաքանակը կազմել է 1.091.600 մարդ:

Գյուղատնտեսության կայուն զարգացման, հողերի և գյուղացիական տնտեսությունների խոշորացման հեռանկարները ու հնարավոր հետևանքները բացահայտելու համար իրականացնենք SWOT վերլուծություն (Գծապատկեր 4):

*Գծապատկեր 4. SWOT վերլուծություն*

| ՈՒժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|---|---|
| ❖ Բարելավված արտադրաիրացումային շղթայի առկայություն<br>❖ Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության առկայություն<br>❖ Արհեստական սերմնավորման, ինչպես նաև սահմանային բարձրարժեք կենդանիներ ներկրելու շնորհիվ անասունների գլխաքանակի ավելացում և որակի բարելավում<br>❖ Համեմատաբար ցածր ինքնարժեքով դիզելային վառելիքի ձեռքբերման հնարավորություն<br>❖ Համեմատաբար ցածր ինքնարժեքով սերմնացուի ձեռքբերման հնարավորություն<br>❖ Համեմատաբար ցածր տոկոսադրույքով գյուղատնտեսական վարկեր ստանալու հնարավորություն | ❖ Արտադրական հնարավորությունների սահմանափակություն<br>❖ Վարելահողերի նպատակային նշանակությամբ չօգտագործվելու բարձր մակարդակ<br>❖ Ինտենսիվացման ցածր մակարդակ ունեցող գյուղատնտեսության առկայություն<br>❖ Քիմիական պարարտանյութերի գերշահագործումը<br>❖ Գործող գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների սակավությունը<br>❖ Ոռոգման համակարգերի անկատարությունը և սակավությունը<br>❖ Հողակտորների մասնատվածությունը<br>❖ Հողերի մշակման լավագույն փորձի անտեսումը |
| Հնարավորություններ | Վտանգներ |

| | |
|---|---|
| ❖ Արտադրաիրացումային շղթայի կատարելագործում<br>❖ Գյուղատնտեսական սպասարկման բնագավառի զարգացում<br>❖ Իրացման շուկայի հասանելիության բարելավում<br>❖ Օրգանական գյուղատնտեսության զարգացում<br>❖ Աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ կոոպերատիվների մոտ մրցակցային առավելությունների առաջացում<br>❖ Մուտքը միջազգային շուկաներ<br>❖ Գյուղատնտեսության եկամտաբերության ավելացում<br>❖ Գյուղմթերքի մթերման հնարավորությունների ընդլայնում | ❖ Գյուղատնտեսական կոոպերատիվների և անհատ մեխանիզատորների միջև անհավասար մրցակցային պայմաններ<br>❖ Միջազգային մրցակցության ուժեղացում<br>❖ Տնտեսվարողների միջև հավասար մրցակցային պայմանների խախտում<br>❖ Գյուղատնտեսության մեջ ներգրավվածների թվաքանակի կրճատման հետևանքով գործազրկության և աղքատության ավելացում, սոցիալական անհավարության խորացում |

Անդրադառնալով ուժեղ կողմերին նշենք, որ գյուղատնտեսական հումք արտադրող և վերամշակող ընկերությունների միջև և փոքր ու միջին ձեռնարկության սուբյեկտների միջև աստիճանաբար ձևավորվում են պայմանագրային հարաբերություններ: Առևտրի համաշխարհային կազմակերպությանը, ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությանը, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամին և այլ միջազգային կազմակերպություններին անդամակցությունը կարևոր ազդակ է համաշխարհային

զարգացումների տիրույթում գտնվելու համար, որը արտաքին ներդրումների ներգրավման և արտաքին առևտրի զարգացման կարևոր նախադրյալ է:

Թույլ կողմերն են հանդիսանում գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը, գյուղատնտեսության և գյուղի սպասարկող ենթակառուցվածքների դանդաղ ձևավորումը, վարելահողերի շուրջ 33%-ի կամ 150 հազար հա նպատակային նշանակությամբ չօգտագործումը, ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը և կենդանիների մթերատվությունը: Վերջին տասնամյակում ավելի քան 10 անգամ կրճատվել է հանքային, գրեթե 18 անգամ՝ օրգանական պարարտանյութերի և շուրջ 10 անգամ բույսերի պաշտպանության միջոցների օգտագործումը:

Ներկայում գյուղատնտեսությունում մեքենայական աշխատանքները հիմնականում իրականացվում են տեխնիկայի սեփականատեր ֆիզիկական անձնաց միջոցով, որոնց գործունեությունը չի հարկվում: Սակայն արտադրատեխնիկական ծառայություններ իրականացնող գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման պարագայում առաջանալու են հարկային պարտավորություններ (օրինակ՝ գրանցված աշխատողների եկամտային հարկ), ինչի արդյունքնում կոոպերատիվները կհայտնվեն ոչ շահեկան իրավիճակում: Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությունը որոշ առավելություններից բացի պարունակում է նաև մի շարք մարտահրավերներ, մասնավորապես այն, որ դաշնակից երկրների գյուղատնտեսական արտադրանքը ցածր ինքնարժեքի շնորհիվ կարող է գրավել հայկական շուկան: Տնտեսությունների խոշորացման ու կոոպերացիայի խրախուսման քաղաքականության արդյունքը կարող է լինել օլիգոպոլիաների կամ անգամ մոնոպոլիաների ձևավորումն ու զարգացումը նաև այս ոլորտում: Պետական քաղաքականության որոշ փաստաթղթերը նման մտահոգությունների հիմքեր են տալիս, քանի որ նախատեսում են խոշոր

ներդրողների համար արտոնյալ պայմաններով հողերի վարձակալության կամ գնման իրավունք, այսպիսով, հարվածի տակ դնելով մանր և միջին գյուղացիական տնտեսությունների մեկնարկային ու զարգացման հնարավորությունները: «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարություն» [22] փաստաթղթում հստակ նշած է, որ պլանավորվում է գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատում և ավելցուկային աշխատուժի միայն մի մասի օգտագործում գյուղատնտեսության սպասարկման և ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում՝ վերապատրաստման միջոցով:

Ոռոգման ջրի ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործում կարևորվում է ներդրումային քաղաքականության դերը: Ավելին, համակարգի գանձումների ավելացումը, կորուստների կրճատումը, կառավարման բարելավման ճանապարհով ֆինանսական առողջացումը և ֆինանսական հոսքերի ծրագրի կատարումը, սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերին համապատասխան անխափան ու անվտանգ շահագործումն իրատեսական կարող են լինել միայն բավարար ներդրումների իրականացման պայմաններում: Այդ գործում վճռորոշ դեր ունեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային և դրամաշնորհային միջոցները, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեից ներգրավված միջոցները, որոնց նպատակային և արդյունավետ օգտագործման ապահովումը դարձել է կարևորագույն նախապայման:

Ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2013 թվականի, բարեփոխումների ինդեքսը կազմել է 2.67, 2017 թվականին կազմելու է 3.67, իսկ 2025 թվականին՝ 4.33:

---

[22] Հայաստանի Հանրապետության գյուղի եվ գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը

Որպես բազային տարի վերցվել է 2013 թվականը: ՋՕԸ-ների կողմից սպասարկվող ընդհանուր ոռոգելի հողատարածքները բազային տարում (2012) եղել են 130 հազար հա, 2025 թվականին լինելու են 138 հազար հա (Աղյուսակ 3):

*Աղյուսակ 3. Ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշները*[23]

| **Ցուցանիշ** | **Բազային տարի** | **2017** | **2021** | **2025** |
|---|---|---|---|---|
| Բարեփոխումների ինդեքս (ՎԶԵԲ-ի կողմից հրապարակվող ցուցանիշ. Transition Indicator) | 2.67 (2013) | 3.67 | 4.0 | 4.33 |
| ՋՕԸ-ների կողմից սպասարկվող ոռոգելի հողատարածքներ, հազար հա | 130 (2012) | 132.4 | 135 | 138 |
| Պետական կապիտալ ներդրումների մակարդակ, %՝ ՀՆԱ նկատմամբ 0 | 0.18 (2012) | 0.3 | 0.3 | 0.3 |
| Սակագնի ընթացիկ ծախսածածկման (հաշվեգրային) մակարդակ, % | 46 (2012) | 100 | 120 | 120 |

Ինչ վերաբերում է արտերկրյա ներդրումային ծրագրերին ու դրանց բարեփոխումներին, պետք է նշել, որ Համաշխարհային բանկի կողմից իրականացվող Արմավիրի ու Թալինի մայր ջրանցքների առաջնահերթ վերանորոգմանն ուղղված ներդրումները կազմում են 36.0 մլն ԱՄՆ դոլար, որից 6.0 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարության համաֆինանսական գումարն է:

[23] Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր

Ոռոգման ջրամատակարարման կառավարումն իրականացնում է ջրային համակարգերի կառավարման մարմինը կամ ջրօգտագործողների ընկերությունը «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով [24]: Ոռոգման համակարգում խոշոր ջրամբարները, մայրուղային ու միջհամայնքային ջրատարները հանդիսանում են ոռոգում-ջրառ ուղղվածություն ունեցող ընկերությունների սեփականությունը, որոնց բաժնետոմսերը 100%ով պատկանում են պետությանը: Ոռոգման ջրի երկրորդական բաշխումն իրականացվում է ՋՕԸ-երի կողմից, որոնք հանդիսանում են ջրօգտագործողների կողմից ստեղծված շահույթ չհետապնդող կազմակերպություններ: ՋՕԸ-երը ստեղծվել են ջրօգտագործողներին ոռոգման ջրով ապահովելու նպատակով և իրականացնում են միայն ոռոգման համակարգի շահագործման ու պահպանման գործառույթներ:

Չնայած ջրօգտագործողների ընկերությունները իրավաբանորեն արդեն ձևավորվել են, սակայն նրանք գտնվում են ձևավորման վաղ շրջանում: Բացակայում է նրանց անդամների ակտիվ մասնակցությունը: Ոռոգման ենթակառուցվածքների քայքայված վիճակը ֆինանսական և տեխնիկական բազմաթիվ խնդիրներ են առաջացնում նրանց համար, որոնց հաղթահարումը սեփական ուժերից վեր է: Կառավարման մարմիններն իրենց պատրաստվածությամբ (վարչական խորհուրդ, գործադիր մարմիններ, վերստուգիչ և վեճեր լուծող հանձնաժողովներ) դեռ չեն համապատասխանում ջրօգտագործողների ընկերությունների զարգացման պահանջներին:

ՀՀ տնտեսության մեջ դեռևս խորհրդային տարիներից մեծ դերակատարում է ունեցել արդյունաբերության ճյուղը: Ներկայումս էլ ճյուղը պահպանում է իր

---

[24] «Ջրօգտագործողների ընկերությունների եվ ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենք

դերակատարումը, ինչը արտահայտվում է նրանով, որ ՀՆԱ-ի կառուցվածքում ճյուղի տեսակարար կշիռը տատանվում է 20%-ի շրջակայքում: Հայաստանի արդյունաբերությունը իր մեջ ներառել և ներկայումս ներառում է տարբեր ենթաճյուղեր, մասնավորապես՝ մեքենաշինությունը, տեքստիլ ու հագուստի արտադրությունը, սննդի ու խմիչքների արտադրությունը, մետաղական հանքաքարի արդյունահանումը ու մշակումը, քիմիական արդյունաբերությունը, ցեմենտի և այլ ոչ մետաղական հանքանյութերի արտադրությունը, դեղերի արտադրությունը և այլն: Հարկ է նշել, որ վերջին տարիներին նաև ստեղծվել են նաև ձեռնարկություններ, որոնք թողարկում են արտադրանք որը նախկինում չի եղել, մասնավորապես ամրանների արտադրությունը, խողովակների արտադրությունը և այլն:

Արդյունաբերության զարգացման տեսանկյունից նախանշվում է հետևյալ խնդիրները՝

- Արտադրողականության ցածր մակարդակ
- Արտադրվող արտադրանքի մրցունակության ոչ բավարար մակարդակ,
- Արտահանման կարողությունների ցածր մակարդակ,
- Արտահանման տեսական և ուղղությունների դիվերսիֆիկացման ոչ բավարար մակարդակ,
- Արդյունաբերական արտադրանքի ներկայացվածության ցածր մակարդակ ներքին և արտաքին շուկաներում,
- Արդյունաբերականձեռնարկություններիմիջևհամագործակցությանցած րմակարդակ,
- Արդյունաբերական ձեռնարկությունների կադրային (մասնագիտական) և կառավարման ոչ բավարար մակարդակ,

- Իրավաօրենսդրական և վարչարաչական խոչնդոտների առկայություն և անկայունություն,
- Մրցակցության անհավասար պայմանների առկայություն,
- Տեխնոլոգիական վերազինման անհրաժեշտություն

*Սոցիալական ոլորտի հիմնախնդիրները ՀՀ-ում*

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը լրջորեն վտանգեց ՀՀ-ում ճգնաժամին նախորդող տարիներին ձեռք բերված տնտեսական աճը և աղքատության կրճատումը: Վերջին տարիների տնտեսական աճը որոշ դրական ազդեցություն է ունեցել երկրի աղքատության մակարդակի վրա: Աղքատությունը Հայաստանում գնահատվում է 1996 թվականից սկսած: Աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին ընդհանուր գծից, շատ աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության ստորին ընդհանուր գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից: 2015 թվականին աղքատության մակարդակը կազմել է 29.8%՝ 2014 թվականի համեմատ արձանագրելով աղքատության մակարդակի նվազում միայն 0.2 տոկոսային կետով: Սա նշանակում է, որ երկրի տաս բնակչից մոտ երեքն ամսական 41 698 ՀՀ դրամ վերին աղքատության գծից ցածր են գտնվել: Ստորև բերված գծապատկերը ցույց է տալիս 2009 թվականի մեթոդաբանությունից բխող երեք աղքատության գծերը՝ 2015 թվականի գներով (Գծապատկեր 5):

*Գծապատկեր 5. Աղքատության մակարդակը և աղքատության գծերը 2015 թվականին*[25]




Աղքատության խորությունը հաշվարկվում է աղքատ բնակչության հաշվով և ցույց է տալիս աղքատության պակասուրդը, այսինքն՝ թե որքանով է աղքատների միջին եկամուտը 1 (կամ սպառումը) ցածր աղքատության գծից: Աղքատության սրությունը արտացոլում է աղքատների միջև եղած սպառման անհավասարությունը: Այն արտացոլում է այն փաստը, որ որոշ աղքատների սպառումը շատ է հեռու աղքատության գծից, իսկ որոշ աղքատներինը՝ շատ մոտ: Աղքատության խորությունը 2015 թվականի համար գնահատվել է 4.7%, իսկ աղքատության սրությունը՝ 1.3% (Գծապատկեր 6):

[25] ՏՏԿԱՀ 2008 և 2015թթ

*Գծապատկեր 6. Աղքատության ցուցանիշներն ըստ տարածաշրջանների 2008 և 2015թթ. (տոկոսներով)*[26]




**Աղբյուրը.** *ՏՏԿԱՀ 2008 և 2015թթ.*

2004-2015թթ. ընթացքում աղքատության մակարդակը նվազել է 44%-ով.մոտ 54%-ից՝ 30%-ի: Ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է 55%-ով՝ 2004թ.-ի 4.4%-ի համեմատ և 2015 թվականին կազմել է 2.0 %:

Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակը 2015 թվականին բարձր է տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունների աղքատության մակարդակից (32.1%՝ 28.9%-ի դիմաց) (Գծապատկեր 7):

[26] ՏՏԿԱՀ 2008 և 2015թթ

*Գծապատկեր 7. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության գլխավորի սեռի, ըստ առկա բնակչության, 2008 և 2015թթ. (տոկոսներով)*[27]




Բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար աղքատ լինելու հավանականությունն ավելի փոքր է: Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում աղքատության մակարդակն ամենացածրն է՝ այն մոտ 1.8 անգամ ցածր է 16-ից բարձր տարիքի բնակչության միջին հանրապետական աղքատության մակարդակից, և համապատասխան 3.5 և 2.8 անգամ ցածր, քան տարրական և ցածր, ինչպես նաև թերի միջնակարգ կրթություն ունեցողների աղքատության մակարդակը: Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում այլ կրթության մակարդակ ունեցողների համեմատ ծայրահեղ աղքատության մակարդակն ամենացածրն է ինչպես 2015 թվականին, այնպես էլ 2008 թվականին: 55 միջնակարգ ընդհանուր կրթությամբ անձինք աղքատ բնակչության շրջանում կազմում են ամենամեծ խումբը (51%): 16-ից բարձր տարիքի բնակչության կազմում, այս խումբը դժվարությունների է հանդիպում աշխատանք փնտրելիս (Գծապատկեր 8):

[27] ՏՏԿԱՀ 2008 և 2015թթ

*Գծապատկեր 8. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 2008 և 2015թթ. (16 և բարձր տարիքի բնակչություն) (տոկոսներով)*[28]




Միգրացիան անհատների կամ սոցիալական խմբերի մշտական բնակավայրի փոփոխության գործընթաց է, որն արտահայտվում է նույն երկրի այլ տարածաշրջան (ներքին), կամ այլ երկիր (արտաքին) տեղափոխման ձևով: Ըստ ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, 2015թ. Աշխարհում մոտ 244 միլիոն մարդ՝ աշխարհի բնակչության 3.3%-ը, ապրել է իր ծննդավայր երկրից դուրս: ՄԱԿ-ի տվյալների հիման վրա՝ ամերիկյան «Փյու հետազոտական կենտրոնը» եզրակացնում է, որ Հայաստանում ծնվածների 25%-ը՝մոտ 937 հազար մարդ, 2015թ. ապրել է Հայաստանի սահմաններից դուրս: Այս ցուցանիշով Հայաստանը աշխարհում 4-րդ տեղում է՝ Բոսնիա և Հերցեգովինայից, Ալբանիայից և Ջամայկայից հետո: Հայաստանից մեկնած միգրանտների գերակշռող մասը՝ մոտ 56%-ը, հանգրվանել է Ռուսաստանի Դաշնությունում: Եվրոպական երկրներին բաժին է ընկնում միգրանտների մոտ 15%-ը, ԱՄՆ-ին և Կանադային՝ 9.5%-ը, իսկ 19.5%-ը բաժին է ընկել այլ երկրներին *(Գծապատկեր 9)*:

[28] http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf

*Գծապատկեր 9. ՀՀ քաղաքացիների ելքի ու մուտքի տարբերություն 2012-2016 թթ.*[29]




Արտագաղթի միտումները նշված ուղղություններով առկա է նաև Հայաստանի երիտասարդ սերնդի մոտ, որոնց շրջանում կատարված հարցումների համաձայն՝ շուրջ 27%-ը հակված է ներքին միգրացիայի, իսկ 30%-ը պատրաստվում է ընդհանրապես լքել Հայաստանը: Նման որոշում կայացնելու համար երիտասարդները նշում են հիմնական 3 պատճառ՝ կյանքի որակը բարձրացնելու ցանկություն, աշխատանքի անցնելու ավելի լավ հնարավորություն, ավելի լավ կրթություն ստանալու ցանկություն: Պոտենցիալ միգրանտների մեծ մասը՝ 36.3%-ը, նախընտրում է տեղափոխվել Ռուսաստան: Ցանկալի ուղղություններն են նաև ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Անգլիան, Գերմանիան: Արտագաղթել ցանկացողները նշում են հիմնականում այն երկրները, որտեղ կա ձևավորված հայկական համայնք: Միգրացիոն հոսքերի վրա դեռևս մեծ ազդեցություն չի ունենում Եվրասիական տնտեսական միությանն (ԵԱՏՄ) անդամակցելը և դրա շրջանակներում աշխատանքային միգրացիան կարգավորող միջազգային համաձայնագրերի մշակման գործընթացը: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հրապարակված զեկույցի համաձայն՝ 2015 թ. Բելառուսում Հայաստանից մեկնած աշխատանքային միգրանտների թիվը կազմել է ընդամենը 383 մարդ, ինչը սակայն

[29] http://www.armstat.am/

220–ով ավել էր 2014 թ. ցուցանիշներից: Մինչդեռ Ռուսաստանի դեպքում, թեպետ այդ նույն ցուցանիշը նվազել է 2.3 անգամ, բայց անգամ այս դեպքում թիվը բավական մտահոգիչ է՝ շուրջ 125.000 մարդ: Պաշտոնական վիճակագրության համաձայն, վերջին երկու տարիների ընթացքում 2015-2017 թթ. դրությամբ Հայաստանի մշտական բնակչությունը նվազել է 0,8%-ով, կամ 24.100 բնակչով՝ 2017 թ.տարեսկզբին կազմելով 2 մլն 986 հազար 500 մարդ:[30]

Կրթություն: Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, ուստի այս ոլորտի զարգացումը երկրի զարգացման գերակայություններից մեկն է: Առաջնային խնդիրներ են կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, դրանց համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, մատչելի/հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար: Այդ նպատակներին հասնելու համար երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում:

Այսօր ՀՀ-ում շարունակվում է կայուն կերպով զարգանալ բարձրագույն կրթական համակարգը, սակայն զարգացման ներկայիս տեմպերը և արդյունքները բավարար չեն մրցունակ տնտեսություն ստեղծելու համար: Պետք է նշենք այն հանգամանքը, որ ուսանողների թվաքանակի կրճատմամբ, կորցնում ենք մեր կարողությունը կամ այլ կերպ ասած «ռեսուրսները»: Իսկ մյուս խնդիրը ֆինանսական միջոցներն են. Ինչպես գիտենք բուհերի եկամուտների մեծ մասը ձևավորվում են ուսման վարձավճարներից: Սակայն ուսանողների թվաքանակի անընդհատ կրճատումը լուրջ խնդիրներ է առաջացնում նաև այստեղ: Չնայած այն հանգամանքին, որ պետությունը միջոցներ է հատկացնում գիտակրթական

[30] http://ampop.am/migration-in-armenia/#imageclose-2498

համակարգի զարգացմանը, սակայն այնուհանդերձ պետք է արձանագրել, որ այս փուլում, միջոցները բավարար չեն մրցունակ կրթություն մատուցելու համար:

Զբոսաշրջություն: Հանրապետության մի շարք տարածաշրջաններում առկա են նախադրյալներ զբոսաշրջության համար: Այս առումով, հատկապես առանձնանում են Լոռու, Տավուշի, Վայոց ձորի մարզերը:

Զբոսաշրջության զարգացման մեծ ներուժ ունի Լոռու մարզը: Այն գրավիչ տարածք է զանազան հետաքրքրության զբոսաշրջիկների համար: Շնորհիվ իր բարենպաստ բնակլիմայական պայմանների՝ մարզի տարածքն աչքի է ընկնում իր ռեկրեացիոն ռեսուրսներով՝ սաղարթախիտ անտառներ, հանքային ջրեր, 1000-ից ավելի պատմամշակութային հուշարձաններ և այլն:

Զբոսաշրջության զարգացման համար նշանակալի նախադրյալներ կան Տավուշի մարզում: Իր տեսակի մեջ եզակի է Դիլիջանի ազգային պարկը, մարզում կան նաև բուսական աշխարհի պահպանության այլ օբյեկտներ, մասնավորապես՝ Իջևանի և Բերդի դենդրոպարկերը: Մարզը հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով, բազմաբնույթ, մրցունակ, զբոսաշրջային ծառայություններ մատուցելու մեծ ներուժով:

Զբոսաշրջությունը Վայոց ձորի մարզում ունի ոլորտի զարգացման մի շարք նախապայմաններ: Դրանք են գիտական և ճանաչողական մեծ հետաքրքրություն ունեցող հնատեղիները, վանքերը, բնական տեսարժան վայրերը: Նախադրյալ է նաև Հայաստանը Իրանին կապող միջպետական մայրուղին, որը անցնում է Վայոց ձորի տարածքով, սա կարող է խթան դառնալ Իրանից զբոսաշրջիկներ ներգրավելու համար: Պետք է օգտագործել նաև Ջերմուկ առողջարանի հնարավորությունները: Մարզը հայտնի է բարձր որակի խմելու ջրի հարուստ պաշարներով, ինչպես նաև գինեգործության մշակույթով:

Զբոսաշրջային ներուժ ունեցող մարզերից է Սյունիքը: Մարզի զբոսաշրջային ներուժը ներկայացված է Սյունիքի հարուստ, գեղատեսիլ և առողջարար բնությամբ, անտառներով, լեռներով, բնական հուշարձաններով, պատմամշակութային արժեքներով, բուժիչ ջրաղբյուրներով և ենթակառուցվածքներով, աշխարհում ամենաերկար ճոպանուղիներից մեկի առկայությամբ:

Զբոսաշրջության զարգացման նախադրյալներ կան նաև Արագածոտնի մարզի Աշտարակի տարածաշրջանում՝ բնակլիմայական բարենպաստ պայմաններ, հնավայրեր պատմամշակութային կոթողներ, թանգարաններ և այլն:

### *2.2 ՀՀ կայուն զարգացման ծրագիրը և նպատակները*

ՀՀ Կառավարությունը վերանայել է 2008 թվականին ընդունված «Կայուն զարգացման ծրագիրը» (ԿԶԾ)՝ հաշվի առնելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված զարգացումներն ու նոր իրողությունները:

Վերանայված ծրագիրը[31] նպատակ ունի հետ ճգնաժամային ռազմավարական համակարգված շրջանակ ապահովել Կառավարության քաղաքականությունների ձևավորման համար: Ծրագիրը Կառավարությանը հնարավորություն է ընձեռելու միավորելու ազգային կարողությունները երկրի երկարաժամկետ զարգացման տեսլականի ձևավորման շուրջ՝ հաշվի առնելով կուտակված փորձը, առկա պայմաններն ու գլոբալ զարգացման մարտահրավերները:

Ծրագրի հեռանկարը մինչև 2025 թվականն է: Փաստաթղթում նախանշված են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գերակայությունների ընդհանրական համախումբը, նպատակները, զարգացման հիմնական խոչընդոտները և սահմանափակումները, գերակա նպատակներին հասնելու համար անհրաժեշտ առանցքային բարեփոխումներն ու քաղաքականության գործիքները, ինչպես նաև հիմնական ռիսկերը:

Կառավարության երկարաժամկետ զարգացման ռազմավարության գերխնդիրը բնակչության նյութական և ոչ նյութական բարեկեցության շարունակական ավելացումն է: Երկրի զարգացման ներկա փուլի

[31] ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր

առանձնահատկություններից ելնելով՝ որակյալ և բարձր արտադրողականություն ապահովող աշխատատեղերի ստեղծման ճանապարհով զբաղվածության ընդլայնումը հռչակված է որպես ծրագրի հիմնական նպատակ:

ՀՀ Կառավարության գործողություններն ուղղված են լինելու յուրաքանչյուրի համար սեփական ջանքերով աշխատանքին համապատասխան արդարացի վաստակ ստանալու հնարավորությունների ստեղծմանը: Ծրագրի իրականացումը երաշխավորելու է հասարակության յուրաքանչյուր անդամի՝ սեփական պետության կողմից պաշտպանված և սոցիալապես ապահովված լինելու անվերապահ ընկալման ամրապնդումը: ՀՀ քաղաքացու անձնական զարգացմանը, մասնագիտական աճին, նրա քաղաքացիական դաստիարակությանն ու մշակույթի մակարդակի ավելացմանն ուղղված գործողությունները լինելու են Կառավարության ուշադրության կենտրոնում՝ յուրաքանչյուրի մոտ ամրապնդելով հայրենիքում ապրելու նախընտրելիությունը:

Ծրագիրը առանձին ոլորտներին առնչվող մանրամասներ չի ներառում, սակայն բավարար ուղենիշեր է ապահովում ոլորտային ծրագրերի մշակման ժամանակ ընդհանուր տրամաբանությամբ առաջնորդվելու համար: Միաժամանակ, փաստաթղթի բաժիններում և ենթաբաժիններում ոլորտային քաղաքականությունները համաչափ մանրամասնությամբ և ընդգրկունությամբ չեն ներկայացված, ինչը հիմնականում պայմանավորված է առանձին ոլորտների յուրահատկություններով: Փաստաթուղթը, այդ առումով, պետք է դիտարկել արդեն իսկ հաստատված ոլորտային ծրագրերի համատեքստում՝ կախված դրանց ընդունման ժամկետներից, ընդգրկումից և ծրագրված ժամկետային հորիզոնից այնքանով, որքանով դրանք համահունչ են ներկայացված գերակայություններին:

Ծրագրի հիմնական առաքելություններից է առաջիկա տարիներին ռազմավարական ուղենիշեր ապահովելը միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ՄԺԾԾ) մշակման համար:

Ծրագրային ժամանակահատվածում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առումով նշանակալի դեր է վերագրվում միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներին: Այս առումով, առաջնային կարևորություն է տրվելու Մաքսային միությանը ՀՀ անդամակցությանն ու միության անդամ երկրների հետ տնտեսական կապերի հետագա զարգացմանն ու խորացմանը: Միաժամանակ, հիմք ընդունելով ընդհանուր արժեքները, շարունակվելու է ներդաշնակ համագործակցությունը Եվրոպական միության հետ՝ փոխադարձ հետաքրքրություններ կայացնող բոլոր ուղղություններով:

Ինչպես Կայուն զարգացման ծրագրի պարագայում, սույն ծրագիրը ևս մշակվել է քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ: Որդեգրած մոտեցումը ենթադրում է նաև ծրագրի իրականացման ժամանակ սոցիալական գործընկերության և մասնակցային մոնիտորինգի հնարավորության ապահովում և խորացում: Համաձայն ՀՀ Կառավարության և Քաղաքացիական համագործակցության ցանցի (ՔՀՑ) միջև 2013 թվականի փետրվարին ստորագրված հուշագրի, ՔՀՑ-ը ներկայացնելու է հանրության առավել լայն շերտերի շահերը ծրագրի իրականացման, մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում վերանայման գործընթացներում: Ծրագրի արդյունավետ իրագործման առումով կարևորվում է ՔՀՑ-ի ներգրավվածությունը պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող քաղաքականության մշակման, որոշումների կայացման գնահատման, մոնիտորինգի և վերահսկման աշխատանքներին: Այդ նպատակով պետությունը սատարելու է քաղաքացիական հասարակության մասնակցային ինստիտուտի զարգացմանն ուղղված

միջոցառումները և դրա կանոնակարգմանն ուղղված քայլերը: Մասնակցային գործընթացի շրջանակներում ՔՀՑ ինքնակարգավորման սկզբունքով ձևավորելու է կառուցվածքային միավորներ և սահմանելու է դրանց լիազորություններն ու պարտականությունները, իսկ ծրագրի իրականացման համար պատասխանատու պետական կառավարման մարմինները ապահովելու են համագործակցային և թափանցիկ միջավայր:

Կայուն զարգացման ծրագրի հիմնական նպատակները և գերակայությունները.

«Կայուն զարգացման ծրագրում» (ԿԶԾ) առանձնացվել էին երեք խումբ նպատակներ՝

1) 2008-2021 թթ. Ընթացքում նյութական աղքատության կրճատումը մինչև այն աստիճանը, որ աղքատությունը դադարի երկրի տնտեսական զարգացման հիմնահարց լինելուց, իսկ ծայրահեղ աղքատությունը ընդհանրապես վերացվի որպես սոցիալապես նշանակալի երևույթ:

2) Մարդկային աղքատության հաղթահարումը և մարդկային առաջանցիկ զարգացման ապահովումը, որի արդյունքում երկիրը միքանի տարվա ընթացքում միջին մարդկային զարգացում ունեցող երկրների խմբից պետք է տեղափոխվեր բարձր մարդկային զարգացում ունեցող երկրների խումբ[32] :

3) Տնտեսական զարգացման անհամաչափությունների զսպումը և հետ ընկնող տարածքների առաջանցիկ աճի ապահովումը՝ համապատասխան տարածքային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով:

Նշված նպատակներին հասնելու համար ԿԶԾ-ում նախատեսված էին երեք խումբ գերակա ռազմավարություններ.

[32] Ըստ ՄԱԶԾ (UNDP) մարդկային զարգացման համաթվի, որը հրապարակվում է Human Development Report տարեկան զեկույցներում:

1) կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովմանն ուղղված տնտեսական քաղաքականություն,

2) բնակչության խոցելի խմբերին (ներառյալ՝ աղքատները) ուղղված ակտիվ սոցիալական և եկամտային քաղաքականություն,

3) երկրի կառավարման համակարգի արդիականացում, ներառյալ՝ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի առաջանցիկ աճի ապահովումը:

ԿԶԾ-ի տնտեսական քաղաքականության գերակայությունները նպատակաուղղված էին արագ, կայուն և աղքատության հաղթահարմանը միտված տնտեսական աճի ապահովմանը և բաժանվում էին երկու խմբի՝ «շրջանակային» և «ուղղակի» կամ ներդրումային քաղաքականություններ:

«Շրջանակային» քաղաքականությունը այնպիսի քաղաքականությունն է, որն ընդհանուր է կարգավորվող ոլորտի բոլոր մասնակիցների համար և որը չի ենթադրում պետական ֆինանսական ռեսուրսների օգտագործում քաղաքականության նպատակներին հասնելու համար:

ԿԶԾ-ի տնտեսական քաղաքականության հիմքում ընկած մոտեցումը ենթադրում էր, որ արագ և կայուն տնտեսական աճի ապահովման համար որոշիչ դեր ունեն այդ աճի միջավայրի (մասնավորապես՝ գործարար և ներդրումային միջավայրերի) որակը, շուկա մուտք գործելու ազատությունը, տնտեսվարող սուբյեկտների մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կանխարգելումը և մրցակցության խրախուսումը, ազատական արտաքին և կայուն ներքին մակրոտնտեսական քաղաքականությունը:

«Շրջանակային» տնտեսական քաղաքականության գերակայություններից էին նաև նոր, գիտելիքների վրա հիմնված տնտեսության հիմնական տարրերի և ինստիտուտների ստեղծումն ու ներդրումը, ինչպես նաև երկրի ինստիտուցիոնալ

արդիականացումը, որոնք նույնպես կարելի է համարել այն միջավայրը, որում իրականացվում է տնտեսական աճը:

«Ուղղակի» կամ ներդրումային քաղաքականությունը ենթադրում է պետության ֆինանսական միջամտությունը քաղաքականության նպատակներին հասնելու համար, և այն կրում է միջամտողական (ինտերվենցիոնիստական) բնույթ:

ԿԶԾ-ի «ուղղակի» տնտեսական քաղաքականության նպատակն էր պետական ֆինանսական ռեսուրսների հաշվին կամ մասնակցությամբ իրականացնել միայն այն ներդրումները, որոնք ներկայումս և մոտ ապագայում չեն կարող իրականացվել տնտեսության մասնավոր հատվածի կողմից, բայց որոնք անհրաժեշտ են տնտեսական աճի ապահովման համար և նախատեսված են տնտեսության «նեղ» տեղերը վերացնելու կամ դրանց «թողունակությունը» բարձրացնելու համար: Այսինքն՝ «ուղղակի» քաղաքականության հիմնական գերակայությունները պետական ներդրումներն էին արտադրական ենթակառուցվածքի ոլորտներում:

«Ուղղակի» քաղաքականության այլ գերակայություն էին «Պետական-մասնավոր գործընկերության» շրջանակներում իրականացվելիք այն ներդրումները, որոնք անհրաժեշտ կհամարվեն օտարերկրյա ներդրումների ներգրավման, ինչպես նաև զարգացման տարածքային անհամաչափությունների մեղմման նպատակով:

Նպատակային սոցիալական քաղաքականությունը, որը ԿԶԾ-ի երկրորդ ռազմավարական գերակայությունն էր, իրենից ներկայացնում էր «ուղղակի» և «շրջանակային» քաղաքականությունների խառնուրդ, որտեղ «ուղղակի» քաղաքականությունը ներկայացվում էր համապատասխան ոլորտի պետական ֆինանսավորման ծավալների առաջանցիկ աճով, իսկ «շրջանակային» քաղաքականությունը ուղղված էր սոցիալական ոլորտի կողմից բնակչությանը

տրամադրվող ծառայությունների որակի, պայմանների և մատչելիության աստիճանի էական բարելավմանը:

Ակտիվ սոցիալական քաղաքականությունը ծածկում էր հետևյալ ոլորտները՝

1) Սոցիալական աջակցություն, որտեղ գերակայություն էին դիտվում ընտանեկան նպաստները՝ որպես ծայրահեղ աղքատության վերացման հիմնական գործիք: «Շրջանակային» քաղաքականության հիմնական նպատակը եղել է ընտանեկան նպաստների հասցեականության աստիճանի անընդհատ աճը, իսկ «ուղղակիինը»՝դրանց հասցնելը աղքատության շեմի մոտ 70 տոկոսին:

2) Սոցիալական ապահովագրություն, որտեղ «ուղղակի» քաղաքականության գերակայությունն էր կենսաթոշակների չափերի կտրուկ աճը, դրանց հավասարեցումը նվազագույն սպառողական զամբյուղին և հետագա առաջանցիկ աճը, իսկ «շրջանակային» քաղաքականությունը պետք է ուղղված լիներ աշխատանքային կենսաթոշակների տեղափոխմանը բյուջե, ինչպես նաև կուտակային կենսաթոշակային համակարգի հիմքերի ստեղծմանը և դրա քայլ առ քայլ ներդրմանը:

3) Սոցիալական ենթակառուցվածքներ, որտեղ «ուղղակի» քաղաքականության գերակայությունն էր հիմնարար սոցիալական ծառայությունների (ներառյալ՝ կրթության և առողջապահության) պետական ֆինանսավորման ծավալների առաջանցիկ աճը, իսկ «շրջանակային» քաղաքականության հիմնական գերակայությունն էր դրանց մատչելիության, արդյունավետության և տրամադրվող ծառայությունների որակի բարձրացումը՝ այդ ոլորտների համալիր շարունակական բարեփոխումների միջոցով:

4) Եկամտային քաղաքականություն, որտեղ «ուղղակի» քաղաքականությունը ուղղված պետք է լիներ առաջնային եկամուտների առաջանցիկ աճի ապահովմանը բյուջետային և սոցիալական

ենթակառուցվածքների ոլորտներում: «Շրջանակային» քաղաքականության հիմնական գերակայությունն էր նվազագույն աշխատավարձի սահմանման օգտագործումը որպես «աշխատող աղքատների» թվաքանակի էական կրճատման և այդ երևույթի հետագա վերացման հիմնական գործիքներից մեկը:

Պետական կառավարման ոլորտի արդյունավետության բարձրացումը կառավարման բոլոր մակարդակներում, որը ԿԶԾ-ի երրորդ ռազմավարական գերակայությունն էր, նույնպես «ուղղակի» և «շրջանակային» քաղաքականությունների խառնուրդ էր, որտեղ «ուղղակի» քաղաքականությունը արտահայտվում էր որպես պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսների ծավալների անընդհատ աճ, իսկ «շրջանակայինը» ներկայացնում էր այն միջոցառումների նկարագրությունը և ցանկը, որի արդյունքում պետք է ապահովվեր այդ աճը, ինչպես նաև էականորեն բարձրացվեր պետության կողմից տրամադրվող ծառայությունների որակը, արդյունավետությունը, մատչելիությունը և քաղաքացիներին հաշվետու լինելու աստիճանը:

Պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսների ծավալների աճն ապահովող «շրջանակային» քաղաքականություն[33] նպատակաուղղված պետք է լիներ հարկային և մաքսային վարչարարության էական բարելավմանը և ստվերային տնտեսության բացահայտմանն ու կրճատմանը:

Պետական ծախսերի «շրջանակային» քաղաքականությունը նպատակաուղղված էր դրանց բաշխողական և տեխնիկական արդյունավետության աճի ապահովմանը, մասնավորապես՝ արդյունքների վրա հիմնված և ծրագրային բյուջետավորմանը անցնելու միջոցով:

[33] Ենթադրվում էր, որ պետության տնօրինության տակ գտնվող ռեսուրսների ծավալների առաջանցիկ աճը (տարեկան ՀՆԱ-ի նկատմամբ 0.3 – 0.4 տոկոսային կետի սահմաններում) պետք է ապահովվեր առանց հարկային բեռի ավելացման:

Պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը ուղղված «շրջանակային» քաղաքականության գերակայություններ էին համարվում արդյունավետ հակակոռուպցիոն ռազմավարության մշակումը և ներդնումը, պետության կողմից ընդունվող որոշումների հնարավորինս թափանցիկության և դրանց մշակմանը քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցության ապահովումը, մասնավորապես՝ էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական համակարգերի ներդրման միջոցով՝ կառավարման բոլոր մակարդակներում:

## ԳԼՈՒԽ 3. ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Կայուն զարգացման ծրագրի իրականացման հիմնական չափորոշիչները և արդյունքները ՀՀ-ում

Սոցիալ-տնտեսական և բնապահպանական համակարգերի կայուն զարգացումը, որին անդրադարձել եմ սույն աշխատանքի առաջին գլխում, լայն իմաստով մեկնաբանվում է որպես ներկա և ապագա սերունդների պահանջների բավարարման նպատակով տնտեսական, սոցիալական և բնապահպանական ենթահամակարգերի ներդաշնակեցում, հաշվեկշռված զարգացում: Այս համատեքստում, կայուն զարգացումը, ապահովելով սոցիալական տնտեսական և բնապահպանական կայունություն, արտադրողական ուժերի պլանաչափ զարգացում, միաժամանակ, միտված է բարելավելու մարդու նյութական բարեկեցությունն ինչպես հոգևոր զարգացման և սոցիալական ինքնիրացմանն անհրաժեշտ պայմանների ապահովմամբ, այնպես էլ  շրջակա միջավայրի պահպանմամբ և ռեսուրսների ռացիոնալ օգտագործմամբ՝ առանց վնասելու ապագա սերունդների շահերը: Դրանում որոշիչ նշանակություն ունի ամբողջ երկրի սոցիալ-տնտեսական-բնապահպանական զարգացման կայունությունը: Հիմք ընդունելով սույն աշխատանքի առաջին և երկրորդ գլուխներում սոցիալ-տնտեսական-բնապահպանական համակարգերի կայուն զարգացումը, ՀՀ կայուն զարգացման ծրագիրը, հիմնական նախադրյալները և հիմնախնդիրները բնութագրող չափանիշները, վերլուծենք դրանց համապատասխան կայուն զարգացման չափորոշիչները և արդյունքները ՀՀ-ում:

Հայաստանի անցումը շուկայական հարաբերություններին ուղեկցվում էր տնտեսության մեջ նախադեպը չունեցող ճգնաժամային երևույթներով: Խորհրդային Միության փլուզումով պայմանավորված միութենական տնտեսական կապերի խզումը, ղարաբաղյան հակամարտությունը, տրանսպորտային շրջափակումը, վառելիքի ներմուծման ծավալների խիստ կրճատումը, ինչպես նաև ավերիչ երկրաշարժի հետևանքները հանգեցրին երկրի լուրջ տնտեսական անկման: 1990-1994 թթ. ՀՀ-ում

իրական ՀՆԱ-ն կրճատվեց ավելի քան երկու անգամ, և միայն 1995 թ. նկատվեց, ապա կայուն դարձավ տնտեսական աճի միտումը: ՀՀ ԱՎԾ տվյալներով 1994-1998 թթ. ընթացքում ՀՆԱ-ն աճել է 31.7 %-ով (աճի միջին տարեկան տեմպը կազմել է 6.4%), որի ավելի քան 82%-ը ապահովվել է տնտեսության չորս բազային ճյուղերը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների ոլորտների շնորհիվ: 1999 թ. Ռուսաստանում ֆինանսական ճգնաժամի հետևանքով մեր երկրում տնտեսական աճը դանդաղեց, այնուհանդերձ անկում չգրանցվեց: 1998-2008 թթ. տնտեսական աճը, ամբողջությամբ վերցրած, կազմել է տարեկան միջինը 10.5%, որը շուրջ 2.5 անգամ գերազանցում էր համաշխարհային տնտեսության աճի ցուցանիշները: Այդ տարիներին հանրապետությունն աճի տեմպերով առաջատարն էր տարածաշրջանում և առաջատարներից մեկը՝ զարգացող երկրների մեջ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2008 թ. վերջերից նկատելի դարձավ տնտեսական աճի տեմպերի նվազում, որին հաջորդած երկու տարիներին երկրի տնտեսությունն իրական աճ չարձանագրեց, ավելին, 2009 թ. արձանագրվեց 14.2% տնտեսական անկում: Համաշխարհային տնտեսական ճգնաժամը լուրջ բացասական ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա, որի հետևանքով աճի ցուցանիշը 2010 թ. ընդամենը 2.2% էր, 2011 թ.՝ 4.7%, և միայն 2012 թ. այդ ցուցանիշը բարելավվեց. գրանցվեց 7.2% տնտեսական աճ, իսկ հետո 2012-2015 թթ. ՀՆԱ միջին աճը հասավ 4.3%-ի (աղյուսակ 2.2.1):

Այս ամենը հիմք է տալիս փաստելու, որ ճգնաժամը մեր երկրի տնտեսության զարգացման վրա նշանակալի բացասական ազդեցություն է ունեցել: Այսպես՝ 2010-2012 թթ. տնտեսական աճ են ապահովել տնտեսության բոլոր ճյուղերը, բացառությամբ շինարարության: Նշված ժամանակահատվածում արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.5 տոկոսային կետ՝ 9.9% իրական աճի պայմաններում, ծառայությունների հաշվին՝ 2.0 տոկոսային կետ՝ իրական աճը կազմել է 5.1%, իսկ գյուղատնտեսության հաշվին՝ ընդամենը 0.5 տոկոսային կետ՝ 2.5%իրական աճի պայմաններում, որը պայմանավորված էր 2010 թ. գյուղատնտեսության համար անբարենպաստ պայմաններով: Շինարարության ծավալներն այդ ընթացքում միջինում

նվազել են 1.8%-ով՝ 0.4 տոկոսային կետով բացասաբար ազդելով տնտեսական աճի վրա:

2012-2015 թթ. տնտեսության զարգացումը հիմնականում ապահովում էր շնորհիվ գյուղատնտեսության և ծառայությունների ոլորտների: Նշված ժամանակահատվածում գյուղատնտեսության աճը կազմել է 7.6%, որն ապահովել է տնտեսական աճի 1.4 տոկոսային կետ, իսկ ծառայություններինը 5.7%, որի հաշվին տնտեսական աճն ավելացել է 2.5 տոկոսային կետով: Արդյունաբերության ու շինարարության աճի ցուցանիշները նվազել են համապատասխանաբար՝ 0.7% և 4.6 %՝ բացասաբար ազդելով երկրի ընդհանուր տնտեսական աճի վրա:

Կայուն զարգացման հիմքերից մեկը տնտեսությունն է, որի մակարդակից որոշակի աստիճանով պայմանավորված է բնակչության կյանքի որակը, սոցիալական ոլորտի ենթակառուցվածքների վիճակը, շրջակա միջավայրի վրա ծանրաբեռնվածության նվազեցման հնարավորությունը և ապագա սերունդների համար բարենպաստ պայմանների ապահովումը: Տնտեսական զարգացման կարևոր բնութագիր է համախառն ներքին արդյունքը: Անցած քսան տարիների ընթացքում ՀՀ տնտեսական աճը պայմանավորող գործոնների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած, ՀՆԱ կառուցվածքում տեղի ունեցող փոփոխություններին, այն դեռևս մեծ չափով կենտրոնացված է և զգալի կախվածություն ունի այս կամ այն ճյուղի զարգացման ռիսկերից:

2008-2009 թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ՀՆԱ կառուցվածքում տնտեսության մինչ այդ առաջատար ճյուղին՝ շինարարությանը փոխարինեց գյուղատնտեսությունը: Եվ ներկայումս ամբողջությամբ վերցված ՀՆԱ ծավալի 17.3 տոկոսն ապահովում է գյուղատնտեսությունը:

2008-2015 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալն ավելացել է 59.6%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական արտադրանքի 62% մասնաբաժինն ապահովել է բուսաբուծության և 38%-ը՝ անասնաբուծության շնորհիվ:

Գյուղատնտեսական արտադրանքի ծավալի ինդեքսներն այդ տարիներին կտրուկ տատանվել են, ինչը վկայում է ճյուղի, հատկապես բուսաբուծության զարգացումը բնութագրող ցուցանիշների զգալի կախվածությունը բնակլիմայական

պայմաններից: Դրա հետ մեկտեղ, գյուղատնտեսությունում դեռևս բավականին ցածր է արտադրողականությունը, ինչը պայմանավորված է կիրառվող տեխնոլոգիաների ցածր մակարդակով:

ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում[34] գյուղատնտեսությունն ամրագրված է որպես ոլորտային գերակայություն, որը հանդիսանալով երկրում սննդի արդյունաբերության զարգացման և պարենային անվտանգության ապահովման կարևորագույն ոլորտներից մեկը, միաժամանակ, ռազմավարական կարևոր նշանակություն ունի գյուղական համայքների զարգացման համար: Գյուղատնտեսության մեջ զբաղված է երկրի ընդհանուր զբաղվածության մոտ 40%-ը, գյուղական համայնքների բնակչության եկամուտների գերակշիռ մասը ստացվում է գյուղատնտեսական արտադրությունից և այդ ոլորտում վարձու աշխատանքից:

Ոլորտի զարգացումը խիստ կարևոր է գյուղական բնակավայրերում զբաղվածության հնարավորությունների ստեղծման և ավելացման, այդ բնակավայրերում աղքատության մակարդակի նվազեցման, ինչպես նաև կայուն զարգացում ապահովելու համար: Չնայած վերջին քսան տարիներին իրականացված մի շարք բարեփոխումներին՝ գյուղատնտեսության ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ չլուծված խնդիրներ: Մի կողմից, գյուղացիական տնտեսությունների փոքր ծավալները, հողակտորների կտրտվածությունը, գյուղատնտեսության մեջ տնտեսվարողների ֆինանսական միջոցների անբավարարությունը, գյուղմթերքների իրացման դժվարությունները և այլն զգալիորեն խոչընդոտում են ՀՀ գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացմանը: Մյուս կողմից՝ հանրապետության տնտեսության ազատականացումը, հողի և գյուղատնտեսական արտադրության սպասարկող ենթակառուցվածքների, գյուղմթերքներ իրացնող և վերամշակող կազմակերպությունների մասնավորեցումը զգալիորեն սահմանափակում են գյուղատնտեսության ոլորտին պետական անմիջական միջամտությունը:

[34] http://www.gov.am/files/docs/1322.pdf

Յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացումը մեծապես կախված է տվյալ երկրի արդյունաբերության ոլորտի զարգացման մակարդակից: Հայաստանում արդյունաբերությունը խորհրդային տարիներին ավանդաբար եղել է տնտեսության հիմքը: Անկախության տարիներից ի վեր մեր երկրի տնտեսությունը, անցնելով զարգացման մի քանի փուլեր, կրել է կառուցվածքային մեծ փոփոխություններ: Ընդհանուր առմամբ, եթե բնութագրենք հետխորհրդային Հայաստանի տնտեսությունը, ապա կարելի է ասել, որ այն ինդուստրիալ տնտեսությունից վերափոխվել է ագրարային և ծառայություններ մատուցող տնտեսության:

2010-2015 թթ. ՀՀ տնտեսությունը արձանագրել է բավական կայուն առաջընթաց՝ մոտ 61% աճ: Տնտեսական ճգնաժամից հետո ամենաարագը վերականգնվեց արդյունաբերությունը: 2011 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացավ 21.2%-ով, իսկ հետագա հինգ տարիների ընթացքում միջին տարեկան աճը կազմեց 6.6%: 2011-2015 թթ. աճի առավել կայուն տեմպեր ապահովել են Արարատի, Լոռու, Վայոց ձորի և Տավուշի մարզերի արդյունաբերական հատվածները: Արդյունաբերական արտադրանքի ծավալներն ավելացել են 1.6-ից մինչև 2 անգամ: Միջին հանրապետական աճի տեմպերին գերազանցել են նաև Արմավիրի և Կոտայքի մարզերը: Չնայած դրական փոփոխությունների պահպանմանը՝ 2013-2015 թթ. ճգնաժամային երևույթներ դրսևորվեցին Կոտայքի, Շիրակի և Սյունիքի մարզերի արդյունաբերական հատվածներում: Այստեղ արձանագրվեցին արդյունաբերական արտադրության տեմպերի դանդաղում և նույնիսկ անկում, ինչը համահունչ էր միջազգային շուկայում մետաղների, մասնավորապես՝ պղնձի գնի նվազմանը[35]:

Հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղերն են հանքագործական արդյունաբերությունը, սննդամթերքի, խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների և հիմնային մետաղների արտադրությունը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտադրությունն ու բաշխումը, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը: 2015 թ. արդյունաբերական արտադրանքի՝ նախորդ տարվա

[35]Ուսումնասիրությունները կատարվել են՝ ըստ ՀՀԱՎԾ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015թ,,ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին հրապարակումների:

նկատմամբ 2.5% աճին հիմնականում նպաստել են հանքագործական արդյունաբերությունը, որն աճել է 14.5%-ով, ծխախոտի արտադրության աճը, որն ավելացել է 50.4%-ով և էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 13.9%-ով[36]:

Արդյունաբերության կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է, որ ամեն ինչ չէ, որ բարեհաջող է այս ոլորտում, ինչը սպառնալիք է կայուն զարգացման համար: Այսպես՝ արդյունաբերական արտադրանքի ծավալում մոտ 17%-ը բաժին է ընկնում հանքագործական արդյունաբերությանը, եթե սրան ավելացնենք նաև հիմնային մետաղների (12.5%) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (3.3%) արտադրությունը, որոնք հումքի առաջնային վերամշակման ոլորտներից են, ապա, կարելի է ասել, որ արդյունաբերության կառուցվածքի մոտ 1/3-ը հումքի և դրա առաջնային մշակման հետ կապված ճյուղերն են: Վերամշակող արդյունաբերության մոտ 60%-ը բաժին է ընկնում սննդի, խմիչքների և ծխախոտի արտադրությանը, ինչը, ըստ էության, գյուղատնտեսական հումքի վրա հիմնված արտադրություն է, որը դարձյալ ենթադրում է հումքի առաջնային մշակում: Այդ ամենը հիմք է տալիս արձանագրելու, որ մեր երկրի արդյունաբերությունն ունի թերզարգացած կառուցվածք, որ շուկայական հարաբերություններին անցման տարիների ընթացքում առավելագույն զարգացում են ունեցել հումքի առաջնային մշակման հետ կապված ճյուղերը: Այս պայմաններում, կայուն զարգացման տեսակետից, հրատապ խնդիր է դառնում, որպես տնտեսության կարևորագույն ճյուղի՝ արդյունաբերության քաղաքականության գործիքների կիրառման ակտիվացումը և դիվերսիֆիկացումը[37]:

Ժամանակակից աշխարհում, կենսագործունեության անվտանգության և հարմարավետության ապահովման տեսակետից, անչափ կարևոր նշանակություն ունի կյանքի որակը: Ավելին, այն դարձել է երկրի սոցիալ-տնտեսական անվտանգության, նրա գիտատեխնիկական և մարդկային ներուժի զարգացման գլխավոր չափանիշը:

---

[36] Ուսումնասիրությունները կատարվել են՝ ըստ 2015թ. Վիճակագրական տարեգրքի էջ 252-261. ՀՀԱՎԾ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015թ,,ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-դեկտեմբերին հրապարակումների:

[37] Վերլուծությունները կատարվել են՝ ըստ 2015թ վիճակագրական տարեգրքի էջ 252-261, ՀՀ ԱՎԾՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2015թ, հրապարակման:

Այս առումով, ՀՀ-ում կայուն զարգացումը գնահատելիս, պարտադիր պետք է ներառել կյանքի որակը բնութագրող ցուցանիշները:

Կյանքի որակի մասին առավել ամբողջական պատկերացում կարող է տալ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը, որը հաշվարկվում է ՄԱԿ-ի կողմից ընդունված մեթոդաբանությամբ[38]: Այն իրենից ներկայացնում է ինտեգրալ ցուցանիշ՝ հաշվարկված որպես երեք ընդհանրացնող ցուցանիշների միջինացված արժեք.

- մարդու առողջության և կյանքի սպասվող միջին տևողության (երկարակեցության) ինդեքսը, որը չափվում է կյանքի տևողությամբ,
- բնակչության կրթության մակարդակի ինդեքսը, որը չափվում է գրագիտությամբ,
- բնակչության կենսամակարդակի ինդեքսը, որը չափվում է գնողունակության համարժեքությամբ, եկամտի մակարդակով:

Բացի այս հիմնական ցուցանիշներից, որոնց օգնությամբ որոշվում են տվյալ ինդեքսները, հաշվի են առնվում նաև այլ գործոններ, որոնք նպաստում են կյանքի որակի առավել օբյեկտիվ գնահատմանը: Մասնավորապես.

1. Կյանքի սպասվող միջին տևողության (երկարակեցության) ինդեքսի գնահատման դեպքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այնպիսի ցուցանիշների, ինչպիսիք են.

- հիվանդացության, ծնելիության, մահացության դինամիկան,
- մթնոլորտում, հողի, ջրի, սննդամթերքների մեջ վնասակար նյութերի պարունակությունը,
- բնապահպանական ծախսերի բաժինը,
- շրջակա միջավայրի պաշտպանության և բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանն ուղղված ներդրումները և այլն:

2. Կրթության ձեռքբերված մակարդակի ինդեքսի գնահատման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ ցուցանիշները.

- կրթության, գիտության, մշակույթի վրա ծախսերի բաժինը,

[38] Ա.Մակարյան,Ա.Բաբայան, ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում, Երևան, 2010թ., էջ 9: http://www.gov.am/u_files/file/documents/3.pdf

- սովորողների և ուսանողների քանակը,
- մեկ դասախոսի հաշվով սովորողների միջին թիվը և այլն:

3. Կենսամակարդակի ինդեքսը գնահատելու դեպքում պետք է հաշվի առնել այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են.

- գործազրկության մակարդակը,
- բնակչության միգրացիան և դրա պատճառները,
- կենսապայմանները (բնակարանային պայմաններ, սննդի որակ) և այլն[39]:

Այսպիսով՝ մարդկային ներուժի զարգացման ինդեքսը հանդես է գալիս որպես կայուն սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր բնութագիր, որը հաշվի է առնում այնպիսի գործոնների համալիր ազդեցությունը, ինչպիսիք են տնտեսական բարեկեցությունը, առողջապահության, կրթության զարգացման մակարդակը, գիտական ներուժը և այլն, որոնցով կարելի է որոշել երկրում, մարզերում և համայնքներում կյանքի որակի մակարդակը:

Բնակչության նյութական բարեկեցության և տնտեսական զարգացման մակարդակների էական տարբերությունները տարածքային կազմավորումների միջև բացասաբար են ազդում կայուն զարգացման վրա: 2010-2015 թթ. ընթացքում միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ-ում ավելացել է շուրջ 1.8 անգամ: Այդուհանդերձ, աշխատավարձի մակարդակի փոփոխության՝ այդպիսի բավականին դրական ֆոնին, և՛ ամբողջությամբ վերցված երկրում, և տարածքային միավորներում, դիտվում է բնակչության աշխատավարձերի միջև նշանակալի անհամաչափություններ (աղյուսակ 4): Բնակչության միջին ամսական անվանական աշխատավարձը 2015 թ. կազմել է 184 647 դրամ, որից ավելի բարձր միջին անվանական աշխատավարձ են ստացել միայն Սյունիքի մարզում՝ 223 278 դրամ և Երևանում՝ 200 023 դրամ: Մնացած մարզերում այն տատանվում է միջին հանրապետականի նկատմամբ 69%-ից մինչև 87%-ի սահմաններում: Այդ ցուցանիշի նվազագույն մակարդակը Արագածոտնի մարզում է՝ 127 432 դրամ, որը շուրջ 1.75 անգամ պակաս է Սյունիքի մարզի նույն ցուցանիշից:

---

[39] Выбор стратегических приоритетов регионального развития: новые теоретико-методические подходы,под общ. ред. Окрепилова В.В. // СПб.: Наука, 2008.,с. 25.

*Աղյուսակ 4. Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ ըստ մարզերի և ք. Երևան (դրամ)*[40]

| | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. | 2015թ. |
|---|---|---|---|---|---|---|
| ք. Երևան | 114132 | 119 347 | 147 911 | 160 804 | 166 127 | 200 023 |
| Արագածոտն | 73127 | 76 230 | 94 895 | 102 191 | 111 702 | 127 432 |
| Արարատ | 81768 | 88 056 | 112 117 | 117 551 | 126 262 | 147 827 |
| Արմավիր | 94934 | 95 699 | 121 143 | 126 010 | 136 533 | 154 523 |
| Գեղարքունիք | 84202 | 88 395 | 113 497 | 112 439 | 121 369 | 142 161 |
| Լոռի | 79226 | 85 004 | 106 045 | 113 456 | 127 282 | 150 923 |
| Կոտայք | 94797 | 95 681 | 118 316 | 126 488 | 136 343 | 160 013 |
| Շիրակ | 77474 | 81 824 | 103 091 | 104 240 | 115 847 | 131 484 |
| Սյունիք | 120907 | 131 964 | 162 826 | 178 606 | 187 878 | 223 278 |
| Վայոցձոր | 75651 | 76 614 | 99 827 | 105 624 | 117660 | 143540 |
| Տավուշ | 74434 | 78 622 | 99 451 | 102 247 | 117 831 | 140 773 |
| Ընդամենը | 102652 | 108 092 | 140 739 | 146 524 | 158 580 | 184 647 |

Աշխատունակ բնակչության հիմնական մասի համար աշխատավարձը եկամտի միակ աղբյուրն է, աշխատանքի վարձատրության անհավասարությունը լուրջ չափորոշիչ է դառնում նաև այն առումով, որ բարձր աշխատավարձերի կողքին կան ապրուստի համար անհրաժեշտ ցածր աշխատունակ բնակչության աշխատավարձեր: Հանրապետության միջին անվանական աշխատավարձից ցածր աշխատավարձեր են ստանում գյուղատնտեսության և մշակույթի ոլորտում 1.8 անգամ, կրթության ոլորտում 1.7 անգամ, իսկ առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտում մոտ 1.5 անգամ:

ՀՀ առջև ծառացած առավել կարևոր հիմնախնդիրներից են գործազրկությունը և աշխատատեղերի բացակայությունը: 2010-2015 թթ. ՀՀ-ում գործազրկության մակարդակը նվազել է 0.5 տոկոսային կետով և կազմել 18.5%: Մարզերի միջև գործազրկության մակարդակների համեմատական վերլուծության արդյունքներից ակնհայտ է դառնում, որ տարբերություններն այստեղ զգալի են, ընդորում, առավելագույն և նվազագույն մակարդակների տարբերությունը մարզերի միջև (ներառյալ Երևանը) 5.3 անգամ է, տղամարդկանց դեպքում այդ տարբերությունը հասնում է մոտ 11 անգամի:

[40] Աղյուսակը կազմված է՝ ըստ ՀՀԱՎԾ. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2015թ., Պարենային ապահովություն և աղքատություն 2015թ. հունվար-դեկտեմբեր հրապարակումների:

Գործազրկության առումով անբարենպաստ պայմաններում են այն տարածքային միավորները, որտեղ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը մեծ է, մասնավորապես՝ Երևանում (26.9%), Կոտայքում (22.8%), Շիրակում (20.8%) և Լոռիում (16.9%): ՀՀ-ում շատ ավելի մեծ ծավալների է հասնում ոչ ձևական (ոչ ֆորմալ) զբաղվածությունը՝ շուրջ 50% 2014 թ.: Միայն Երևանում, Սյունիքում և Կոտայքում են դրանք ցածր միջին հանրապետականից, համապատասխանաբար՝ 17.6%, 40.8% և 47.8%, մնացած մարզերում այդ ցուցանիշը տատանվում է 56.1%-75.2%-ի սահմաններում[41]: Այսպիսի վիճակագրությունը պայմանավորված է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության առանձնահատկություններով, քանի որ այստեղ զբաղվածները հիմնականում գյուղացիական տնտեսության մեջ չգրանցված ինքնազբաղվածներն են[42]:

Բնակչության եկամուտների անհավասարության բարձ աստիճանի հետևանք է աղքատությունը: Հիմնական ցուցանիշները, որոնց օգնությամբ վիճակագրության մեջ չափվում են աղքատության մասշտաբները, ապրուստի համար անհրաժեշտ՝ նվազագույնից ցածր եկամուտներով բնակչության քանակն ու տեսակարար կշիռն են: ՀՀ ԱՎԾ-ի կողմից իրականացված՝ տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքների համաձայն՝ 2010 թ. Համեմատ աղքատության մակարդակը հանրապետությունում 2014 թ. Նվազել է 5.8 տոկոսային կետով և կազմել 30%. այսինքն՝ երկրի մշտական բնակչության հաշվով, աղքատների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 900000, որից շատ աղքատների թիվը մոտ 330000 է, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատներինը՝ մոտ 70000: 2014 թ. աղքատության ցուցանիշները գրեթե չեն տարբերվում՝ ըստ քաղաքային (30%) և գյուղական (29,9%) բնակավայրերի: Այդուհանդերձ, աղքատության մակարդակի տարբերությունը Երևանի և երկրի այլ քաղաքների միջև զգալի է, 25% և 35,1%՝ համապատասխանաբար: Միաժամանակ առավելագույն և նվազագույն աղքատության

[41] Վերլուծությունները կատարվել են՝ ըստ ՀՀ ԱՎԾ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2010-2015թթ.հրապարակումների:
[42] Վերլուծությունները կատարվել են՝ ըստ ՀՀԱՎԾ.Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում 2010-2015թթ.,Պարենային ապահովություն և աղքատություն, 2015թ. հունվար-դեկտեմբեր հրապարակումների:

մակարդակ ունեցող տարածքային միավորների միջև տարբերությունը հասնում է մինչև 2.4 անգամի: Աղքատության միջին հանրապետական մակարդակից բարձր են Շիրակի (44.2%), Կոտայքի (37.2%), Լոռու (36.4%) և Տավուշի (30.6%) մարզերի ցուցանիշները: 2010 թ.-ի նկատմամբ աղքատության մակարդակի ցուցանիշը ավելացել է միայն Տավուշի մարզում: Նույն ժամանակաշրջանում աճել է ծայրահեղ աղքատության մակարդակը, ընդորում, առավել նկատելի է Արմավիրի (2.1 անգամ), Տավուշի (2.25 անգամ) և Գեղարքունիքի (1.5 անգամ) մարզերում[43]:

Տարածաշրջաններում աղքատության բարձր մակարդակը դարձել է բացասական ժողովրդագրական միտումների պատճառներից մեկը: Ներկայումս Հայաստանի Հանրապետության բնակչությունը կայուն տեմպերով նվազում է, ինչն ազգային անտվանգության առավել լուրջ սպառնալիքներից է: Միգրացիայի, ծնելիության և մահացության ներկայիս մակարդակի պահպանումը կհանգեցնի նրան, որ 2025 թ. ՀՀ բնակչության թիվը կկազմի 2.7 մլն մարդ: Ծնելիության ընդհանուր գործակիցը 2015 թ., 1000 բնակչի հաշվով, կազմել է 14.1 պրոմիլ, 2010 թ. 14.7 պրոմիլի և 1990 թ.՝ 22.5 պրոմիլի համեմատ: Ծնելիության գումարային գործակիցը, ըստ ՄԱԿ-ի տվյալների ավելի քան 1.4 անգամ ավելի ցածր է քան անհրաժեշտ է բնակչության պարզ վերարտադրության համար[44]: Այսպիսի վիճակը, անշուշտ հարցականի տակ կդնի հետագա հնարավորությունները զարգացնելու երկրի նյութական, հոգևոր և մշակութային ներուժը:

Անցած 20-25 տարիներին մեր երկրում տեղ գտած սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունների հետևանքներից մեկը հանրապետության միգրացիոն գործընթացներն են: Ընդ որում, հատկապես միջպետական միգրացիան, մասնավորապես՝ տղամարդկանց տևական բացակայությունն ընտանիքներից, ուղղակիորեն բացասաբար է ազդում բնակչության վերարտադրողականության վրա: Հետազոտությունները վկայում են, որ 2011-2014 թթ. 3 ամիս և ավելի ժամկետով իրենց մշտական բնակավայրից բացակայած՝ և 2014 թ. Դրությամբ դեռևս չվերադարձած՝ 15 և բարձր տարիքի տնային տնտեսությունների անդամների

[43] ՀՀԱՎԾ, Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2014թթ. մաս 1, էջ 45:
[44] http://www.unfpa.am/fertility

19.5%-ը գտնվել են ՀՀ տարածքում՝ ք. Երևանում, ՀՀ մարզերում,13.7%-ը՝ ԼՂՀ-ում, իսկ 63.7%-ի գտնվելու վայրը եղել է Ռուսաստանի Դաշնությունը, և միայն3.1%-ը՝ԱՊՀ այլ երկրներ, ԱՄՆ, Կանադա կամ այլ երկիր[45]: Ներքին միգրացիոն հոսքերի դիտարկումն ըստ բնակության վայրի վկայում է, որ քաղաքային բնակավայրերից համեմատաբար մեծ է հոսքը դեպի Երևան և ՀՀ այլ քաղաքներ՝ 20.8%, իսկ դեպի ՀՀ այլ գյուղեր՝ 13.7%: Դա բացատրվում է նրանով, որ քաղաքներում աշխատանք գտնելու հավանականությունն ավելի մեծ է, քան գյուղական համայնքներում:

Մարդկային ներուժի զարգացման կարևորագույն խնդիրներից է կրթության մակարդակը, որը բնութագրվում է չափահասների գրագիտությամբ՝ ձեռք բերված տարրական, միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Հայաստանում կրթության հանդեպ հասարակության ունեցած ձգտումը միշտ էլ բարձր է եղել: Այդ մասին են վկայում վիճակագրական տվյալները: Ըստ ՀՀ 2011թ. Մարդահամարի տվյալների ՝ 16-ից բարձր տարիքի բնակչության շրջանում միջնակարգ և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար՝ 41% և 22%, մոտ 23%-ն ունի բարձրագույն և հետ բուհական կրթական մակարդակ, իսկ տարրական կրթություն չունեցողների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 0,5%[46]: Եթե հանրակրթության ոլորտի հանրապետությունում գոհացուցիչ է, ապա նույնը չի կարելի ասել նախադպրոցական և հետբուհական կրթության մասին: Նախադպրոցական կրթություն ստանալու համար ՀՀ համայնքների կեսից ավելի բացակայում են համապատասխան հաստատությունները: Միաժամանակ, երիտասարդների համար խիստ սահմանափակ են բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունները՝ կապված մեծ չափերի հասնող ֆինանսական ծախսերի հետ: Հայաստանում գործող բուհերի բացարձակ մեծամասնությունը՝ 82%-ը, գնտվում է մայրաքաղաքում, որոնց

[45] ՀՀԱՎԾ, Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2014թթ. մաս 1, էջ 26:

[46] Ուսումնասիրությունները կատրավել են՝ ըստ ՀՀԱՎԾ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի:

համաֆինանսավորումը պետության կողմից չափազանց քիչ է[47]: Պետական բուհերի գերակշիռ մասի բյուջեի 80-85%-ը ձևավորվում է վարձավճարներից, որոնց չափերը տատանվում են 300000-ից մինչև 1 մլն դրամի սահմաններում: Այս պայմաններում սոցիալ-տնտեսական ծանր վիճակում գտնվող հատկապես մայրաքաղաքից հեռու ապրող բնակչության մեծ մասի համար, կապված տրանսպորտի և կացության լրացուցիչ ծախսերի հետ, բարձրագույն կրթություն ստանալը դառնում է գրեթե անհասանելի:

Կայուն զարգացման կարևորագույն չափանիշ է բնապահպանական հավասարակշռությունը: Ըստ տարբեր գնահատականների՝ բնապահպանական իրավիճակը ՀՀ-ում բավարար չէ: Բնապահպանական առումով ՀՀ տարածքը բնութագրվում է մի շարք անբարենպաստ գործընթացներով՝ ջրի և օդի որակի անկման միտումներ, ինչպիսիք են անտառային տարածքի նվազումը, հողերի դեգրադացիան և լանդշաֆտի փոփոխություններ: Ընդորում, այդ ամենում անչափ մեծ է տեխնածին գործոնների ազդեցությունը:

Ջրի աղտոտվածությունը լուրջ բնապահպանական խնդիր է Հայաստանում: Դրա որակը չի համապատասխանում սանիտարահիգիենիկ նորմերին վատ ջրամաքրման, կոմունալ ջրագծերի անբավարար վիճակի և ջրամատակարարման աղբյուրների ուժեղ կեղտոտվածության պատճառով: Քաղաքային կեղտաջրերի մեծ մասը (բացի Երևանից) բաց է թողնվում գետեր առանց պատշաճ մաքրման:

Սանիտարական աղբավայրերի բացակայության պատճառով կոշտ թափոնները տեղափոխվում են բաց աղբանոցներ, որտեղ դրանք սովորաբար այրվում են՝ թունավոր նյութեր արտանետելով մթնոլորտ: Մթնոլորտային օդի հիմնական աղտոտողներն են հանքաարդյունաբերության, գունավոր մետալուրգիայի, քիմիական, շինարարական արդյունաբերության, էներգետիկայի ձեռնարկությունները: Այդ առումով առավել բարդ բնապահպանական իրավիճակ է ներկայումս ձևավորվել Սյունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզերում: Մթնոլորտային օդի որակի հետազոտությունները ցույց են տվել, որ հանրապետությունում ամենաաղտոտված

[47]Ուսումնասիրությունները կատարվել են՝ ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարության պաշտոնական կայքէջի տվյալների հիման վրա, http://edu.am/index.php/am/documents/index/101:

քաղաքներն են Ալավերդին, Արարատը և Հրազդանը: Մթնոլորտային օդի որակը բավարար վիճակում չէ նաև Երևանում՝ տրանսպորտային գերնորմատիվային արտանետումների, էկոլոգիապես անընդունելի շինարարական աշխատանքների ու կանաչապատ տարածքների կրճատման պատճառով[48]:

Հանրապետությունում բնապահպանական կարևորագույն խնդիրներից են անտառային տարածքի նվազումը, հողերի դեգրադացիան և լանդշաֆտի փոփոխությունները: Անցած 20 տարիների ընթացքում Հայաստանում անտառածածկույթը զգալիորեն նվազել է: 2014 թ. այն կազմել է 285.5 հազ. հա՝ 2010 թ. 305.5 և 2000 թ. 321.1 հազ. հա-ի դիմաց[49]: Անտառածածկույթի նվազումը պատճառ է դառնում օդի վատ որակի, հողերի դեգրադացիայի, էրոզիայի և սողանքների ու լանդշաֆտի փոփոխությունների: Մեր հանրապետության հողերի դեգրադացիայի և լանդշաֆտի փոփոխությունների պատճառ են նաև արոտավայրերի չկանոնակարգված օգտագործումն ու գերարածեցումը, ինչպես նաև գյուղատնտեսությունում թունաքիմիկատների օգտագործման հետևանքով հողերի աղտոտվածությունը[50]:

Այս հիմնախնդիրները պահանջում են բնապահպանական քաղաքականության մշակում և իրականացում: Այդ քաղաքականության կարևոր բաղադրիչը պետք է դառնա նաև արտակարգ իրավիճակներից պաշտպանության միջոցառումների համալիրը:

Այս ամենը վկայում է, որ կայուն զարգացման մոդելին անցնելու համար անհրաժեշտ է էական ճշգրտումներ կատարել երկրի տարածքային սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ: Հարկ է մշակել և ընդունել սոցիալական զարգացման (երկրի, մարզերի և համայնքների մակարդակներում) այնպիսի երկարաժամկետ ծրագրեր, որոնցում սահմանված կլինեն մարդկային ներուժի զարգացման նպատակները, դրանց հասնելու փուլերը, նախանշված կլինեն

---

[48] Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում, հետազոտական խմբի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս. Գևորգյան, Երևան 2014, Տնտեսագետ հրատարակչություն, էջ 24:

[49] Ուսումնասիրությունները կատարվել են՝ ըստ ՀՀԱՎԾ 2000, 2010 և 2015 թվականների հրապարակումների. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում:

[50] https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ena-hy.pdf

անհրաժեշտ ռեսուրսները, ինչպես նաև իրականացնողների՝ համապատասխան պաշտոնատար անձանց պատասխանատվության ձևերն ու սահմանները:

Անհրաժեշտ է նշել, որ տարածքային սոցիալ-տնտեսական և բնապահպանական հիմնախնդիրների լուծումից է կախված ոչ միայն տարածքային կազմավորումների անցումը կայուն զարգացման մոդելին, այլև դրանց գրավչությունը աճող սերնդի համար՝ բնակության, զարգացման, ինչպես նաև հենց իր ներուժի իրացման տեսակետից:

Այն տարածքները, որոնք կհամարվեն հեռանկարային, շեշտադրումը պետք է կատարվի բիզնեսի խրախուսման, կապիտալի համար բարենպաստ պայմանների ստեղծման, ներդրումների ներհոսքի և կայուն աճի վրա, իսկ այն շրջանները որոնք կճանաչվեն անհեռանկարային, տարածքային քաղաքականության հիմքում պետք է լինի պատմամշակութային լանդշաֆտների պահպանումը, տարածքային կազմավորումներում բնակչությանն օգնելը, տեղական ինքնակառավարման ինստիտուտի ամրապնդումը:

### *3.2. ՀՀ կայուն զարգացման բարելավման հիմնական ուղղությունները*

ՀՀ Կայուն զարգացման ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է բացահայտել և գնահատել ՀՀ-ում առկա ռեսուրսային ներուժը և դրա հիման վրա նախանշել բարելավման հիմնական ուղղությունները: Կայուն զարգացման ռեսուրսային ներուժը բնութագրող ցուցանիշներից տվյալ պարագայում առավել կարևորվում են ՀՀ աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները, գյուղտնտեսական հողատարածքները, որակյալ աշխատուժի և բնական պաշարների, զբոսաշրջության նախապայմանների առկայությունը, ենթակառուցվածքներով ապահովվածության մակարդակը և այլն:

Աշխարհագրական դիրքն ու բնակլիմայական պայմանները տնտեսության զարգացման համար կարող են լինել ինչպես խթանող, այնպես էլ խոչընդոտող գործոններ:

Մեր երկիրը հայտնի է բնակլիմայական բազմազանությամբ: Չնայած երկրի փոքրությանը, այստեղ միաժամանակ կարելի է հանդիպել ձյուն, զրոյից ցածր

ջերմաստիճան, բարձր խոնավությամբ անտառային գոտիներ և երաշտ: ՀՀ բնակլիմայական պայմանները հաճախ մեծ խնդիրներ են ստեղծում հատկապես գյուղատնտեսության համար:

Գյուղատնտեսական ուղղվածության մեծ ներուժ ունեցող մարզերից է Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի և Շիրակի մարզերը: Արագածոտնի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի մոտ 80%-ը (217809 հա), որում հատկապես մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 63% [51]: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Արարատի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են ընդհանուր տարածքի մոտ 79%-ը (164696 հա) [52]: Մարզը մեծ ներուժ՝ ունի զարգանալու խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ:

Արմավիրի մարզը, որի գյուղատնտեսական նշանակության հողերը հասնում են մոտ 100 հազ. հա-ի[53], առաջատար դիրք է զբաղեցնում գյուղատնտեսության գրեթե յուրաքանչյուր ոլորտում: Այն առաջատար է ձվի արտադրության մեջ (2015 թ. այստեղ արտադրվել է ամբողջ հանրապետության 21.5 %-ը), նաև բանջարեղենի բերքով (2015 թ. այն կազմել է ամբողջ հանրապետության շուրջ 40%-ը): Մեր երկրի բոստանային տնտեսության զգալի հատվածը նույնպես բաժին է ընկնում Արմավիրի մարզին (շուրջ 30%): Նույն ժամանակաշրջանում պտղի և հատապտղի բերքը կազմել է 980 754 ցենտներ կամ մեր երկրի ամբողջ բերքի 25%-ը: Մարզում զարգացած է նաև խաղողագործությունը. 2015 թ. այստեղ արտադրվել է մոտ 1.4 մլն ցենտներ խաղող, որը երկրի խաղողի արտադրության մոտ 44.0%-ն է[54]:

---

[51]ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 158:
[52]ՀՀ Արարատի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 154:
[53]ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 127:
[54]Ուսումնասիրությունները կատարվել են՝ ըստ ՀՀ ԱՎԾ հրապարակման. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015:

Գյուղատնտեսական մեծ ներուժ ունեցող մարզերից է Գեղարքունիքը, որտեղ հիմնական ուղղություններն են անասնաբուծությունը, հացահատիկի և հատիկա ընդեղենի (ամբողջ երկրի 22.0%-ը) և կարտոֆիլի (ամբողջ երկրի 47.0%-ը) արտադրությունները[55]:

Սևանա լճի քաղցրահամ ջուրը նպաստավոր պայմաններ է ստեղծում ձկան բազմացման համար:

Շիրակի մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 214 548 հա, որտեղ մեծ կշիռ ունեն արոտավայրերը՝ 53% և վարելահողերը՝ 37%[56]: Գյուղատնտեսության հիմնական ուղղություններն են անասնաբուծությունը և կաթի արտադրությունը: Կարևոր առավելություն է համարվում Վրաստանի հետ սահման ունենալու հանգամանքը, որը մարզի գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին տալիս է մրցակցային առավելություն, ինչը, կարծում ենք, պետք է առավելագույնս օգտագործել:

Սյունիքի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի շուրջ 75%-ը (308482 հա)[57]: Մարզն ունի անասնապահության և բուսաբուծության արտադրության ուղղվածություն: Դրա հետ մեկտեղ, բարենպաստ բնակլիմայական պայմաններ կորիզավոր հնդավոր պտղատեսակների, ինչպես նաև էկոլոգիական գյուղատնտեսություն վարելու համար:

ՀՀ-ում գյուղատնտեսության կայուն զարգացման բարելավման հիմնական ուղղությունը, պետք է լինի խաղողագործության, բանջարաբուծության, պտղաբուծության և անասնապահության արտադրության ավելացումը, որին կարելի է հասնել՝ ընդլայնելով խաղողի, պտղի և բոստան-բանջարանոցային մշակաբույսերի տարածքները և արտադրվող մթերքների արտահանման ծավալները, կիրառելով համապատասխան մշակաբույսերի մշակության նոր արդյունավետ տեխնոլոգիաներ, բարելավելով ոռոգման համակարգը, աշխատանքներ տանելով մարզում հակակարկտային կայանների թվի ավելացման ուղղությամբ, կառուցելով մսի մթերման

[55] Նույն տեղում
[56] ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 114
[57] ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 112

և վերամշակման արտադրամասեր, բարձրացնելով գյուղտեխնիկայով ապահովվածության մակարդակը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը նպատակ ունի որակապես բարելավել տավարաբուծության ուղղությամբ իրականացվող տոհմասելեկցիոն աշխատանքները, աջակցել տոհմային տնտեսությունների ձևավորմանը, նպաստել գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացմանը: ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվում է «ՀՀ հողօգտագործողներին մատչելի գնով ազոտական, ֆոսֆորական, կալիումական պարարտանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության, «ՀՀ հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելանյութի ձեռքբերման նպատակով պետական աջակցության» և «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման» ծրագրեր:

Հնարավորություններից նաև, ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրման ընտանեկան գյուղացիական տնտեսությունների զարգացումը, գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակի կրճատման հետևանքով առաջացող ավելցուկային աշխատուժի մի մասի օգտագործումը գյուղատնտեսության սպասարկման և ոչ գյուղատնտեսական գործունեության բնագավառներում՝ վերապատրաստման միջոցով, գյուղատնտեսական արտադրանքների, հատկապես թարմ մրգերի և բանջարեղենների միջնորդավորված վաճառքի սահմանափակումը, կոոպերացիայի զարգացման միջոցով մանրածախ առևտրի օբյեկտներին մատակարարվող ապրանքների մեծածախ հավաքման կետերի ստեղծումը: Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությունը ստեղծում է հնարավորություններ նոր միջազգային շուկաներ գրավելու համար: Հայկական

բերքն իր որակական հատկանիշների շնորհիվ կարող է մեծ պահանջարկ ձեռք բերել նոր շուկաներում:

Ոռոգման ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝

- Համապատասխան ներդրումների ներգրավում,
- Խոշոր ջրային համակարգերում անվտանգության միջոցառումների իրականացում,
- Ջրօգտագործողների ընկերությունների խոշորացում,
- Ոռոգում-ջրառ իրականացնող ընկերություններից ջրօգտագործողների ընկերություններին որոշակի համակարգերի պահպանության ու օգտագործման գործառույթների փոխանցում,
- Ջրօգտագործողների ընկերություններին տեխնիկական աջակցություն ցուցաբերելու և վեճերի լուծման համար անհրաժեշտ ներքին մեխանիզմների ստեղծում,
- Ընդհանուր ջրաղբյուրից օգտվող ջրօգտագործողների ընկերությունների միջև արդյունավետ համագործակցության համար նորմատիվային հիմքերի ստեղծում,
- Ոռոգման ոլորտի ընկերություններին տեխնիկական, հաշվապահական հաշվառման և իրավաբանական ստորաբաժանումների մասնագետների, ջրօտգագործողների ընկերություններին վարչական խորհուրդների, վեճեր լուծող և վերստուգիչ հանձնաժողովների անդամների ուսուցում և վերապատրաստում,
- Ոռոգման ոլորտի մասնագետնորի անընդհատ վերապատրաստում, գործուղումների տրամադրում՝ արտերկրյա փորձի արդյունավետ ներդրման նպատակով,
- Ոռոգման նորագույն տեխնոլոգիաների ուսուցման տրամադրման հնարավորություն:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման հեռանկարները՝ հետզհետե ավելանում են ՀՀ պետական բյուջե մուտքերը, որոնք ըստ էության պետք է նպաստեն սույն ոլորտի կապիտալ ներդրումների ավելացմանը ոչ միայն դոնոր միջազգային կազմակերպությունների կողմից, այլև ՀՀ պետական բյուջեից:

Ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված կապիտալ ներդրումները պետք է ապահովեն՝ ջրանցքների ջրթողունակության բարձրացման նպատակով ոռոգման մայր ջրանցքների առաջնահերթ վերանորոգումը կամ վերականգնումը այն տարածքներում, որտեղ ինքնահոս ջրամատակարարումը հնարավոր չէ պոմպակայանների արդիականացմամբ, ջրօգտագործողների ընկերությունների կողմից շահագործվող ներտնտեսային ջրանցքների կառուցմամբ կամ վերականգնմամբ, ինչը հնարավորություն կտա նվազեցնել ջրի կորուստները, ավելացնել ջրամատակարարման արդյունավետությունը, տեղափոխվող ջրի կառավարման բարելավումը, բնակարականային տարածքներում վնասներ պատճառող ֆիլտրացիոն երևույթների բացառումը: Միաժամանակ ներդրումները նպատակահարմար է ուղղել փորձարարական սարքավորումներով կահավորված ոռոգման կենտրոնի հիմնադրմանը, ոռոգման ոլորտի կազմակերպություններին սարքավորումներով, մեքենամեխանիզմներով, համակարգչային տեխնիկայով, ծրագրային փաթեթներով համալրմանը, ջրօգտագործողների ընկերություններում ոռոգման ոլորտի մասնագետների և ֆերմերների տեխնիկական և ֆինանսական գիտելիքների ձեռքբերմանն ուղղված ուսուցմանը, այդ թվում՝ գյուղացիական տնտեսությունների կողմից կաթիլային և անձրևացման համակարգերի ստեղծման միջոցով ջրման նոր տեխնոլոգիաների կիրառման սահուն անցմանը, ինչը կնպաստի բարձրարժեք մշակաբույսերի մշակմանը, արտադրվող

գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցմանըև և ջրօգտագործողների վճարունակության բարձրացմանը:

Գյուղատնտեսական ոլորտի կայուն զարգացման ուղղություններից են գյուղտեխնիկայի հավաքակայանի արդիականացման, տեխնիկական հագեցվածության մակարդակի բարձրացման, կոոպերատիվ հիմունքներով տեխնիկական միջոցների օգտագործման մեխանիզմների ներդրման, ձեռքի աշխատանքի նվազման և ոլորտի աշխատանքի արտադրողականության բարձրացման պահանջները:

Գյուղատնտեսական արտադրատեսակների արտադրության ավելացման և ճյուղի արտադրական ներուժի միարժեք օգտագործման հիմնական գործոններից է համալիր մեքենայացումը: Սակայն գյուղատնտեսության մեքենատրակտորային հավաքակազմի նորացման տեմպերը շատ ցածր են: Առկա տեխնիկայի օգտագործումը ծախսատար է և ցածր արտադրողական:

Գյուղատնտեսության զարգացման համար տեխնիկական առաջընթացի և սահմանափակ ռեսուրսների պայմաններում հիմնական ուղին արտադրության արդիականացումն է: Սակայն Հայաստանի գյուղացիական տնտեսությունների խիստ մասնատված հողակտորների պայմաններում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառումը մեծ դժվարությունների է հանդիպում, մեծանում է մեքենայական ագրեգատների պարապուրդը և կրճատվում հիմնական աշխատանքի տարողությունը: Ճյուղի ինտենսիվացման մակարդակի բարձրացմանը խոչընդոտում են նաև գյուղատնտեսական տեխնիկայի ոչ բավարար լինելը, առկայի ծայրաստիճան բարձր մաշվածությունը և փոքր տնտեսություններում դրանց ոչ արդյունավետ օգտագործումը, որն էլ մեծացնում է նորոգումների ու տեխնիկական սպասարկումների ծախսերը և բարձրացնում ծառայությունների սակագները: Ակնհայտ է ձեռքի աշխատանքով զբաղվածության բարձր տեսակարար

կշիռը և արտադրության ինտենսիվացման ցածր մակարդակը, և միաժամանակ շատ դեպքերում էլ մեքենայական աշխատանքների բարձր սակագների պատճառով ագրոտեխնիկական կանոններով պահանջվող գործընթացները կամ չեն կատարվում կամ էլ իրականացվում են ձեռքի աշխատանքով, որն էլ իր հերթին խիստ բարձրացնում է մշակության աշխատատարությունը՝ խախտելով աշխատանքների կատարման նորմավորված ժամկետները:

Ուստի, ելնելով հանրապետությունում տնտեսական աճի ապահովումից, խիստ անհարաժեշտություն կա գյուղատնտեսական տեխնիկայի վերազինման ու դրա օգտագործման արդյունավետության բարձրացման՝ հողօգտագործողների միջև համագործակցության տարբեր ձևերի խթանման և հողակտորների միավորման միջոցով: Ստորև ներկայացված է ՀՀ-ում գյուղտեխնիկայի առկայի և սարքինության վիճակը 2016թ. վերջի դրությամբ (Աղյուսակ 5):

*Աղյուսակ 5. ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի առկայության և սարքինության վիճակը՝ ըստ 2016 թ.*[58]

| Անվանումներ | Առկա քանակը, հատ | Որից՝ սարքին վիճակում, հատ | Սարքինության մակարդակը, % |
|---|---|---|---|
| 1. Տրակտորներ | 15 239 | 11 960 | 78.5 |
| 2. Բեռնատար ավտոմեքենաներ | 15 049 | 11 509 | 76.5 |
| 3. Հացահատիկահավաք կոմբայն | 1 358 | 1 031 | 75.9 |

[58] http://www.armstat.am

| | | | |
|---|---|---|---|
| 4. Տրակտորային կցասայլեր | 6 195 | 5 365 | 86.6 |
| 5. Տրակտորային խոտհնձիչներ | 2 112 | 1 772 | 83.9 |
| 6. Կերահավաք կոմբայններ | 421 | 308 | 73.2 |
| 7. Հատիկազտիչ մեքենաներ | 422 | 360 | 85.3 |
| 8. Տրատորային շարքացաններ | 1 884 | 1 599 | 84.9 |
| 9. Տրակտորային գութաններ | 3 900 | 3 398 | 87.1 |
| 10. Կուլտիվատորներ | 2 318 | 1 949 | 84.1 |
| 11. Հավաքիչ-մամլիչ մեքենաներ | 1 738 | 1 484 | 85.4 |
| Ընդամենը | 50636 | 40735 | 81.9 |

Աղյուսակի տվյալներից ակնհայտ է, որ 2016 թվականի վերջում գյուղտեխնիկայի փաստացի վիճակը կազմել է 50636 միավոր, որոնցից սարքին վիճակում եղել են 40735 միավոր, իսկ սարքինության մակարդակը կազմել է 81.9%:

Գյուղատնտեսությունում արտադրատեխնիկական սպասարկումների և մատակարարումների գործընթացի բարելավումը հնարավոր է համարվում տարբեր դրամաշնորհային և վարկային ծրագրերով, պետական աջակցությամբ հանրապետություն ներկրված գյուղատնտեսական տեխնիկական միջոցների բազայի հիման վրա՝ մեքենատրակտորային կայանների ստեղծման և դրանց

գործունեության ապահովման միջոցով: Միաժամանակ, արտադրատեխնիկական սպասարկումների ներկա վիճակից ելնելով, առկա խնդիրների գնահատման արդյունքում, անհրաժեշտ է ոլորտում տեխնիկական վերազինման հիմնական ուղղությունների մշակում և դրանց համահունչ գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման միջոցով այդ ոլորտում տեխնիկայի օգտագործման արդյունավետության բարձրացում: Ուստի դրանց հասնելու համար անհրաժեշտ է.

- Համատեղ գործունեության նպատակով (պետություն-մասնավոր հատված) կոոպերացված սուբյեկտներին գյուղտեխնիկայի ձեռքբերման համար երկարաժամկետ և արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրում,
- Դրամաշնորհներով ստացված գյուղատնտեսական տեխնիկայի բաշխման մեխանիզմների բարելավում՝ աջակցելով կոոպերատիվների ձևավորմանը,
- Գյուղատնտեսական տեխնիկա արտադրող ընկերությունների հետ վստահելի փոխհարաբերությունների ձևավորում ներքին շուկայում՝ տեխնիկայի մատակարարման և տեխնիկական սպասարկումների ցանցի ստեղծման համար,
- Գյուղատնտեսական արտադրությունում մեքենայական աշխատանքների ծավալների ընդլայնում և ծառայությունների մատչելիության ապահովում:

Պետք է նշել նաև այն իրողությունը, որ գյուղատնտեսության մեջ մեքենայական աշխատանքների իրականացումը կապված է ռիսկերի հետ: Այսպես, գյուղացիական տնտեսությունների փոքր չափերը և հողատեսքերի կտրտվածությունը բացասաբար է ազդում տեխնիկայի օգտագործման արտադրողականության վրա, որը պահանջում է միջոցառումների իրականացում տնտեսությունների խոշորացման և հողերի միավորման ուղղությամբ: Այդ միջոցառումների թվին են դասվում.

- Ոլորտում տնտեսվարողների մրցունակության ապահովում և դրանց կենսամակարդակի բարձրացում,

- Գյուղական համայնքների արտադրական ու սոցիալական ենթակառուցվածքների զարգացում և գյուղական տարածքներում ոչ գյուղատնտեսական զբաղվածությամբ գործունեության ընդլայնում,
- Գյուղական համայքներում տնտեսվարողների համար վարկային միջոցների ձեռքբերման մատչելիության ապահովում և փոքր ու միջին ձեռնարկատիրության պետական աջակցության ընդլայնում:

Ագրարային ոլորտում տեխնիկական միջոցներով վերազինման ու դրա օգտագործման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ստեղծել նպաստավոր պայմաններ ու հնարավորություններ, որոնք պայմանավորված կլինեն կոոպերացված գյուղատնտեսական սուբյեկտների (կոոպերատիվների) լիարժեք գործունեությամբ: Ուստի այդ առումով էլ գյուղատնտեսական կոոպերատիվներին տեխնիկական միջոցներ տրամադրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ սկզբունքները՝

- ըստ մարզերի և առանձին տարածաշրջանների գյուղատնտեսական տեխնիկայի ապահովվածության փաստացի մակարդակի գնահատում,
- մրցութային կարգով կատարել մեքենայական աշխատանքներ իրականացնող կոոպերատիվների ընտրություն՝ պահպանելով հետևյալ պահանջները.

ա)կոոպերատիվը պետք է լինի 15 անդամից ոչ պակաս և 40 հեկտար սեփականության իրավունքով մշակովի հողատարածք

բ) կոոպերատիվի անդամները պետք է ունենան տեխնիկան օգտագործելու փորձ, որը կլինի վարձակալած կամ սեփական տեխնիկա:

Այսպիսով, ագրարային ոլորտի առջև ծառացած խնդիրների որոշակի մասի լուծմանը կամ մեղմացմանը կարող են նպաստել տվյալ ճյուղում տեխնիկական միջոցներով վերազինումը և դրանց օգտագործման արդյունավետության

բարձրացումը՝ հիմնվելով կոոպերացման գործընթացի արմատավորման և դրա գործունեության համար պայմանների ու մեխանիզմների ստեղծման վրա:[59]

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման գործընթացում մեծ տեղ է հատկացվում գյուղատնտեսական արտադրության զարգացմանը, արդի կարևոր ուղղություններից է օրգանական (էկոլոգիական) գյուղատնտեսությունը: Օրգանական գյուղատնտեսությունը համակարգ է, որը նպատակաուղղված է բարելավելու և խրախուսելու գյուղատնեսական արտադրությունը՝ բնապահպանական, սոցիալական և տնտեսական տեսանկյունից: Այս համակարգը հողի բարելավումը դիտարկում է որպես հիմնական առանցքային ուղղվածություն որակյալ մթերքների արտադրության գործընթացում: Ինչպես գյուղատնտեսական մթերքները, այնպես էլ սննդամթերքները օրգանական են կոչվում, եթե համապատասխանում են որոշակի չափանիշների, մասնավորապես հողի մշակումից մինչև իրացում: Օրգանական գյուղատնտեսությունը մի համակարգ է, որտեղ չեն կիրառվում թունավոր նյութեր, կայուն պեստիցիդներ և քիմիական պարարտանյութեր:

Հայաստանյան շուկայում դեռևս լայն տարածում չունի օրգանական սննդամթերքը: Պատճառը նմանօրինակ արտադրանքի փոքր շուկան է, որը սակայն կարող է մեր երկրում զարգացման և ընդլայնման լուրջ հեռանկարներ ունենալ:

2008թ. ապրիլի 8-ին ընդունվել է «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է օրգանական գյուղատնտեսության մթերքի և հումքի արդյունավետության, պահպանման, վերամշակման, փոխադրման, իրացման, ինչպես նաև վայրի բույսերի մթերման հետ կապված հարաբերությունները, սահմանում է օրգանական գյուղատնտեսության վարման

---

[59] ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Երևան, 2015թ

իրավական հիմքերը, սկզբունքները, արտադրանքի շրջանառությանը ներկայացվող հիմնական պահանջները, պետական աջակցության ուղղությունները և լիազոր մարմնի պարտավորությունները: Սույն օրենքը ուժի մեջ է մտել 2009թ. մայիսի 14-ից:[60]

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը զարգացման միտումներ ունի և, գնալով ավելի շատ հողակտորներ են ընդգրկում, ու դրանց համահունչ ավելանում են վերամշակող գյուղատնտեսական արտադրանքի ծավալները: Այժմ օրգանական մթերք արտադրելու և իրացնելու հավաստագիր ունեն թվով 34 ֆերմեր, 3 մեղվապահական և 7 վերամշակող ընկերություններ:

Օրգանական գյուղատնտեսությանը աջակցելու և զարգացնելու համար անհրաժեշտ է՝

- Իրավաօրենսդրական հիմքի ձևավորմամբ օրգանական գյուղատնտեսության գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում,
- Օրգանական եղանակով գործող տեղական արտադրողների շահերի պաշտպանություն,
- Պետական ծրագրերում, մասնավորապես ագրարային ոլորտի ուղղություններում օրգանական գյուղատնտեսության կայուն դիրքի պահպանում և պետական աջակցության շրջանակներում դրանց ներառում,
- Նպատակային վարկերի կիրառմամբ օրգանական գյուղատնտեսության զարգացման խթանում,
- Ագրարային ոլորտում իրականացվող վարկային ծրագրերում օրգանական գյուղատնտեսության զարգացման բաղադրիչների նախատեսում և կիրառում,
- Օրգանական գյուղատնտեսության արտադրանքի իրացման երաշխավորված մեխանիզմների ստեղծում,

[60] «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենք

• Միջպետական մակարդակով էկոլոգիական գյուղատնտեսության արտադրանքի արտահանման հնարավորությունների ստեղծում,

• Օրգանական գյուղատնտեսության տեղեկատվական և խորհրդատվական համակարգի ձևավորում, որը կներառի ինչպես տեղական, այնպես էլ արտաքին շուկաները,

• Հանրապետության, մարզերի և տարածաշրջանների կտրվածքով օրգանական գյուղատնտեսության կազմակերպման միավորների՝ մասնավորապես կոոպերացման սկզբունքով նոր կառույցների ձևավորում:

Գյուղատնտեսական վարկավորումը դեռևս մնում է ոլորտի կարևորագույն խնդիրներից մեկը՝ չբավարարելով գյուղատնտեսությունում տնտեսվարողների առկա պահանջարկը և, միաժամանակ առաջարկելով վարկավորման թչ մատչելի պայմաններ: Պետք է գործեն այնպիսի վարկավորման շուկայական մեխանիզմներ, որտեղ գյուղատնտեսության վարկավորումը փեխշահավետ լինի և ֆինանսական կազմակերպությունների, և գյուղացիական տնտեսությունների համար:[61]

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի սուբսիդավորման» կարգի համաձայն ՀՀ ողջ տարածքում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվում են մատչելի տոկոսադրույքներով վարկեր.

• Վարկերը տրամադրվել են առավելագույնը 14 տոկոս փաստացի տոկոսա-դրույքով, որից 4 տոկոսային կետը սուբսիդավորվել է պետության կողմից, իսկ հանրապետության առավել կարիքավոր 225 համայնքների վարկառուների դեպքում սուբսիդավորվել է վարկի տոկոսադրույքի 6 տոկոսային կետը: Արդյունքում՝ վարկառուները հնարավորություն են ստացել ձեռք բերել շուկայականից անհամեմատ ցածր (համապատասխանաբար 10 և 8 տոկոս)

[61] ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ծրագիր

տոկոսադրույքով վարկեր: 2015 թվականից սկսած սուբսիդավորումը իրականացվում է 6 տոկոսին համարժեք մասով, և արդյունքում՝ տնտեսավարողը վարկը ստանում է փաստացի 8 % տոկոսադրույքով:

- Յուրաքանչյուր գյուղացիական տնտեսությանը տրամադրվող վարկի մայր գումարը կազմում է մինչև 3 միլիոն դրամ,
- Վարկերը տրամադրվում են ՀՀ դրամով և մինչև 2 տարի մարման ժամկետով,
- Մայր գումարի և տոկոսների վճարման համար արտոնյալ ժամկետը վարկի տրամադրման պահից սահմանված է առնվազն վեց ամիս (վարկի տոկոսների վճարման պարտականությունը վարկառուի մոտ առաջանում է վարկի տրամադրման պահից սկսած վեց ամիս հետո):

Նշված կարգին համապատասխան վարկավորմումը հիմնականում իրականացվում է ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլբանկի կողմից: 2011 թվականի ապրիլի սկզբից մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությունում տնտեսավարողներին տրամադրվել է 109.5 մլրդ. դրամի 91.5 հազ. Միավոր վարկ: Ընդհանուր առմամբ, վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 4.0 մլրդ. դրամ, որից 2016 թվականին՝ 895 մլն. դրամ: 2016 թվականի ընթացքում տրամադրված վարկերի գումարը կազմել է շուրջ 15.0 մլրդ. դրամ:[62]

Հանրապետության գյուղատնտեսական հումքի վերամշակման ոլորտին վերաբերող հիմնախնդիրների լուծման, տեղական արտադրողների մրցունակության բարձրացման, տեղական արտադրողների շահերի պաշտպանության, ստեղծված աշխատատեղերի պահպանման և նորերի ստեղծման, միջազգային շուկային ինտեգրման և արտահանման ծավալների

[62] http://minagro.am

ավելացման նպատակով անհրաժեշտ միջոցառումները կարող են իրականացվել պետության կողմից հատուկ ծրագրերի շրջանակներում՝ առաջնային համալրելով սննդամթերքի անվտանգության, ենթակառուցվածքների կարողությունների հզորացման, գյուղական համայնքներին արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների բարելավման, գիտական կադրերի պատրաստման և այլ հարցեր: Ռազմավարության նպատակն է՝ ՀՀ գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերական կազմակերպությունների կարողությունների հզորացման և մրցունակության բարձրացման միջոցով ապահովել հիմնական պարենամթերքի ներմուծման փոխարինում արտահանման ուղղվածություն ունեցող արտադրանքով և ինքնաբավության մակարդակի բարձրացում: Դրա համար պահանջվում է.

- Ագրովերամշակող կազմակերպությունների տնտեսական գործունեությունը խթանող օրենսդրական բարեփոխումների իրականացում, ըստ որի կարևորվում է ագրովերամշակման ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրության և արտադրանքի փորձարկման մեթոդները սահմանող Հայաստանի ստանդարտների միջազգային պահանջներին համապատասխանեցումը,
- Գյուղատնտեսական վերամշակման ոլորտում պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունավետ մեխանիզմների ներդրում և դրա գործունեության ապահովում, որի համար պահանջվում է իրավաբանական անձերով ձևավորել միություններ՝ Հայաստանի «պահածոյագործների և հյութ արտադրողների», «միս և մսամթերք արտադրողների», «կաթ և կաթնամթերք արտադրողների» մասնագիտական ուղղվածությամբ,

Գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշանկողների միջև պայմանագրային փոխշահավետ հարաբերությունների հաստատում և հումքային բազայի վերաբերյալ տեղեկատվության ստացման և հումքի գնումների

կազմակերպման գործընթացի կատարելագործում, որի համար պահանջվում է կայուն և որակյալ հումքային բազայի ապահովում և հումքի գնման պայմանագրային երկարաժամկետ փոխհարաբերությունների հաստատման ընդլայնում և արմատավորում:

Արդյունաբերական ներուժի և բնական ռեսուրսների առումով, մեր հանրապետությունում առանձնանում են ք. Երևանը, Սյունիքի, Արարատի, Կոտայքի, Լոռու մարզերը:

Արդյունաբերությամբ ամենազարգացածը Երևան քաղաքն է: Չնայած այն փաստին, որ այստեղ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում զգալի բաժին է կազմում մշակող արդյունաբերությունը, բայց և այնպես, Երևանի մշակող արդյունաբերությունը զարգացման և տարածաշրջանում մրցակցային ապրանքներ ստեղծելու խնդիր ունի: Այդ ամենի համար Երևանում կան անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներ:

Սյունիքը արդյունաբերական տեսանկյունից Հայաստանի ամենազարգացած մարզերից մեկն է: Այն նաև օգտակար հանածոներով հանրապետության ամենահարուստ մարզն է: Հանրահայտ են Քաջարանի, Կապանի, Ագարակի, Դաստակերտի, Լիճքի, Սվարանցի՝ մոլիբդենի, պղնձի, ոսկու և հազվագյուտ այլ մետաղների հանքավայրերը: Այստեղ զգալիորեն մեծ են բազալտի, մարմարի, կրի, կավի, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի պաշարները, հիդրոէներգետիկ ռեսուրսները, առկա են բերրի սևահողեր, հարուստ անտառներ:

Արդյունաբերության բնագավառում, ի լրումն ընդերքի օգտագործման ոլորտի, զարգացած է նաև էլեկտրաէներգիայի արտադրությունը, գործում են մեքենաշինության էլեկտրատեխնիկական, սննդի արդյունաբերության, փայտամշակման, և շինանյութերի ձեռնարկություններ:

Զարգացած արդյունաբերությանբ աչքի է ընկնում նաև Արարատի մարզը: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ երեք ճյուղերը. Սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և

պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն), ծխախոտի արտադրություն, ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, քարի կտրում և վերամշակում): Արդյունաբերության տեսանկյունից, մարզը զարգացած է չափազանց անհամաչափ: Արդյունաբերական կազմակերպությունները կենտրոնացած են հիմնականում Արարատի տարածաշրջանում, իսկ Մասիսի և Արտաշատի տարածաշրջաններին, միասին վերցրած, բաժին է ընկնում արտադրության համախառն արդյունքի 33.0%-ը[63]:

Արդյունաբերությունը զարգացած է նաև Կոտայքի և Լոռու մարզերում: Մասնավորապես՝ Լոռու մարզը հարուստ է արտադրական նշանակության օգտակար հանածոներով (պղինձ, կապար, ոսկի, արծաթ), շինարարական ու դեկորատիվ հանքերով (գրանիտ, բազալտ, ֆելզիտ): Ելնելով մարզի արդյունաբերության ներկա իրավիճակից, հեռանկարներից և հնարավորություններից, ինչպես նաև հաշվի առնելով հանրապետության աշխարհագրական դիրքը՝ այստեղ արդյունաբերության զարգացման հիմնական ուղղություններ կարող են լինել՝ գյուղմթերքների վերամշակումը լեռնահանքային արդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը, մետալուրգիան, թեթև արդյունաբերությունը, էներգակիրների արտադրությունը:

Կոտայքի մարզում արդյունաբերությունը տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկն է: Մարզի հանքային հարստություններից արդյունաբերական նշանակություն ունեն Աբովյանի երկաթի հանքավայրը, քարաղի, շինանյութերի (պեռլիտ, բազալտ, անդեզիտ, տուֆ) հանքավայրերը: Կան հանքային և բարձրորակ քաղցրահամ ջրերի աղբյուրներ: Արդյունաբերական արտադրության ծավալի ներուժը կենտրոնացված է հիմնականում քաղաքային մի շարք համայնքներում՝ Հրազդան, Չարենցավան, Աբովյան: Մարզում մեծ թիվ են կազմում էներգետիկայի, մեքենաշինական, սննդի արդյունաբերության, հանքարդյունահանման, քարամշակման, փայտամշակման, ծկնաբուծության, շինանյութերի և այլ ձեռնարկությունները: Մարզն արդյունաբերության զարգացման մեծ ներուժ ունի հետևյալ ոլորտներում՝ սննդամթերքի և ըմպելիքի, մետաղագործական

[63] ՀՀ Արարատի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 43:

արդյունաբերություն և մետաղե արտադրատեսակների արտադրություն, ոչ մետաղական հանքային այլ արտադրանքի արտադրություն, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտադրություն և մշակում և այլն:

Զարգացման մեծ ներուժ ունի Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանը՝ հատկապես հանքաքարերի արտադրության ոլորտում: Ճիշտ է, ներկայումս արդյունաբերությունն այստեղ չափազանց թույլ է զարգացած, սակայն տարածքը բավական հարուստ է օգտակար հանածոների պաշարներով: Դրանք հիմնականում հրաբխային ապարատեսակներնեն՝ պեռիլտը, , բազմագույն տուֆերը, բազալտը:

Արդյունաբերության ճյուղի կայուն զարգացման բարելավման հիմնական ուղղությունները ենթադրում են համալիր միջոցառումների իրականացում, որը ներառում է հետևյալ ուղղությունները՝

1. Արդյունաբերության արտահանելի հատվածի ընդլայնում և զարգացում: Հայաստանի արդյունաբերական ճյուղի մի զգալի հատվածը ունի արտահանման մեծ ներուժ: Այդ իսկ պատճառով էլ դեռևս 2011 թվականից ՀՀ կառավարությունը որդեգրել է արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության իրականացումը:[64] Արդյունաբերական քաղաքականության ուղղորդող տեսլականը Հայաստանը բարձր արժեք և գիտատար ապրանքների և ծառայությունների արտադրության երկիր դարձնելն է, որի առանցքը ստեղծագործ մարդկային կապիտալն է: Այս տեսլականի իրագործումը պահանջում է փուլային մոտեցում՝ ենթադրելով աստիճանական անցում ռեսուրսահինտենսիվ արտադրություններից դեպի ունակությունների և հմտությունների, և այնուհետև՝ գիտելիքի վրա հիմնված արտադրությունների գերակշիռ դերակատարության երկարաժամկետ հեռանկարում:[65]

Արտահանման զարգացումը ապահովելու նպատակով անհարեժեշտ է.

[64] Արդյունաբերության զարգացման 2016-2020թթ պետական ծրագիր

[65] ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր

- Արտահանմանն ուղղված առկա պետական աջակցության ծրագրի շարունակական իրականացում:
- Արտահանման դիվերսիֆիկացմանն ուղղված միջոցառումների և աջակցության նոր գործիքների մշակում և ներդրում, մասնավորապես՝ նոր շուկաների ուսումնասիրություն և այդ շուկաներ մուտքի ապահովմանն ուղղված գործողություններ:
- Արտադրանքի մրցունակությանն ուղղված պետական աջակցության նոր գործիքների մշակում և ներդրում, մասնավորապես՝ աջակցության գործիքների կիրառում, որոնք կբերեն ինքնարժեքի նվազեցմանը (տրանսպորտային և այլ ենթակառուցվածքային ծախսերի մասնակի սուբսիդավորում, մարքեթինգային ծախսերի փոխհատուցման մեխանիզմների կիրառում և այլն) և արտադրանքի որակի բարձրացմանը:
- Արտերկրում առևտրային ներկայացուցչությունների և տների հիմնում:
- Աջակցություն մասնագիտացված արտահանող կառույցների ձևավորմանը:

2. Արդյունաբերության զարգացման նպատակով տեղական շուկայի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում. Միջազգային փորձը ցույց է տալիս, որ փոքր շուկա ունեցող երկրի արդյունաբերության զարգացման համար արտահանումը կարևոր նախապայման է, սակայն ճյուղի զարգացման տեսանկյունից ներքին շուկայի ռեսուրսների մոբիլիզացիան և արդյունավետ ուղղորդումը ոչ պակաս կարևոր է: Արտահանումը պետք է դիտարկել նաև արտաքին առևտրաշրջանառության տեսանկյունից, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ եթե տեղական արտադրանքի արտահանումը կարող է բերել ներքին շուկայում այդ արտադրանքի դեֆիցիտին և հետևաբար անհրաժեշտ կլինի այն փոխարինել ավելի թանկ ներմուծվող նմանատիպ ապրանքով, ուստի

բացասական ազդեցություն կարող է ունենալ նաև արտաքին առևտրի հաշվեկշռի վրա: Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներմուծումն գրեթե 3 անգամ գերազանցում է արտահանմանը: Ներմուծվող ապրանքների զգալի մասը նախկինում արտադրվել է տեղական ընկերությունների կողմից և այդ ներուժը ներկայումս էլ առկա է: Ներկրվող ապրանքները տեղական արտադրանքով փոխարինելու տեսանկյունից, բացի ապրանքի մրցունակությունից, կարևոր նշանակություն ունի նաև ներկրողների և արտադրողների միջև սերտ համագործակցությունը: Արդյունաբերության ճյուղի զարգացման նպատակով տեղական շուկայի ռեսուրսների օգտագործման տեսանկյունից կարևորվում է նաև տեղական արդյունաբերական ընկերությունների միջև կոոպերացիոն կապերի զարգացումը և ձևավորումը: Ներկայումս մի շարք ընկերություններ իրենց արտադրանքի թողարկման համար բազմաթիվ կոմպլեկտավորող դետալներ են ներկրում, սակայն այդ դետալները նաև արտադրվում կամ կարող են արտադրվել տեղական ընկերությունների կողմից: Նշվածը պայմանավորված է նաև իրազեկվածության ցածր մակարդակով: Տեղական շուկայի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացումն պետք է դիտարկել նաև տեղական հումքի առավել խորը վերամշակման ապահովումը հանրապետությունում: Հնարավոր է դիտարկել հանքագործական արդյունաբերության արտադրանքից վերջնական սպառման արտադրանք դիտարկելը, ինչը պետք է իրականացնել քայլ առ քայլ: Մասնավորապես կարևորվում է պղնձի խտանյութից մաքուր պղնձի ստացումը, իսկ հետագայում այդ պղնձի օգտագործումը այլ արտադրություններում, ոսկու վերջնական զտարկման կազմակերպումը, ոչ մետաղական հանքանյութերից ջերմամեկուսիչ նյութերի արտադրության կազմակերպումը և այլն:

Արդյունաբերության զարգացման համար տեղական շուկայի ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է

- Ներկրվող ապրանքատեսական ու վերիանում և տեղական արտադրությամբ փոխարինելու նպատակով առանձնացում:
- Տեղական արտադրանքի մրցունակության՝ որակի, արտադրողականության և կառավարման որակի բարձրացման նպատակով արտադրական ընկերություններին պետական աջակցության տրամադրում:
- Բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորման նպատակով իրավա- օրենսդրական, տեխնիկական կանոնակարգման դաշտի մոնիթորինգի իրականացում և շարունակական բարելավում:
- Տեղական արտադրական ընկերություններ և ներկրողների միջև համագործակցության սերտացման նպատակով պարբերական հանդիպում-քննարկումների կազմակերպում և համագործակցության զարգացմանն ուղղված պետական խթանման և աջակվցության այլ մեխանիզմների կիրառում:
- Տեղական արտադրանքի ներքին շուկայում ներկայացման (ցուցահանդեսներ և այլն), գովազդիև PR արշավների կազմակերպման աջակցություն:
- Տեղական և ԵԱՏՄ անդամ երկրների արդյունաբերական ընկերությունների միջև համագործակցության ընդլայնման նպատակով հանդիպում, քննարկումների կազմակերպում:

3. Արդյունաբերության ճյուղում ներդրումների, նորարարությունների, տեխնոլոգիական վերազինման, կարողությունների զարգացման խթանում. Ներդրումների ներգրավումը անհրաժեշտ նախապայման է տնտեսության զարգացման համար և տնտեսության ցանկացած հատվածի զարգացումը առանց ներդրումների դժվար է պատկերացնել: Հանրապետության

արդյունաբերության ճյուղը նույնպես կարիք ունի ներդրումների, սակայն այնտեղ ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ է համապատասխան միջավայրի ստեղծում: Հայաստանի արդյունաբերական ճյուղի զարգացման տեսանկյունից կարևորվում է արտադրողականության բարձրացումը, որն հնարավոր կլինի ապահովել տեխնոլոգիական վերազինման և նորարարությունների ներդրման ճանապարհով: Այս տեսանկյունից անհրաժեշտ է հասցեական պետական քաղաքականության իրականացում, որը կապահովի ներդրումների իրականացումը տեխնոլոգիական վերազինման նպատակով, գործող ընկերություններում նորարարությունների կիրառման ու նորարարությունների հիման վրա նոր արտադրությունների ստեղծման նպատակով:

Ներդրումների իրականացումը, տեխնոլոգիական վերազինումը, նորարարությունների կիրառումը և մասնագիտական կարողությունների զարգացումը առավելագույնս կապահովեն արտադրվող ապրանքի մրցունակության բարձրացումը: Վերոնշյալի ապահովման նպատակով անհրաժեշտ է իրագործել հետևյալը.

- Իրավական դաշտի ուսումնասիրություն և բարեփոխում, ինչը կապահովի առավելագույն կայունություն,
- Արդյունաբերության ոլորտում ներդրումային փաթեթների մշակում և ներկայացում պոտենցիալ ներդրողներին: Փաթեթները պետք է ներառեն այն բոլոր տարրերը, ինչը կապահովի ծրագրի իրականացման ընթացքում ներդրողի և պետական մարմինների միջև նվազագույն«շփում»,
- Կապիտալ միջոցների ներկրման ժամանակ կբացառվի սահմանին հարկերի գանձման ընթացակարգերը,

- Կմշակվեն պետական աջակցության գործիքներ, որոնք կխթանեն ներդրումները տեխնոլոգիական վերազինման, նորարարությունների ներդրման գործընթացին: Մասնավորապես կկիրառվի դրամաշնորհների ու սուբսիդիաների տեսքով ֆինանսական աջակցության մեխանիզմներ և նպաստող հարկային դաշտի ձևավորում,
- Շարունակական կբացահայտվի անհրաժեշտ կադրային պահանջարկը և կիրականացվի համապատասխան պատրաստման և վերապատրաստման միջոցառումներ:

4. Արդյունաբերության տարածքային զարգացման ապահովում. Դեռևս խորհրդային ժամանակներից արդյունաբերական ձեռնարկությունները գործում էին հանրապետության տարբեր շրջաններում և քաղաքներում: Դրա արդյունքում մի շարք քաղաքներ մասնագիտացված էին որոշ ուղղություններով (օրինակ՝ Չարենցավանը՝ մեքենաշինությամբ, Գյումրին՝ տեքստիլ արդյունաբերությամբ և այլն): Դեռևս հանրապետության մարզերում որոշակիորեն պահպանված է և արտադրական հնարավորությունները և ավանդույթները: Հանրապետության մարզերում արդյունաբերության զարգացումը կարևորվում է նաև տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից: Ներկայումս «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքը նոր հնարավորություն է ստեղծել արդյունաբերության զարգացման ճանապարհով ապահովվելու նաև համաչափ տարածքային զարգացում: Այն է՝ արդյունաբերական գոտիների ստեղծումը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է իրագործել հետևյալը.

- Արդյունաբերական գոտիների ստեղծման հնարավորությունների (տարածքների) բացահայտում:

- Արդյունաբերական գոտիների ձևավորման և կառավարման մոդելի մշակում, միջազգային փորձի կիրառմամբ:

Աղքատության մակարդակ: Կիրառվելիք տնտեսական ու սոցիալական քաղաքականության հիման վրա նախատեսվում է 2017 թվականին աղքատության մակարդակը երկրում հասցնել շուրջ 24%-ի (2012 թվականի՝ 32.4-ի փոխարեն), 2021-ին՝ շուրջ 18%-ի, իսկ 2025-ին շուրջ՝ 13%-ի: Ծայրահեղ աղքատության պարագայում նախատեսվում է 2017 թվականին այն հասցնել 2.4%-ի (2012 թվականի՝ 2.8-ի փոխարեն), 2021-ին՝ 2.1%- ի, իսկ 2025-ին՝ 1.8%-ի՝ ըստ էության լուծելով այս հիմնախնդիրը, ինչպես նաև անհավասարության կրճատումը երկրում և նրա առանձին տարածքային միավորների միջև:

Աղքատության կրճատման հիմնական գործոնները տնտեսական աճով պայմանավորված բնակչության աշխատանքային եկամուտների աճը, այդ թվում՝ աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների առաջանցիկ աճը, ինչպես նաև սոցիալական ապահովագրությանն ու սոցիալական աջակցությանն ուղղված պետական ծախսերի ու դրանց նպատակայնության աճը (Աղյուսակ 6):

*Աղյուսակ 6. Աղքատության կրճատման հիմնական նպատակային ցուցանիշները*[66]

| | **Փաստ** | | | **Նպատակային ցուցանիշներ** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2010** | **2011** | **2012** | **2017** | **2021** | **2025** |
| Աղքատներ, տոկոս՝ բնակչության թվից | 35.8 | 35.0 | 32.4 | 23.7 | 18.1 | 13.0 |
| Ծայրահեղ աղքատներ, | 3.0 | 3.7 | 2.8 | 2.4 | 2.1 | 1.8 |

[66] ՏՏԿԱՀ 2008 և 2015թթ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| տոկոս՝ բնակչության թվից | | | | | | |
| ***Հուշագրային հոդվածներ*** | | | | | | |
| Աղքատության վերին ընդհանուր շեմ/գիծ, դրամ/ամիս | 33.517 | 36.158 | 37.044 | 43.218 | 48.642 | 54.747 |
| Ծայրահեղ/պարենային աղքատությն շեմ, դրամ/ամիս | 19.126 | 21.306 | 21.732 | 25.354 | 28.536 | 32.118 |

Ինչ վերաբերում է բնակչության առանձին թիրախային խմբերի աղքատության մակարդակին, ապա նպատակադրվում է աղքատության կրճատում երեխաների, կենսաթոշակառուների և զբաղվածների՝ վարձու աշխատողների ու ինքնազբաղվածների շրջանում: Մասնավորապես՝ աղքատ, այդ թվում՝ զբաղված աղքատ բնակչության աշխատանքային եկամուտների աճն ապահովելու նկատառումով նախատեսվում է նվազագույն աշխատավարձի շարունակական աճ այն հաշվով, որ աղքատության վերին շեմի նկատմամբ դրա հարաբերակցությունն անընդմեջ աճի: Դրա արդյունքում նվազագույն զուտ աշխատավարձը, որը 2010-2012 թթ. կազմում էր աղքատության վերին շեմի շուրջ 89-90%-ը, 2017 թվականին կկազմի դրա շուրջ 160%-ը, 2021 թ-ին՝ 190%-ը, իսկ 2025 թվականին՝ 240%-ը:

Կենսաթոշակառուների (ու նրանց ընտանիքների) աղքատության մակարդակի կրճատումն ապահովելու առումով՝ նախատեսվում է աշխատանքային կենսաթոշակների միջին մակարդակի անընդմեջ աճ՝ ինչի հետևանքով վերջինս 2017 թվականին կկազմի աղքատության վերին շեմի շուրջ 125%-ը, 2021 թվականին՝ 155%-ը, իսկ 2025 թվականին՝շուրջ 200%-ը:[67]

Միգրացիա: Ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակում առավել կարևորվում են այն զարգացման ծրագրերը, որոնց արդյունավետ իրականացումը էական

[67] ՀՀ 2014-2025 թթ. Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր

դրական ազդեցություն կարող է ունենալ Հայաստանի ազգաբնակչության բարոյահոգեբանական վիճակի, նրա կենսամակարդակի վրա, դրանով էլ կնպաստի ներգաղթին:

Առաջնային կարևոր է «Արդյունաբերության պետական աջակցության ծրագիրը»: Ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի ապահովման հրամայականներից՝ ՀՀ կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում, որը միտված է լինելու տնտեսության արտահանելի հատվածի ընդլայմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով: Հաջորդ ծրագիրը «ՓՄՁ զարգացման ծրագիր»-ն է, համաձայն որի «Հայաստանում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտի զարգացումը կոչված է ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ հաղորդելով տնտեսությանը նորարական ուղղվածություն և ճկունություն»: Չնայած նշված և ՀՀ կառավարության կողմից ընդունված այլ զարգացման ծրագրերի, Հայաստանից արտագաղթելու հիմնախնդիրը մնում է առանձնակի արդիական:

ՀՀ միգրացիոն ներկա իրավիճակը մեր երկրի առջև դրել է դրա բարելավման հետ կապված քաղաքական, կառավարչական բնույթի հետևյալ կարևորագույն մարտահրավերները՝

- Պետական կառավարման համակարգի բոլոր ենթաոլորտներում վարվող քաղաքականությունների միջոցով երկրում ստեղծել այնպիսի վիճակ, որի շնորհիվ կնվազեն ՀՀ բնակչության երկրից հեռանալու սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական և այլ դրդապատճառները, և հակառակը ՝ կավելանան երկրից արտագաղթողների վերադարձին:

Ստեղծել միգրացիոն հիմախնդիրների սրությանն ու բարդությանը համարժեքմիգրացիայի պետական կարգավորման այնպիսի համակարգ, որը թույլ կտա նվազագույնի հասցնել միգրացիայի բացասական հետևանքները և առավելագույնի հասցնել այդ երևույթի դրական ազդեցությունները մեր հասարակական կյանքի վրա:

Կրթություն: ՀՀ կայուն զարգացման բարելավման հիմնական ուղղությունները, որոնք կարող են ազդել կրթական համակրգի կայունացման և զարգացման վրա.

- Օգտագործելով ՀՀ-ում առկա գիտակրթական ներուժը, հնարավոր է Հայաստանը դարձնել գրավիչ միջազգային հանրության համար,
- Արտասահմանյան ուսանողների ներհոսքով պայմանավորված կրթական հաստատությունները կստանան լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ինչը կարող են օգտագործել մի շարք խնդիրներ լուծելու համար,
- Օգտագործել արտասահմանում վերապատրաստված մասնագետների, ուսանողների գիտական ներուժը ՀՀ կրթական համակարգում,
- Հիմնել տարածաշրջանային գիտահետազոտական կենտրոններ, որոնք հնարավորություն կտան տեղում կատարել հետազոտություններ և գիտական աշխատանքներ,
- Զարգացնել հնարավոր կրթական համակարգը:

Հատկանշական է այն փաստը, որ Հայաստանը, չունենալով ռեսուրսների բավարար չափով պաշար, արդյունքում արդյունաբերական բնույթի մրցունակ գործարաններ, զիջում է մի շարք առաջատար երկրներին տնտեսական բազում ցուցանիշներով: Սակայն անցում կատարելով գիտելիքահենք տնտեսության,

որտեղ կարևորվում է նորամուծությունը, գիտելիքը և տեխնոլոգիաները կարող են բավականին մրցունակ դիրք զբաղեցնել համաշխարհային շուկայում:[68]

Զբոսաշրջություն: Զբոսաշրջության բնագավառում պետական և տեղական իշխանությունների քաղաքականության նպատակը պետք է լինի այնպիսի մի համակարգի ստեղծումը, որը կբավարարի ճանապարհորդող քաղաքացիների պահանջները, կմեծացնի զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, միջազգային կապերի զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, կայուն զարգացման գործում: Այս ամենն իրականացնելու համար, անհրաժեշտ է համապատասխան ենթակառուցվածքների և բարվոք ճանապարհների առկայությունը, որի լուծմանը կնպաստեն ՀՀ-ում զբոսաշրջության համար համապատասխան պայմանների ստեղծումը և զարգացումը:

Հիմնվելով այս վերլուծությունների վրա, կարելի է դիտարկել արդյունաբերության ձևավորման նպատակահարմարությունը Ալավերդու, Արարատի, Արմավիրի, Կապանի, Հրազդանի շրջաններում, գյուղատնտեսության՝ Արարատի, Ապարանի, Ախուրյանի Էջմիածնի և Սևանա լճի հարակից շրջաններում, զբոսաշրջության՝ Տավուշի, Լոռու, Վայոց ձորի մարզերում:

Տեսական-մեթոդական մոտեցումների, արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կայուն զարգացման ձևավորման գործընթացը նպատակահարմար է իրականացնել երեք հիմնական փուլերով՝ ծրագրի մշակում, իրագործում և գնահատում:

Ընդունված է համարել, որ կարևոր նշանակություն ունի առաջին փուլը, որում որոշվում է ձևավորվող ծրագրի ներուժը:

Երկրորդ փուլի խնդիրներն են կայուն զարգացման ձևավորման գործընթացների ակտիվացումը, այդ գործընթացներում հնարավոր մասնակիցների ընդգրկումը:

Որպեսզի կայուն զարգացման ձևավորման գործընթացը իրապես սկսվի, անհրաժեշտ է պետական և տարածաշրջանային իշխանական կառույցների

---

[68] ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Երևան, 2016թ

նախաձեռնությունը: Իշխանությունների գործողությունները պետք է ուղղված լինեն, ամենից առաջ, խորհրդի ձևավորմանը՝ կայուն զարգացման նախագծերի պլանավորման և իրականացման, նրանց մասնակիցների շահերի համախմբման, ներքին հակասությունների լուծման, գործունեության կոորդինացման աջակցման ու զարգացման նպատակով: Խորհրդի անդամներ կարող են դառնալ նրա ստեղծման մեջ բոլոր շահագրգիռ անձինք՝ իշխանության տեղական մարմինների, ձեռնարկատերերի բազմաթիվ միավորումների և միությունների, կրթական հաստատությունների և խոշոր ընկերությունների ներկայացուցիչները: Այնուհետև անհրաժեշտ է որոշել նպատակներն ու խնդիրները, հիմնական մասնակիցների կազմը՝ արտադրողներ, մատակարարներ, սպառողներ, բոլոր նրանք ովքեր կապված են միմյանց հետ արտադրանքի ստեղծման և իրացման գործընթացներում:

Հիմնական փուլի արդյունքը ծրագրի իրականացումն է: Եզրափակիչ փուլում, տնտեսական զարգացումը բնութագրող ցուցանիշների հիման վրա պետք է կատարվի կայուն զարգացման գործունեության գնահատում: Գնահատման արդյունքների հիման վրա կարող են իրականացվել կայուն զարգացման ծրագրերի ճշգրտումներ, նրանց գործունեության մեջ անհրաժեշտ փոփոխություններ:

ՀՀ-ում կայուն զարգացման հնարավորությունների բացահայտումը և գործնական կիրառումը, որպես տնտեսական համագործակցության և կապերի նոր ձև, կստեղծեն որոշակի սոցիալ-տնտեսական արդյունք, ինչը կդրսևորվի հետևյալ ուղղություններով.

- ՀՀ-ում մրցունակության և տնտեսական զարգացման մակարդակի բարձրացում,
- տնտեսության զարգացման անհամաչափությունների նվազում,
- նոր աշխատատեղերի ստեղծում, գործազրկության կրճատում,
- գիտելիքահենք տնտեսության ձևավորում,
- ներքին սպառման շուկաների ու արտահանման ծավալների ավելացում և այլն:

ՀՀ շրջաններում տնտեսության զարգացումը կարող է որոշակի խթան դառնալ կայուն և համաչափ սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության մեկ այլ

գերակա ուղղության՝ տնտեսության դիվերսիֆիկացման համար՝ ուղղված տարածաշրջանների տնտեսության մրցունակության ապահովմանը:

Առաջին քայլերից հետո հաճախ կազմավորվում են նորերը, որոնք, ի վերջո, նպաստում են ոչ միայն տարածաշրջանի, այլև ողջ երկրի մրցունակության բարձրացմանը: Այդ իսկ պատճառով իշխանության գործադիր և ներկայացուցչական մարմիններն առաջնահերթ նշանակություն պետք է տան փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը: Հատկապես փոքր բիզնեսն է բավականաչափ արագ հարմարվում փոփոխվող շուկայական պայմաններին և շատ դեպքերում հանդես գալիս նորարական նախաձեռնությունների և նախագծերի ակտիվ մասնակից: Եվ պետության դերը կայանում է նրանում, որպեսզի նպաստավոր պայմաններ ստեղծի բիզնեսի զարգացման համար և խրախուսի ներդրումային աճի ոլորտները, որպեսզի առավելագույն չափով օգտագործի դրանք գլխավոր նպատակի՝ տարածաշրջանի բնակչության կյանքի մակարդակի և որակի բարձրացմանը:

ՀՀ կայուն զարգացման կարևորագույն ուղղություններից է պետություն-մասնավոր հատված գործընկերությունը: Դրա կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարգավորվող շուկայական հարաբերությունների պայմաններում պետությունը չի կարող գոյություն ունենալ առանց բիզնեսի, ինչպես և բիզնեսը՝ առանց պետության աջակցության: Պետության և բիզնեսի գործընկերության ինստիտուտը կարող է դիտարկվել որպես հանրային ծառայությունների մատուցման գործընթացում մասնավոր հատվածի ներգրավման կառուցակարգ, ինչպես նաև պետական կարգավորման կառուցակարգերի համակարգի մաս, որն ապահովում է նորամուծական ակտիվության խրախուսում, արդյունաբերական քաղաքականության իրականացում, ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտներում ներդրումների ներգրավում:

Պետության և բիզնեսի արդյունավետ փոխհարաբերություններում մեծ նշանակություն ունեն, այսպես կոչված, «խաղի կանոնները», որոնք ապահովում են ձեռնարկատիրական գործունեության խրախուսումը, տնտեսավարող սուբյեկտների ներուժի արդյունավետ օգտագործման համար առավելագույն նպաստավոր պայմանների ստեղծումը:

ՀՀ-ում կայուն զարգացման բարելավման նպատակով, օգտակար կարող է լինել կայուն զարգացման քաղաքականության ոլորտում առաջավոր արտասահմանյան երկրների փորձի կիրառումը: Մասնավորապես՝ Եվրոպայում այդ նպատակով ստեղծվում են հատուկ հիմնադրամներ, որտեղ կուտակվում են հսկայական ֆինանսական ռեսուրսներ: Այդ միջոցները հիմնականում ուղղվում են այն ոլորտներ, որոնք խթանում են ԵՄ երկրներում տնտեսության աճը և զբաղվածության մակարդակի բարձրացումը: Այդ քաղաքականության ծրագրի հիմնական գերակայությունների թվում, ամենից առաջ, կարելի է առանձնացնել գիտության և տեխնոլոգիական զարգացման ոլորտում, տեղեկատվական-համակարգչային տեխնոլոգիաների, փոքր և միջին ձեռնարկատիրության, ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացման մեջ ներդրումների իրականացումը: Մեր հանրապետությունում, ներկա պայմաններից ելնելով, կարելի է խոսել բյուջեի կամ զարգացման հիմնադրամի ձևավորման մասին, որի միջոցները կարող են ուղղվել հեռանկարային նպատակների իրականացմանը:

Աշխարհի զարգացած երկրներում լայն տարածում ստացած՝ կայուն զարգացման քաղաքականության և կառավարման կարգավորման արդյունավետ ուղղություններից է տարածքային զարգացման գործակալությունների (կորպորացիաների) գործունեությունը, որպես ոչ պետական կառույցներ, որոնք աշխատում են բիզնեսի և պետության շահերի սահմանագծին և իրականացնում կոնկրետ տարածքների նպատակային նախապատրաստում որոշակի նախագծերի գործարկման համար: Մեր հանրապետությունում այդպիսի գործակալությունների գործունեությունը կարող է օգտակար լինել ներդրումների ներգրավման և բիզնես նախագծերի իրականացման մեջ, փոքր և միջին բիզնեսի գործունեությանն աջակցություն ցույց տալու, տարածաշրջանային աճի կենտրոնների բացահայտման և արդիականացման առումներով: Քանի որ պետական իշխանության մարմինները չունեն այդպիսի գործունեությանն ուղղակի մասնակցության հնարավորություն, նրանք կարող են նման աշխատանքները հանձնել աուտսորսինգի:

Տարբեր մակարդակի սոցիալ-տնտեսական համակարգերի արդյունավետ զարգացման գլխավոր պայմաններից մեկը կարող է լինել ռազմավարական

պլանավորման և ռազմավարական կառավարման համակարգի ստեղծումը, որը կընդգրկի տնտեսության բոլոր մակարդակները:

Սկզբունքային նշանակություն ունի պետական իշխանության մարմինների կողմից տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետության խրախուսման համակարգի ներդրումը՝ միաժամանակ խստացնելով տարածքային կազմավորումների կողմից դոտացիաների օգտագործման նկատմամբ վերահսկողությունը, պարտավորությունները չկատարելու և սոցիալ-տնտեսական կայուն զարգացման՝ նախատեսված ցուցանիշները չապահովելու համար պատժամիջոցները:

Այսպիսով՝ խնդիրների հաղթահարման և կայուն զարգացման ուղղությունների առնչությամբ վերոնշյալ առաջարկությունները վկայում են՝ որ պետական իշխանության և տարածաշրջանային կառավարման մարմիններն ունեն միջոցների լայն սպեկտր, որոնց օգտագործումը գործնականում կարող է նշանակալից չափով բարձրացնել կայուն զարգացման սոցիալ-տնտեսական համակարգերի կայունությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

***Կայուն զարգացման հիմնախնդերները ՀՀ-ում*** թեզի հիմնական եզրակացություններն են՝

- Հայաստանի Հանրապետության կառավարման կենտրոնական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կարևորագույն, լուծում պահանջող հիմնախնդիրներից է կայուն զարգացման արդյունավետ ուղղությունների ընտրությունը և այդ ուղղությունների զարգացման անհամաչափությունների նվազեցումը:
- ՀՀ կայուն զարգացումը համալիր գործընթաց է, որի արդյունքում լուծվում են Հանրապետության մակարդակով բնակչության հիմնախնդիրները: Երկրի բնակչության կենսապայմանները կարելի է բարելավել սոցիալ-տնտեսական և բնապահպանական զարգացման հաշվեկշռվածությանը հասնելու ճանապարհով: Դա իրականացվում է տարածաշրջանի ողջ ռեսուրսային ներուժի ռացիոնալ օգտագործման հիման վրա, ներառյալ տարածաշրջանի աշխարհագրական, ինչպես նաև տնտեսության, ենթակառուցվածքների և պոտենցիալ հնարավորությունների առանձնահատկությունները:
- ՀՀ կայուն զարգացման ապահովման նպատակով գերակա խնդիրների շարքում կարևորվում են՝

  1) գյուղատնտեսության ոլորտում աջակցություն տնտեսավարողների գործունեության և ներդրումային միջավայրի համար բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղացիական տնտեսությունների խոշորացմանը, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղ մթերքի վերամշակմանը, գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների զարգացմանը,

  2) արդյունաբերության ոլորտում. արտադրության խթանում, նոր տնտեսական քաղաքականության ստեղծում և իրականացում՝ հիմնված իշխանության և բիզնեսի փոխշահավետ համագործակցության վրա, ուղղված մրցունակության

աճին, արդյունաբերության ոլորտի կառուցվածքի կատարելագործում, տնտեսության դիվերսիֆիկացման, ամենից առաջ՝ բարձր տեխնոլոգիական արտադրությունների զարգացման ճանապարհով, անցում գիտելիքահենք տնտեսության մոդելին՝ տնտեսության մեջ զարգացնելով գիտատար ճյուղերը,

3) սոցիալական զարգացման (երկրի, մարզերի և համայնքների մակարդակներում) երկարաժամկետ ծրագրերի մշակում և ընդունում, որոնցում սահմանված կլինեն մարդկային ներուժի զարգացման նպատակները, անհրաժեշտ ռեսուրսները:

- Կայուն տնտեսական աճի հիման վրա մրցունակության բարձրացման, դինամիկ և բնակչության բարեկեցության բարձրացման և աղքատության նվազեցման խնդիրների լուծման մոտեցումներից է կայուն զարգացման ձևավորումը:

## *ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ*

### *ՀՀ օրենքներ և այլ իրավական ակտեր*


1. «Ջրօգտագործողների ընկերությունների եվ ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենք

2. «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենք

3. ՀՀ Կայուն զարգացման ծրագիր. Հավելված ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207 - Ն որոշում

4. ՀՀ կառավարության 4 նոյեմբերի 2010 թվականի « Հայաստանի Հանրապետության գյուղի եվ գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը եվ Հայաստանի Հանրապետության գյուղի եվ գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին » N 1476-Ն որոշում

5. ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր. Հավելված ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշում

6. United Nations. Environnient Programme. Report Of The Governing Council on the work of its eighth session. 16-29 April 1980. New York.

7. Agenda 21: Programme of Action for Sustainable Development and Rio Declaration. New York, 1993 г.

8. Social-economic Development Strategy of Georgia “GEORGIA 2020”. Government of Georgia.

*Գրականություն*

9. Էկոլոգիական անվտանգության հիմնախնդիրները ՀՀ-ում, հետազոտական խմբի ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ս. Գևորգյան,** Երևան 2014, Տնտեսագետ հրատարակչություն, 388 էջ:

10. **Դանիելյան Կ..** Դեպի կայուն զարգացում քաղաքակրթության կողմնորոշման գործընթացի ինստիտուցիոնալ հիմքերը և Հայաստանի խնդիրները: «Կայուն զարգացման սահմանադրական երաշխիքները», Երևան, 2005թ.

11. **Հակոբջանյան Ռ.Վ.** Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները (ՀՀ Սյունիքի մարզի գյուղական համայնքների օրինակով): Թեկնածուական ատենախոսություն, 2012. 167 էջ:

12. «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցացիա»/UNEP ազգային կոմիտե, կայուն զարգացման գործընթացը տեղական մակարդակում՝ միջազգային փորձը, հիմնախնդիրները և հեռանկարները, Երևան, 2006թ.

13. «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցացիա»/UNEP ազգային կոմիտե, Կայուն զարգացման համաշխարհային գործընթացը և Հայաստանը՝ կուտակված փորձը, մարտահրավերները ու ձեռքբերումները, Երևան, 2006թ.:

14. ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Գիտական Հոդվածների Ժողովածու, ISSN 1829-2941, Երևան, 2015թ

15. ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները, Գիտական Հոդվածների Ժողովածու, , ISSN 1829-2941, Երևան, 2016թ

**16. Боголюбов С.А.,** Бринчук М.М., Злотникова Т.В., Зозуля В.В., Камынина Н.Р., Марьин Е.В., Михольская В.В., Успенский И.А. Устойчивое

Развитие: Градостроительство, Экология, Право. Хрестоматия. Под общ. ред. В.В. Зозули. Москва, 2016. – 208 С.

17. Выбор стратегических приоритетов регионального развития: новые теоретико-методологические подходы Текст. / Под общ. редакцией **В.В. Окрепилова** — СПб.: Наука, 2008. — 240 с.

18. **Данилов-Данильян В. И., Лосев К. С.** Проблемы устойчи вого развития человечества //М.: Центр Теоретического Ана лиза Экологических Проблем. – 1998.

19. **Медоуз Д. Х., Медоуз Д. Л., Рэндерс Й., В.Беренс В.III.** Пределы роста. Доклад по проекту римского клуба "Сложное поведение человечства". Издание второе. Москва : Издательство Московского университета, 1991.

20. **Дрейер О.К., Лось В.А.** Экология и устойчивое развитие. – М.: Изд-во УРАО, 1997. – 224 с.

21. «Наше общее будущее»: Доклад Международной комиссии по окружающей среде и развитию (МКОСР)": Пер. с англ./Под ред. и с послесл. **С. А. Евтеева и Р. А. Перелета** /—М.:Прогресс, 1989

22. **Миркин Б.М., Наумова Л.Г.** Сценарии перехода к устойчивому развитию // Экология и жизнь. – 2002. – № 5. – С. 36–38.

23. **Моисеев Н. Н.** Коэволюция природы и общества. Пути ноосферогенеза //Экология и жизнь. – 1997. – №. 2-3. – С. 4-7.

24. **Урсул А.Д.** Глобальные процессы, безопасность и устойчивое развитие // Век глобализации. – 2008. – № 1. – С. 17–22.

25. **Ускова Т.В. , Копасова С.С.** Устойчивое развитие региона: от концептуальных основ - к практическим результатам. Экономика региона: проблемы и перспективы развития // 2008.

26. **Шакиров А.Д.** О концепции устойчивого развития и ее принципах. Ученые записки Казанского Университета. 2011. С. 217-225.

27. **Хикс Д. Р.** Теория экономической истории // еще одно подтверждение того, что сотрудничество историков и экономистов в изучении развития экономики может быть весьма плодотворным. – 2006.

28. **Цверианашвили И. А.** Стокгольмская конференция 1972 г. и её роль в становлении международного экологического сотрудничества // Вестник Нижегородского университета им. НИ Лобачевского. – 2016. – №. 1

29. **Черданцев В.А., Робинсон Б.В.** Современные концепции устойчивого развития // Вестник НГУЭУ. 2009 г., №2.

30. **Ayre G., Callway R.** Governance for sustainable development: a foundation for the future. London: Sterling, Va.: Earthscan, 2005. 216 p.

31. **Meadows D.H.** The Limits to growth; a report for the Club of Rome's project on the predicament of mankind. New York: Universe Books, 1972. 205 p.

32. The Human Development Report 1994. Published for the UNDP. New York, 1994. P. III.

***Համացանցային կայքեր***

33. https://eeas.europa.eu
34. http://www.un.am/hy/news/260
35. http://www.panarmenian.net/arm/details/200866/
36. http://minagro.am
37. http://www.armstat.am/file/article/poverty_2016a_2.pdf
38. http://ampop.am/migration-in-armenia/#imageclose-2498

39. http://www.gov.am/files/docs/1322.pdf

40. http://www.unfpa.am/fertility

41. http://edu.am/index.php/am/documents/index/101

42. https://www.adb.org/sites/default/files/linked-documents/cps-arm-2014-2018-ena-hy.pdf

43. http://www.gov.am/u_files/file/documents/3.pdfԱ.Մակարյան,Ա.Բաբայան , ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում, Երևան, 2010թ.:

44. http://www.armstat.am/am/?nid=82&id=1732 ՀՀԱՎԾ, ՀՀ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2015թ.:

45. http://www.armstat.am/am/?nid=82&id=1747 ՀՀԱՎԾ, Պարենային ապահովություն և աղքատություն, 2015թ. հունվար-դեկտեմբեր:

46. http://www.armstat.am/am/?nid=82&id=1712 ՀՀԱՎԾ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2015:

47. http://www.armstat.am/am/?nid=82&id=1742 ՀՀԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին:

48. http://armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdfՀՀԱՎԾ, Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2014թթ. մաս 1:

49. http://armstat.am/am/?nid=21 ՀՀԱՎԾ Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամար:

50. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2014/12/14_1459.pdf ՀՀ Արագածոտնի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

51. https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2015/01/15_0039_1.pdf ՀՀ Արարատի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

52. http://armavir.mtad.am/development-plan/ ՀՀ Արմավիրի մարզի 2015-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

53. http://shirak.mtad.am/development-plan/ ՀՀ Շիրակի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

54. http://syunik.mtad.am/development-plan/ ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

55. http://www.armstat.am/am/?nid=82&id=500

http://www.armstat.am/am/?nid=82&id=1298

http://www.armstat.am/am/?nid=82&id=1824

ՀՀԱՎԾ,Շրջակամիջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2000, 2010, 2015թթ.